



Source gallica.bnf.fr / Bibliothèque nationale de France

Surmeyan, Artavazd (1889-19..). : . . 1914.

1/ Les contenus accessibles sur le site Gallica sont pour la plupart des reproductions numériques d'oeuvres tombées dans le domaine public provenant des collections de la BnF. Leur réutilisation s'inscrit dans le cadre de la loi n°78-753 du 17 juillet 1978 :

*La réutilisation non commerciale de ces contenus est libre et gratuite dans le respect de la législation en vigueur et notamment du maintien de la mention de source.

*La réutilisation commerciale de ces contenus est payante et fait l'objet d'une licence. Est entendue par réutilisation commerciale la revente de contenus sous forme de produits élaborés ou de fourniture de service.

Cliquer [ici](#) pour accéder aux tarifs et à la licence

2/ Les contenus de Gallica sont la propriété de la BnF au sens de l'article L.2112-1 du code général de la propriété des personnes publiques.

3/ Quelques contenus sont soumis à un régime de réutilisation particulier. Il s'agit :

*des reproductions de documents protégés par un droit d'auteur appartenant à un tiers. Ces documents ne peuvent être réutilisés, sauf dans le cadre de la copie privée, sans l'autorisation préalable du titulaire des droits.

*des reproductions de documents conservés dans les bibliothèques ou autres institutions partenaires. Ceux-ci sont signalés par la mention Source gallica.BnF.fr / Bibliothèque municipale de ... (ou autre partenaire). L'utilisateur est invité à s'informer auprès de ces bibliothèques de leurs conditions de réutilisation.

4/ Gallica constitue une base de données, dont la BnF est le producteur, protégée au sens des articles L341-1 et suivants du code de la propriété intellectuelle.

5/ Les présentes conditions d'utilisation des contenus de Gallica sont régies par la loi française. En cas de réutilisation prévue dans un autre pays, il appartient à chaque utilisateur de vérifier la conformité de son projet avec le droit de ce pays.

6/ L'utilisateur s'engage à respecter les présentes conditions d'utilisation ainsi que la législation en vigueur, notamment en matière de propriété intellectuelle. En cas de non respect de ces dispositions, il est notamment passible d'une amende prévue par la loi du 17 juillet 1978.

7/ Pour obtenir un document de Gallica en haute définition, contacter reutilisation@bnf.fr.

ՏԻԳՐԱՆ ՍԻՐՄԷՆԱՆ

ԷՐԹՕՂՐՈՒԼ

ՀԱՄՏՈՒԼԼԱՀ ՍՈՒՊՀԻ ՊԷՅԻ ՅՍՈՍԱԶՍԲԱՆՈՎ

Ա. ՇԱՐՔ

ԷՐԹՕՂՐՈՒԼ
ԿԱԶԷԹԱ՝... ԿԱԶԷԹԱ՝ ...
ՏԵՐՎԻՇԸ
ԷՏԷՊ ԱԼԻ
ՀԷ՛Յ ԿԱԶԻԼԷ՛Ր...
ՄԻՍԱՅԻՐԽԱՆԷ
ԿԵՐՄԻՅԱՆԼԱՐ

Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Մանուկ Ե. Գոչունեան

1915

511

Բարաստի, ուսուցիչ և ժողովրդի բարեկամ
Աղյժ. չարս-թուր Կ. Վրժեթումի

ի սրտեւ անդէպ շանակաւորի

ՏԻԳՐԱՆ ՍԻՒՐՄԷՆԱՆ

Ա. Թաւաթաթ, Էրեւան, 20 թիւ. 918

ժողովրդի
Արարչաց ախար

ԷՐԹՕՂՐՈՒԼ

41456338

ՀԱՄՏՈՒԼԼԱՀ ՍՈՒՊԷԻ ՊԷՅԻ ՅԱՌԱՋԱԲԱՆՈՎ



Ա. ՇԱՐՔ

ԷՐԹՕՂՐՈՒԼ
ԿԱԶԷԹԱ՛. ԿԱԶԷԹԱ՛ ...
ՏԷՐՎԻՇԸ
ԷՏԷՊ ԱԼԻ
ՇԷ՛Յ ԿԱԶԻԼԷ՛Ր...
ՄԻՍԱՅԻՐԽԱՆԷ
ԿԷՐՄԻՅԱՆԼԱՐ



Կ. ՊՈՒԽՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Մանուկ Յ. Գոչուհեան

1914

D4 1702
2009-151478



*«C'est dans le cœur que Dieu
a placée le génie des femmes,
parceque les œuvres de ce génie
sont toutes des œuvres d'amour...»*

LAMARTINE



Իննդեան քանիև հինգամեայիս
առիթով ցանկալի մօրս յիշա-
տակին կը նուիրեմ մտքի ան-
դրանիկ երկս.

(† 1899 Փետրուար 3)



Ամենասիրելիս,

Հակառակ բունն փափափիս, ուշացուցի պատասխանս՝ ձեր այն նամակին, զոր անցեալ օր բարեհաճած էիք ինձ ուղարկել: Պատերազմը եւ գինուորակոչութեան հարցերը ստիպողական եւ ակամայ յապաղում մը առթեցին ինձ, որուն համար իսկապէս մեծ ցաւ կ'զգամ: Գոնիայի վերադարձիս կարելի պէտք մըն էր ձեզ նամակ գրելս. միայն ասոր մեջ գոյութիւն ունէր այն ապահովութիւնը, զոր պատճառով էի գիտնալ թէ արդեօք ձեզ հետ ունեցած յետապահութեանս սպաւորութիւնը նպաստաւոր էր ինձ համար թէ ոչ: Ահա այս վարանումը ձեր դրկած թանկագին նամակով անհետացաւ. արդարեւ զիս խորապէս ուրախացուցիք: Ես, տղայութենէս ի վեր, Հայերը նանչնալու, զանոնք մօտէն ուսումնասիրելու համար, շատ մը առիթներ վայելելու բախտն ունեցած եմ: Գայրոցական շրջանիս մեջ անցուցած ուսանողական երկար կեանքս, եղբօր պէս արտադրաւ սիրելի հայ ընկերներ պարգեւած է ինձ: Մեր երկրին մեջ Հայոց ենթակայ եղած դժբախտութիւններէն խորապէս զգածուող, անոնց կրած ցաւերը բախճօրէն զգացող ձեր թուրք հայրենակիցներէն մին եղած եմ: Կառաւարին մեջ ձեր ինձ կարդացած եւ մեկնած բանաստեղծութիւնը նոյն այդ դառն ցաւերուն եւ մեր մեղքերուն շխուր յիշատակն էր, որ արթիս մեջ կրկին արթնցուց խորունկ պիտոս մը, եւ ես կսկիծով ունկնդրեցի զայն:

Ձեզի փոքրիկ յիշատակ մը պատմեմ.

Թուսօ-նաբօնական պատերազմի ժամանակ, օր մը, եղբայրներուս հետ միասին սեղան նստած էինք, նաւելու: Առտուն, լրագիրներուն մեջ կարդացած լուրիս մայրս ալ ուզեցի հաղորդակից ընել, ու ըսի.

— Մայրի՛կ, այսօր թերթերէն տեղեկացայ որ երեք

հարիւր ռուսական զօրքեր, Պայթալ լինեն անցնելու միջոցին, սառույցները յանկարծ կոտրուած եւ բոլորը մեկ խեղդուած են:

Մայրս, անզգալաբար, ձեռքէն վար ձգեց դգալը եւ ցաւագին ձայնով մը գոչեց.

— Վա՛խ, խեղճե՛ր, ի՛նչ մեղք, ի՛նչ մեղք...

Ես այս տեսարանէն շփոթած, խնդիրը սլարզել ուզեցի:

— Մայրի՛կ, բախ, չի հասկցար կարծեմ, ռո՛ւս, մասգո՛ւ, բու երկիրդ գրաւողներն են, ինչո՞ւ այդպէս աւաղեցիր:

Ան ըսաւ ինձի.

— Զաւա՛կս, դուն չես գիտեր թէ տղաք ի՛նչպէս կը մեծնան, դուն մայրերո՛ւն, ինձի պէսներուն հարցո՛ւր, թէ ի՛նչ ըսել է զաւակ ունենալը:

Մայրս Աստուայի ջարդը լսած տեսնի մեզմէ մանրամասնութիւններ կը հարցունէր եւ դառնագին կու լար: Ի՛նք պէտք է գիտնալ թէ Իսլամներու եւ Թուրքերու միջեւ ձեզ սիրոյ հեմարիտ բարեկամներ ունիք: Այս առթիւ դեռ շատ բան ունիմ հաղորդելու ձեզ, սակայն կը զգուշանամ առաջին համակա անոնց յատկացնելէ: Ես տարբեր պատճառ մըն ալ ունիմ ինկզիմէն ձեզ հետ կապուած զգալու. մեկ պատճօնակցութեամբ ալ միացած ենք իրարու: Արուեստի պատճօնակցութիւնը՝ մարդուս ամենէն վտեմ եւ մանաւանդ երկնային բաղձանիները կը յատկանշէ. արուեստի պատճօնակցութիւնը՝ հաղափականութեամբ կամ կրօնով զատած չէ մարդիկ, ալ միացուցած է. արուեստի պատճօնակցութիւնը, վերջապէս, սերերուն ամենէն զերագանցը, այսինքն սիրոյ մարդկութիւնը ստիճանող բանն է. ուստի, ես ձեզ հետ, մարդկութեան ամենէն բարձր խաւէն, այսինքն ուսուցչական պատճօնակցութեան կողմն ալ ձեզ բարեկամ եւ ընկեր եմ...

ԷՐԹՕՂՐՈՒԼ

Ամառնային արձակուրդի շրջանն է . երկարատև և օրհամաշ աշխատանքը կարևոր բան մը կորզած է ուսուցչի էութենէն , անոր ներքին կազմաւորութիւնը խաթարած , թուրքը չափ մը աւելի մաշեցուցած , դայն բերած հասցուցած կարծես օրհասականութեան :

Կ'ուզեմ օգտուիլ պատեհութենէն , և առտուան կառախուձքով , հանդարտօրէն , միայն քանի մը ծանօթներէ շրջապատուած , և քիչ մըն ալ աննշմար , կը մանեմ կառախուձք , պարզ ճանապարհորդի մը յատուկ պատրաստութիւններով , միայն վրանոց մը ընկերացուցած ինձի : Օր մը առաջ տեղացող յորդառատ անձրեւները քնքուշ դովութիւն մը թողած են միջնոլորտին մէջ , և արեւն այրած հասկերը և այգեստաններու վրայ տարածուող սրթատուենկերը կը մաքրուին , կ'աղուորնան տեսողութեանդ առջև և ջուրէն նոր դուրս ելած մանկիկներու պէս՝ կը ցնցեն իրենց դուինն ու իրանը :

Գեղեցիկ է առաւօտը . կառաշարը , լնչպէս ամէն առիթով , այսօր ալ իր մօտ հաւաքած է հետաքրքիրներու բազմութիւն մը . քանի մը վայրկեան ալ , և ահա վայրաշարժը կ'ընթանայ առաջ , աղուոր ծառաստաններու գովութեան վայելքը բնթշխմել տալով շողի և ամուխի մարդուն , քրտնաթոր մեքենավարին , մանաւանդ ամբան սա հեղցուցիչ օրերուն : Կը մանեմ յարկաբաժին , ինձի ընկերացուցած երկու մտերիմ ճանապարհորդակիցներ : Անկիւնը , լայնածիր պատուհանին առջև տարիքոտ ախիկն մը , ակնոցի մը օդնութեամբ , և քոպական թերթ կը կարգայ : Հիւանդ է

խեղճ օտարուհին , և կարծես բողոք մը ունի յայտնելու իր ապրած միջավայրին բարեխառնութեանը մասին . իր սգաւորի հանգերձանքը ա՛լ աւելի կարեկից կը դարձնէ մեզ , ուղեկիցներս , դէպի զինքը , ամբողջովին սուշով պարուրուած : Խեղճը իր սիրելիներէն մէկուն վիշտով կը հիւժի , անտարակոյտ , կը մտածեմ , թէ՛ իր դասկին մահուան առթած վիշտովը համակուած է , կամ դառնացած՝ իր կեանքի ընկերոջ վաղահաս կորուստէն : Քանի մը վայրկեան վերջ , կառաչարի նրբանցքէն՝ ներս կը մտնէ խարտիչաներ երխաասարդ մը , և գուրդուրտ աղնարկ մը ձգելով աիկնոջ վրայ , կը նստի ճիշտ անոր մօտը , պատրաստ՝ լրացնելու ուէ հրաման մը : Աչքերէն կը կռահեմ թէ օտարուհին իր մայրն է , այնքան նման իրարու , այնքան հարազատ : Երխաասարդը վայելչօրէն կը բարևէ մեզ , և մեր ինքնութիւնը հասկնալու մարմաջին անձնատուր , կ'սկսի՝ խօսիլ ազճտա ֆրանսերէնով մը : Իսկոյն կը կռահենք որ Հրեայ-Քերման մըն է , որոնցմէ շատեր կան երկաթուղիի ընկերութեան բովանդակ ճիւղերուն մէջ : Ծանօթանալէ վերջ մեր ինքնութեան , օտարականը մեզ կը ներկայացնէ իր ծերունի մայրը , որուն՝ մինչև Պրուսայի և ապա Եալովայի ջերմուկները ընկերանայր կ'աւելցունէ , կաղզայր մը գանկույտսով : Տիկինը չափազանց ուրախ մեզ հետ ծանօթանալէն , մէկ կողմ կը թողու իր թերթը և ակնոցին առթած յոգնութենէն պարտասուն , կ'սկսի օրուան հրատույ քաղաքական հարցերու շուրջ իր որոշ կարծիքները յայտնել առնական խրոխտ և յանձնապաստան շեշտերով : Կը խօսի Պուքրէշի հաշտութեան վերջին դեպքանաժողովի մասին և այս պատեհ առիթով գովեստար կ'ընէ իր հայրենիքին և հայրենակիցներուն , որով , կարելի կ'ըլլայ շու-

ասով կռահել թէ երկու օտարականները առմէններ են , հրէական ծագումով , անտարակոյս : Տիկինը մերկացած պահ մը իր հիւանդկախի դիմագիծներէն , կը խանդավառուի , կը հրահրի և քաղաքական բոլոր կարևոր իրադարձութեանց մասին կուտայ բաւարար մեկնութիւններ , աւելցունելով միանգամայն թէ Պուլկարներու մասին սերայօ-հելլէն վերագրումները բոլորն ալ յերիւրանքներ են , ծայրայեղ և ազգովին արատայայտուած ցուցադրումներ , ժամանակակից քաղաքակրթութեան արատ բերելու աստիճան . . .

— Մենք , Ռուսներս , կը յարէ օտարուհին , խրոխտարար , մե՛նք , այո՛ , շա՛տ լաւ կը ճանչնանք Պուլկարներն ու Յոյները , և շա՛տ լաւ կրնանք բաղդատել առաջիններուն մարդկայնութիւնը , վերջիններուն վայրագութեանցը և բարբարոսութիւններուն հետ . մենք , մե՛ր կաշիին իսկ վրայ կը կրենք Յոյներու ասելութեան թունաւոր նշդրակին առթած բովանդակ սպիները , որոնք լնդհատարար կը վարդապունին , կ'արխունին ու կը թաւախտախն :

Կը հիանամ հիւանդ օտարուհիին արխութեանը և պերճախօս բարբառին վրայ , և ճշմարիտ հայրենասէրի ախպար մը կը դանեմ իր մէջ , ա՛լ աւելի դեղեցկացած իր նոր հրապոյրովր : Կը բաղդատեմ օտարուհի աիկինը Անաստուի մեր հայադղի աիկիններուն հետ , որոնց , աւա՛ղ , դարաւոր սարկութեան ասկ մինչև այսօր անբարբառ հեծեճանքը անգամ մըն ալ ողբալ կուտայ իրենց վրայ , այնքան կարեկցական և թշուառ դրութեան մէջ . . .

Կառաչարը կը սուրայ արևով օծուած ասոք հասկերու մէջէն , օրհասական բոլորն ալ , վաղուան հատու

մանգաղին տակ իրենց նիհար իրանները երկարելու պատրաստ , վաղուան հաղին համար աղաղուելու յօժար : Աղուոր զեփիւսի մը պզուանքներուն տակ կը ծփան , բոլորը զիրար կը համբուրեն և զքայրօրէն , թերևս վերջին բաժանումի առիթով : Թրակիայէն փոխադրուած սևաւոր գաղթականներ , բոլորն ալ աշխատող , ժուժկալ և չարքաչ , կը հսկեն արտերու մօտ , անզարդ ու անշուք հիւղերու տակ , ափ մը դալար ծառերու մօտ : Կրկին կ'ուղեմ պատերազմի թողած արհաւիրքին անդրադառնալ , և մտածել իր տհաւոր աւերներուն վրայ : Հազարաւորներ են , Պալքանեան լեռնաձորերէն հաս փոխադրուած գաղթականները , որոնք բնաղդով հաս եկած հաստատուած են , սպիտակաշէն Գարա-Շէ-հիբի մօտ , օսմանցիութեան մարտղ փառքի օրրանին մէջ , ուր կըրթօղբուլն ու Օսմանը իրենց վրանները հաստատած էին , ափ մը զեղակիցներու հետ : Բնաղդօրէն եկած հաս տեղաւորուած են կարծես , սա հովանաւոր գիւղակին դէմ , օսմանցիութեան փառքի կոթողին շուրջ , իրենց բողոքի տղեկաւոր ձայնն ու աւաչք բարձրացնելու սա շոճիներուն տակ հանդչող արդարասէր Օսմանի նախահայրերուն : Սիրուն է գիւղակը , խեղապէս , բարձրադիր տմբոյներու աւերակներուն քղանցքին տակ , աղուոր և հովանի հովիտի մը մէջ , ուր այցելած եմ շատ անգամներ , վարժարանի ուսանողներուն հետ , մօտէն ուսումնասիրելու գիւղապետ ծերունի աղօթաւորը , որ այնքան շատ բան գիտէ ու կրնայ պատմել այդ պատմական գիւղին անցեալ փառաւոր կեանքի մասին , գիւղի'ն , որուն անձնուրաց պահապանն է ինք , ալեհեր ծերունին , և որ վաղուց պատրաստել տուած է իր շիրմաւայրը , հին նահապեաներու կուշտին և հին նոճիներու :

տակ: Եւ սակայն չի մեռնիր աղօթաւորը, մենակեաց հովիւը, ու խրաքանչիւր այցիս, կարծես աւելի եռանդուն կը գտնեմ զինքը, իր նախնիքներուն հովանիովը զօրացած:

Գիւղը քանի՛ կը հեռանայ սկսողութենէս, այնքան սիրելի կը դառնայ ինձ, այնքան նուիրական, իսկ աւելի արամալի՛ իր շուրջը սարածուող հողագործ գաղթականները, մեծ մասով կիներ, հաւանօրէն շատեր այրիացած ու սգաւոր: Գիւղակը կը թաղուի բարձրագիւր լեռներու ետին, դադրելով այլևս իմ մտածման նիւթն ըլլալէ, սրովհետև քանի մը ժամ վերջ ա՛լ աւելի մեծ և լայն պատեհութիւններ պիտի ունենամ դրադելու օսմանցիներու փառաւոր և սրիշ օրրանի մը վրայ, էրթօզրուլի փառքերուն վրայ, անոր գեղեցկութիւններուն մէջ սպրիլ փափաքելով գէթ կարճ ժամանակամիջոց մը: Սօսակիցներու հետ դուրս կ'ելլենք սրահէն պահ մը նրբանդրին մէջ, ինձ կը մօտենայ երիտասարդ իժիժհատական մը, ճշմարիտ կրակ ու բոց մը, սարաշէկ աչքերով: Վաղուց ծանօթ ենք իրարու հետ. ինք եզրայրն է իժիժհատի կարևոր օսկանին Վանայ և շրջականերուն թրդթակցին, վերջերս սակաւին հոն հասած, երիտասարդ կուսակալին հետ: Երկու հարազատները անքակտելի կապերով գօզուած են սիրապետող և զօրաւոր կուսակցութեան հետ և ցանկացող, միշտ բարձր բռնելու: Իժիժհատի կարմիր դրօշը, և օր մը անով ծածկելու աննջացող իրենց նահատակի դօղաղը: Կը սկսի խօսիլ, ու կը վախճամ որ քաղաքական ու միջազգային հարցի մը շուրջ պիտի ջանայ զիս համոզել. մեծ կ'ըլլայ զարմանքս երբ կը յարէ:

— Ի՞նչ պատճառներով արդեօք Արշարունի Սրբա-

դան տուաւ իր հրաժարականը • կը կարծէ՞ք որ , դուք ալ ինձ հետ , պատճառք դուա դիւանագիտական եղած ըլլայ :

— Ձեր կարծիքը անկարելի է որ բաժնեմ , կը յարեմ խօսակցիս • Արբաղանը լսկ սուղջական պատճառներով տուաւ իր հրաժարականը • ձեզ ծանօթ է անշուշտ որ ջղագրգիւ և հիւանդ եկեղեցական մըն էր մեր հոգևոր պետը :

— Այդպէս համոզուած էք , թերևս , բայց սուղջական պատճառներու մեջբերումները այնքան ալ դժուար փաստեր չեն , զինքը հետու պահելու պատրիարքական աթոռէն , մանաւանդ ձեզի համար պատմական աւաղ կարեորութիւն ունեցող աս միջոցին : Պատճառք այլ է , կը յարէ երդուեալ իթ թիհասականը • Ի՞նչ կը մտածէ արդէօք ձեր այն կուսակցութիւնը որ անկախութեան ցանկացող է և իր դոյութիւնը ասով արդարացնել կը տենցայ :

— Ի՞նչ , անկախութեան ցանկացող կուսակցութիւն , մե՞զ , Հայո՛ցս մէջ . . .

— Այ՛ն , ի՞նչ կայ դարմանալու • Ի՞նչ բանէ դրդուած Ազգային ժողովր իր ձայնը կեդրանացնել կը ջանայ Տիգրանակերտի Առաջնորդին վրայ , որ լաւ օրէնագէտ մը և միաժամանակ լաւ թրքախօս մըն է , մտակնուսումնասիրած Քիւրտ-Հայկական կենցաղը և յարաբերութիւնները . . .

Հնարագէտ խօսակիցս ի դուք կը ջանայ զիս փորձել , քանի որ բունօրէն անդիտակ ձեւնալ կը փափաքիմ օրուան ազգային հրատապ հարցերու մասին : Կարելի չէ սարհամոզել զիրենք , կը մտածեմ ինքնամփոփ , քանի որ հաստատօրէն համոզուած են այդ թիւր գաղափարի շուրջ :

Առաջին փաստաւորին անցած ենք արդէն, և կծու ծախսին ոլորաներուն տակ շնչա՛նդձ չըլլալու համար, տկամայ կը բաժնուինք իրարմէ, իւրաքանչիւրն իստաանձնանալով մեր յարկաբաժինները և թափուր ձգելով սրահին նրբանցքը: Օր մը առաջ տեղացող յորդ անձրեւները, ահագին հեղեղասաներ ու սկիւններ բացած են գծին երկու կողմերը, անմիջական, վտանգ սպառնալով անոր: Կտաւէ վրաններու տակ անընդհատ աշխատող ձեռքեր գուրգուրատ մօր մը նման կը հսկեն գծին վտանգաւոր կէտերուն վրայ, կը նորոգեն շարունակ խախտած վայրերը, և սալին վրայ հանգչող մուրճի մեծղի հարուածներն կը սախպեն քեղ մատվի փոխադրուիլ գէպի ճարտարային վայրեր, քաղաքակիրթ հորիզոններ, աշխատող, արդիւնաբերող, հինը նորոգելու ձգտող կեդրոններ, որոնցմէ այնքան դուրի է սա Անատոլուն, անդրժրհեղեղեան իր կենցաղով: Հայտատանի մեր եղբայրները թող չցաւին բնաւ, երբ իրենց նուիրական հողը երկաթուղիի ցանցով մը պատած չէ, թող չյուսահատին բնաւ, երբ վայրաշարժէն լուսող ահաւոր սուլոցը և մթնոլորտին մէջ գուլայ գուլայ բարձրացող ծախի ծուէրները չեն ներկայանար բնաւ իրենց լսողութեան ու տեսողութեան առջև, վտանգի Հայաստան, իր այդ կուսութեան վիճակին մէջ, աւելի՛ սիրուն է, աւելի՛ քաղաքակիրթ, աւելի՛ ընդունակ՝ արեւմտանալու և արդիանալու, քան սա Անատոլուն, ուրկէ կառաչարբ կ'անցնի, բայց քաղաքակիրթութիւն չի ներշնչեր բնաւ անոր վրայ ապրողներուն: Ի՞նչ ըսել, երբ ցեղերը անաղնիս լեն, երբ արիւնը պատուաատուած չէ մաքուր ու նուրբ շիճուկով: Ահաւոր է գծին երկու կողմը շարան շարան տարածուող գիւղերու համայնապատ-

կերք . նախապատմական դարերու յետին մնացորդներ , կեանքի ու մահուան , ապրելու և մեռնելու միջև սաստամտղ մարդիկ , որոնք ստեղծմով ներս կը նային արքունիաց արշաւող կառաշարէն . հո՛ն , արածող նախիրն է որ լեղապատառ կ'արշաւէ , հոս , սոյ մը լաճեր թերթ կը մուրան , վայրենի աւաչով .

— Կաղէթա՛ , Կաղէթա՛ . . .

— Մի վերանկրկնուի , կը մտածեմ , ի՛նչ պէտք ձեզի թերթ կամ լնթերցում , ի՛նչ կարիք կայ հաղորդակցելու աշխարհի լնդհանուր կեանքին , քաղաքական իրադարձութիւններուն , երբ ժամանակակից մարդկութիւնը ձգտումն ունի արդէն ձեզ նման կեանք մը ապրելու , երկարատե , անշարժ , անասեղծագործ կեանք մը , և սակայն քիչ մը գիտակից : Դուք երջանիկ էք , երբ կեանքի պէտքերու հսկայ տարափը չի գար շարչրկել ձեր վայրենային ուղեղը , երբ օրերը նորութիւններ չեն բերեր իր՛նց հետ , երբ երէկը այսօրին հուսասար է , և այսօրը վաղուայ նման : Քանի մօտենաք քաղաքակրթութեան , այնքան շատ պիտի լլղան ձեր տարտերն ու ցաւերը . հեռացէ՛ք այդ ահաւոր քաղաքակրթութենէն , և արդէ՛ն հեռացած իսկ ալ էք , որովհետեւ ներկայ ապանդն ու նախնիրը , սոյն ու ջարդը , սուրն ու թնդանօթի սրտար գեղեցիկ լնծաներն են , արիւնտա քաղաքակրթութեան ու ինքնատէր և սոնքացող եւրոպային , սկսած Ալպիօնի դաւակներէն , մինչև գեղեցիկ Կասպիտուր : Հեռացէ՛ք , և որքան շուտ , այնքան լա՛ւ . ճիւղապին ու կեղծպարիշտ քաղաքակրթութենէն . ձեր յարգածածկ ամնիքն ու յարիր աւելի մարդկայնական են և հիւրընկալ , քան հսկայ գղեակներն ու աշատարակները , ուր , ո՛վ գիտէ , ի՛նչ սարսափելի ոճիրներ կը նխախտին քաղաքա-

կրթութեան անունով, ուր, ս'վ գիտէ, քանի կեղծ իրն-
ջայքներ կը արուին, շպարուած ու աղտոտ կոչնական-
ներու մօտ: Իուք լա՛ւն էք երբ ձեր ճակատն ու դէմքը
արևով օծուն է, փոխան անդոյրին և շպարին: Իուք
լա՛ւն էք, ձեր անբարբառ երգիքին տակ, երբ գիշեր-
ուան առաղերուն ու տրտաւէտ լուսնի մահիկին տակ
վաղուան յուռթի և ատոք հասկը կ'երազէք, կամ մա-
քուր բայց ծերացած սիրոյ կիսահեշտ անկողինը...

Ու հազարաւորներ են դաղթականի անխօս հիւղերը,
փոքրիկ գիւղակներու բաժնուած որոնց իւրաքանչիւրին-
աջ կուշտին վրայ գերեզմաննոցն է կանդուն, բլրակի մը
անարէն, ծառաղուրկ և սգաւոր վայրի մը մէջ: Գերեզ-
մանն է խեղճ գիւղացիին, որ, ս'վ գիտէ, իր յաւիտե-
նական գաղթի ճակատագրականութեան տակ, քանի
անգամ տեղափոխեր, քանի՛ տեղ շիրմաքարեր է ցցած,
իւրաքանչիւր հանգրուանի մը տակ իր ձեռքովը սիրելիի-
մը մարմինը թաղած. ոչ նոճիներ կան, մեռելներու սը-
նարէն դէպի Ալլահը բարձրացած, ոչ իսկ դալար մը.
միայն քարեր, հնադարեան տօլմէնները յիշեցնող: Սե-
սական իւրաքանչիւր մեռեալ իր որոշ տեղն ունի հոն,
քարի անտաշ ու անկոփ շերտով մը դատարոշուած...:
Միօրինակ են բոլոր գիւղերը հոս. նոյն ձևով, նոյն յա-
տակադծով, ինքնարեր կերտում բոլորն ալ, ուր աչ-
քառու են բարձրուղէշ մինարէտով սպիտակ մզկիթը և
գիւղին դակից գերեզմաննոցը. մնացեալը ախտաանք է,
աւանդ, յարդածածկ հիւղեր ու հիւղակներ, որոնց առ-
ջին ծերունիները, երեսնին մայրամուտի արևուն դար-
ձուցած, հեռաւոր դաւակնին կ'երազեն, վաթանի հա-
մար մեկնած և թերևս մեռած, և փոքրիկներ, որոնք
որուան հողի աշխատամբէն պարտատուն, հինգ քարե-

քով ու հինգ վէզով իրենց բախար կ'որոնեն, խոտին վրայ շուրջբուրում։

Ու կը համնինք այսպէս, էրթօղրուլի արևով օծում անգիները, բլուրներու հոյատեսիլ սարաւանգին վրայ փռում, որոնց մէջէն աղուր գիւղը իր պերճանքը կը ցուցադրէ։

Կտուաչարը հասած է երկաթեայ փառայեղ կամուրջի մը եզերքը, որուն տակի ահագին անդունդը կը սահմարակեցնէ քեզ ու կը սոսկաս վար նայելէ. վայրաշարժը կանգ կ'առնէ, պահ մը և կարծես չ'ուզեր առաջ ընթանալ, այնքան կը սոսկայ իր առջև բացում անդրնդախոր վիհէն. բայց կը քալէ, ընդհատ ընդհատ սուլելով, կը քալէ մեծ կամուրջին վրայէն, որուն տակ աղուոր գիւղանկար մը կայ պահուած, և որուն գէմ, լերկ ժայռերու միջև սեղմուած է յունարնակ շքեղ գիւղը, Բիւփլիան, որուն քանիցս այցելած էի քնարասէր բարեկամի մը հետ հանդիպակաց ժայռին վրայ, առտուան յորդարևու շառայներուն տակ, գիւղին կրթարանը իր լայն ու սպիտակ իրանը կը ցուցադրէ, անշուք ու հնօրեայ մատուռի մը վերև։ Ի՞նչ աղուոր պատկեր. փոքրիկ ձուկ մը մէջէն փոքր, անթև ու անփնտուր արծուիկի մը գուրս գալուն պիտի նմանցունեմ այդ հոյակապ կրթարանը, արծուիկի մը, որ պահ մը վերջ հսկայ լեռներ ու անդունդներ ճախրելով կ'անցնի, կը սուրայ ահաւոր անջրպետներէ, ու կը ծաղրէ կարծես բոյնին խորը թաքնուած, իր գոյութեան պատճառ՝ կմախացած հաւկիթին կճեփը։ Եկեղեցիէն ծնած դպրոցը ա՛լ աւելի հոյակապ է, մեծ, աղուոր ու տխտան, որ կը ծաղրէ իրմէ վար կանդնող աղօթարանը, սև ու անշուք պատերով, որոնց վրայ բարձրացող հին խաչը միայն կու գայ քեզ

ըսել . — կա՛նգ առ , ո՛վ անցորդ , հոս աղօթքի տունն է . իմ խորանհիս առջև ծուռգի նստող բարի մարդոց ու բարեպաշտ կիներու ու մատղաշ աղջիկներու հաւատքին համար ձգուած լուսմաներէն մարմին առաւ սա՛ իմ կուշտին բարձրացող հսկայ տաճարը լոյսի , որ իմ դարաւոր արևս խափանեց , իր մեծղի հովանիովը . կա՛նգ առ , հո՛ս , ո՛վ բարի անցորդ , իմ արևս իմ ներսիդին է . քո հաւատքէն կայծ մը դի՛ր իմ հոգւոյս մէջ . շատեր անցան այս հնաւոր ու անշուք պատերուն առջևէն ու ծաղրեցին իմ գոյութիւնս իսկ , ի տես այս հսկայ վարժոցին , որը ինձմով ծնած ու մարմնացած , վաղը մէկ մէկ քար պիտի զեանդէ իմ փլփլկած երդիքիս վրայ , ու օր մը իմ հիմերս միայն պիտի բարբառին , թէ աս ինձմէ ծնաւ . . .

Հեղեղասաներու և ուռճացած ծառերու մէջէն շողեկառքը իր ճամբան կ'ընէ , տակաւ մեղմացնելով իր գնացքը . ահագին դառիվարէ մը իջանք դէպի էրթօղրուլ , որուն շքեղ ու ծառազարդ կայարանը քիչ մը քաղաքակրթութիւն դրած է իր շուրջ , իր սիրուն և երկյարկանի շէնքերովը և գալարուսներովը , և որուն պիմաց , կրկին ափսո՛ս , իրր մեղանչում նոյն այդ փոքրիկ քաղաքակրթութեան , աղտոտ դիւղն է որ կը բարձրանայ , շա՛տ աւելի աղտոտ քան մինչև հիմա տեսած գիւղերու . վար կ'իջնենք ընկերներով կառաչարէն , լայնախիտ բաղմութեան մը մէջէն , և հազիւ առաջին քայլս դրած էրթօղրուլի հողին վրայ , բիրտ մէկը ուժգին կը քաշէ ձեռնափայտս ու վրանոցս . անմիջապէս կը ճանչնամ . կառասպան մըն է . մեծղի ու յաղթ կազմուածք մը , որոնց շատ հանդիպած եմ Պոլիս , Հայ դադադակիրներու մէջ . նշանաւոր է այս մարդը էրթօղրուլի

կեդրոնին մէջ, ահա գրական թէ քաղաքական, լաւ
չեմ յիշեր, ծածկանուէրով: Յարգանքի և հիւրասիրու-
թեան ինչ կոչա ու տձև արտայայտութիւն սակայն,
որուն ի զմէր կը տակամ ու կը համակերպիմ, նկատի
ունենալով իր խառնուածքն ու ապրած միջավայրը:
Կառքը կը բարձրանայ աղուոր ու ծառաղարի խճուղիէ
մը, ընկուղենիներու թաւ սաղարթներով շուքաւորուած.
Նախօրուան անձրեւները գեղեցկացուցեր են այս տարա-
ծութիւնը. անհուն բլրակներ շուրջբոլորը, կարճ գա-
գաթներով, սղախի ու սիրուն ձորերով. որթատունկի
տերեւներով վարագուրուած, որոնց ետեւէն, անօթի ման-
կիկներու սէս, խաղողի կանաչ ու դեռ անաս հաւախիկնե-
րը, արևի լոյսը ծծել կ'ուզեն, որ մը առաջ հասուննա-
լու համար: Հանգարտեցէք օրհնուած ու աղուոր պատու-
ներ. այգեպանը վաղը ձե՛զ այ կը կարտաէ իր սուր հա-
տոցովը և ձեզմով այն հեղուկը կը պատրաստուի, որուն
թշուտն ու անդիտակ զո՞ն է սա էրթօղբուլը, իր հա-
յութիւնով. հանգարտեցէք, ձեր կենսասիւթը հրէշօրէն
կը թախանցէ, հիւժած ուղեղներու բջիջներէն, ու վաղը
ձեր թոյնի ապօրոյթութեան ատկ ապշահար ու խեղաչեղ,
մարդիկ նոր սճիրներով կը շէնցրնեն շինական այս ու-
տանը:

Ու մտածուեմ կ'երկճոյի յանկարծ. մեռած հոգեօրո-
կանի մը մահատիպ գիմանկարը կը դցուի աչքերուս առ-
ջեւ. ու կը հեռի իմ գնացքին. Թաթուլն է. օ՛հ, հա-
մակ ջիգ ու ախան այդ կորովի եկեղեցականը, երբեմնի
փառքն ու տատամը այս շրջանին. ինչե՛ր, ինչե՛ր
պատմեր էին ինձ, իր անպարփակ ու անճառելի փառա-
սիրութեանը վրայ, իմ կարծասեւ պաշտօնաւարութեանս
ընթացքին՝ իր սիրեցեալ կրթարանին մէջ: Լեռ, ձոր

կը բարբառէր, քաղաքին բոլոր տուները կ'ամայանային, ծերեր իրենց դաւաղաններուն յենած, դուրս կ'ելլէին դէպի մեծ ու լայն ճամբուն եզերքը, արևով թրջելու և բարունիին օրհնութիւններովը օծելու իրենց դաշկահար դէմքը. նորասի հարսներ ու աղջիկներ անպատում ու բախտութեամբ կը լեցուէին այդ հանդիսաւոր օրը, երբ վարդապետը սպիտակ ու ասպետավայել երիվարի մը քամակին վրայ, հոյաշէն մուտք մը կը գործէր դէպի քաղաք: Տղամարդիկ և երկու սեռէ փոքրիկ, ժպտերես ու կայտուն աղայներ, ահագին երաններով վար կը խոյանան, ձիաւոր ու հետիոտն, ընդառաջ վազելու իրենց սիրեցեալ հովիւին: Բոլորն ալ երազներ ունին, վարդապետ և սիրով օծուն երազներ. — Հայր սուրբը գայ և իր պարթևական ձեռքով ու խաչով օրհնէ իրենց պսակը, կամ նոր հարսերու առջինեկները մկրտէ իր վանականի ձեռքերով...: Ի՞նչ անուշ երազներ. քաղաքը անձառելի ազխութեան մէջ քարացած կը մնայ, մինչ հովիւը ուրախ է այս անտախ հանդէսներէն. հրագէտներու գոռումը, բարբարոս ձայներն ու աւազները իր աստուածադաշումն են. այն ի՞նչ անպատում ուրախութիւն, երբ հովիւը վար կ'իջնէ կառաչարէն և ծով բաղմութեան մէջ, իր ժպտուն ու հպարտ դէմքը ցոյց կուտայ, օրհնելով իր հովուտակը հօտը...

Բայց իրաւունք ունիմ, պահ մը, մտածելու թէ արդար էին այդ ցոյցերն ու ցնծութիւնները, վաղամն ու վարդապետին կենդանութեանը սարքուած, մարդը ահարկու է եզեր իր պաշտօնին վրայ, անաչտա և արդար: Պետական պաշտօնատարներուն ասելի բլրակու չափ կը սիրէր իր հօտը, որուն ցաւն ու տարտը ի՞րն ալ էր: Տխուր ու յուզուած վայրկեանի մէջ, աչքերս յառած

Թաթուղով ամայացած շրջապատին , կը յիշեմ իր բոլոր սկար կողմերուն հետ իր քաջնոգի հերոսութիւններն ալ . ապտակը համբոյրի հաւասար էր իրեն համար , մանաւանդ այն պատմական ապտակը , Իկոնիոյ մեծ ժողովարանէն ներս , որուն արձագանգը վայրկեանին լսեց Ֆէնէրի Յունաց Պատրիարքարանը և շիկնեցաւ :

Կառքը կը բարձրանայ , հեւ ի հեւ վազքով . հրաշալի է շուրջի համայնապատկերը . վարը , հոյակապ ու արդաւանդ ձորն է տարածուած , պահ մը Քեաղըտհանէի պատրանքը տալով ինձ . Քեաղըտհանէ . . . անունը հեշտանքի ու ցնծութեան հոմանիշ է ինձ համար . . . Քեաղըտհանէն բովանդակ Արևելքն է , պորտերդութեան և սաղերդութեան ձեւավայրը , ուր կաթաղանը՝ իր մերկ շեղըր կը ցուցադրէ , քնարարոյր նուագին քով . . . Քեաղըտհանէն , որուն արծաթ ջուրերուն մօտ բնութիւնը կ'երգեն ու կ'ըմբոշխնեն սուլթանն ու սուլթանուհին . . . քնչուն ու քնչուհին :

Ի՛նչ աղուոր Քեաղըտհանէներ կան կոչս ու անթառամ բնանկարներով , հոյաշէն բարձրութիւններով ու հոսանուտ լեւնակողերով : Քեաղըտհանէն միակը չէ , կը մտածեմ , աստուածբնակ Արևելքի մէջ , բայց ան միակն է իր շնորհովը , որմէ՛ դրախտագեղ թրքուհիներ և արևելեան հարէմներ շատ բան իւրացուցած են և անով զարդարուած . . . Ահա հո՛ւ ալ թրքուհի մը . ի՛նչ ժանտ պատկեր . մեծ տաքութեան տակ արիւն քրտինք մտած աչնան սկիզբի հողը կը վարէ , գլուխը սեղմօրէն քողարկած . կին մը որ բնախօսօրէն կը տարբերի միայն իր քովնտի արուէն , որուն հետ բոլոր օրը , յորդ արևի շառայլներուն տակ , լծակից ու սեռակից ալ է կարծես , այնքան կոչս , նախապատմական ու բարբարոս : Թուր-

քիոյ պատմական մեծ ոստանին մէջ թրքուհիներ թերթ
կը հրատարակեն ու միթիւններ կը սարքեն, իրենց սե-
ռակիցներուն միտքը մշակելու և այերին մէջ կը սաւառ-
նին, կեանքերնին վստահած այերաչու գործիքներու,
հոս խարոյկատօներ միայն կը սարքեն, լուսնային դի-
շերի մը տակ, պատառատուն վրաններու մօտ, և յա-
ջորդ ատու, լուսարացին կոչտ հողը կը մշակեն. սա՛
այ մշակոյթ է վերջապէս... միտքի փոխան հող, կը-
կուքն ալ պարարտ ու արդիւնարեր:

Քաղաքը կ'երևի հեռուէն. իր սպիտակ պատերով
տուները, իրարու վրայ յեցած, կ'իշխեն մեծ ձորամէջի
մը վրայ, որուն ստորտար, քիչ մը դէպի աջ, Զինճիր
Քայան է ցցուեր, աղաղակող ու բմբոստ քարաժայռը,
աիինքսային անշարժութեան մէջ, որուն կատարէն յու-
սահատ թուրք մը վար նետած էր ինքզինքը, մեծ ան-
գունդին խորը անթեղելու իր ոսկրացած իրանը. հիւ-
ժախտաւոր մը թերևս, ո՛վ գիտէ: Օ, քարերն ու ժայ-
ռերը լեզու ու միտք ունենային ու պատմէին մեզի թա-
թույի օրերուն իրենց սուսած շէն ու շինական ժամերը:
Արդեօք իր հողին ո՛րքան կ'ուրախանար ու կը հրճուէր
սեանելով հայ բնակչութեան մեծագոյն դանդուածը, որ
կ'իշխէր աի մը խղամներով լեցուն ձորամէջին վրայ...

Մտակցած ենք քաղաքին, որուն սպիտակ ճեփով
տուներն ու անակները կը շրջանակեն պարզունակ ու
ամփոփ համայնանկար մը, զանցառ ծաւերով դրուագուած.
Երեք տարուան բնթացքին ո՛չ մէկ աչքառու փոփոխու-
թիւն. նոյն փողոցը, նոյն տուները, նոյն մարդիկը, գու-
նաւոր պարկեզտով, չա՛փ մը աւելի հինցած ու ծերա-
ցած բոլորն ալ. նոյն մեռելական քաղաքը, որ սակայն
չի դադրիր բնաւ իմ հիտաքրքիր ակնարկիս առարկան

հանդիսանալէ , և որ լեցուն է վաղամեռ Թաթուլի անմեռ յիշատակներով :

Բժիշկ բարեկամս ժամ առաջ սեռնելու փափաքով , կ'այցելեմ դեղարան , որուն խորը , նիհար , ախուր դիմագիծերով և պաշտօնական հագուած տարիքաւոր մէկը նստած է . անհանդիսաւ երկոյթ մը ունի և յայանի է թէ մէկու մը կ'սպասէ :

Կը տեղեկանամ որ բժիշկը հիւանդի մը այցելու թեան մեկնած է և թէ տասը րոպէ վերջ պիտի վերադառնայ : Քանի մը վայրկեան յետոյ հազիւ թէ ներս մտնող բժիշկին ձեռքը կը սեղմեմ և կը պատրաստուիմ իր հետ կուշտ մը խօսակցիլ , կը յայանեն թէ վերը , դարմանասրահին մէջ , հիւանդ մը իրեն կ'սպասէր : Արիտասարդ խնամածուն ներողութիւն խնդրելով կը հեռանայ քանի մը րոպէի համար միայն :

Ինչո՞ւ հիւանդանալ այս աղուոր ու օդասուն քաղաքին մէջ , կը խորհրդածեմ , ի՞նչ պէտք բժիշկի ու խնամածուի դիմել՝ այս փոքրիկ ոստանին մէջ , ամբանս սա տաք ու կայտառ օրերուն . . . Բայց ո՛չ , սխալ համոզում . ու րոպէսպէս մտածողութեանս առջև կը սլափակեանայ որ Անատոլուի , այս բնդարձակ ու միաքով անապատ Անատոլուի մէջ , Ֆիլիքական ցաւերն ու սարսերը աւելի շատցած ու ծովացած են , քան Արևելեան Անատոլուի մէջ , թրքական Հայաստանի մէջ , ուր ախրոյ ցաւը քաղաքական ու բարոյական է միայն , չքաւորութեան ցաւ , սուլանդումի ցաւ , անապահովութեան ցաւ , սպանումի և ջարդի ցաւ ու կարօտախա . . . Ա՛խ , ի՞նչ կայտառ են ու անոյդ Հայաստանի հայ բողոքակիները , մինչդեռ հոս , Արևմտեան Անատոլուի մէջ հայր փճացած է կարծես միաքով ու մարմինով , փճա-

ցած է կարծես բարոյականով . ու բարոյական փճացումի ինչ մեծ աղէտ , սկսեալ Բիւթանական ու Նիկիական փոքրիկ ու հայաշատ գիւղերէն , մինչև Էրթողրուլի սահմանները , Գաղատիա ու Իկոնիա , մինչև Կիլիկեան Հայաստան . . . : Շատ աննպաստ նօթեր առած էի այս ընդարձակ շրջանի հայութեան մասին , բժիշկ ու դեղագործ բարեկամներէս . ցաւը ընդհանուր եղած է ու վարակիչ , ու ցաւերուն ամէնէն ահաւորը , թագախան ու Քրանկախար , հաղարաւոր ջահել ու ջիւան զոհեր թողած իրենց ետև . . .

Ու այսպէս , հոգիս ախուր մտածողութեանց առարկայ ըրած , երբ բան մը փնտառողի անյապ տենչով շուրջս կը նայիս , սրահին խորէն , շիկահեր , նրբենի դիմադիծով , նիհար ու բարեձև պատանի մը կը յառաջանայ , քիչ մը ցցուած այտասկրերով , բաճկունակին ու տափառին կոճակները տեղաւորելու դրաղած : Տղեկը հազիւ տանորութը դարուններ բոլորած , երկնչող ակնարկ մը կը ձգէ քովընտի նասող տարիքաւորին վրայ , ու չի համարձակիր նայն իսկ բառ մը փոխանակել . անմիջապէս կը կռահեմ թէ մօտ քաւորդ ժամէ ի վեր հոգ սպասող բարեձև անձը , պատանիին հայրն է , այնքան մերձաւոր դիմադու թխնով . առանց սպասելու , մէկ ակնթարթի մէջ կը բանայ դեղատրահին դուռը և դուրս կը խոյանայ , իր մեղքերուն վրայ լալու յարմար անկիւն մը գտնելու աճապարանքով :

Երիտասարդ բժիշկը , հեշտապարակին առջև հանդիսա , հատճեալ սողեր մը կը մրտակ : քառանկիւն փոքրիկ էջի մը վրայ , ու իր մօտ կանչելով տարէց ու միշտ մտածկոտ մարդը , կը պատուիրէ լաւ խնամք տանիլ սողուն և յաճախ կրկնել լողանքները , առտու և իրի-

կուէն: Ընտանիքի այդ բարի՝ թէ ոճրապարտ հայրը, կը սոսկամ արդարեւ անաչառ դատաստան մը ընելէ, արխարազին երևոյթով ու մէկ ոստուճով կը խլէ թուղթի կտորը, և դուրս կը խոյանայ սրահէն, անձնասպանութիւն փորձողի յայտնի դրսերևոյթով կարծես . . .

— Ներելի՞ էր արդեօք հարցնել թէ ի՞նչ հիւանդութեամբ կը տառապէր այդ պատանին, կը հարցում փորձեմ բժիշկ ընկերս, սրուն հետ ծանօթացեր էի Կուսինայի մէջ, ասոյնջական յարկի մը տակ. արդեօք բարիս ծանօթ ախտո՞վ վարակուած է խեղճը, շահ տվորական իր տարեկիցներուն:

— Երանի թէ այդ բլար պատանիին հիւանդութիւնը. շատ դիւրին էր զինքը հեռու պահել այդ ախտէն, կը յարէ բարեկամս. պարոնը սասափկ . . . Ձեր տեսած թարմատի պարոնը դժբախտաբար ո՛չ առաջինն է իր տեսակին մէջ և ոչ ալ վերջինը. ցաւը լնդհանուր է և մեծ պատասխանատուութիւնը ծնողներու ուսին կը ծանրանայ . . .

— Եւ մեծադոյն պատասխանատուութիւնը Ձե՛ր, բժիշկներո՛ւդ ուսին, կ'աւելցունեմ յազուած ու չափազանց անարամազիբ շեշտով մը. պատասխանատուանո՞վ սր յայտնի շարժում մը չէք ստեղծեր հանրութեան մէջ, գիտական և ընկերաբանական դատախօսութիւններով և պարտաւորիչ ունկնդրութեամբ, վարժարաններու մէջ կազմակերպուած, ուսանող լէզեմներու առջև:

— Ա՛յդ ալ փորձեցի ու դժբախտաբար չի յաջողեցայ. հայ մասնաւոր վարժարանի մը մէջ առողջապահական դասընթացք մը սկսայ, հազիւ քանի մը դատախօսութիւններ բրի, բայց ժամանակս չներկեց կամոնտու.

բարար շարունակելու, և մանաւանդ վարժարանին մէջ տիրող անկարգ դրութենէն յուսահատ, վճռեցի իսպառ հեռանալ, մտածելով որ այդ պարտականութիւնը լրացնող ուսուցիչներ կան արդէն հոն . . .

Յաւագին տաղնապններու և անտրամադիր մտածմանց անձնատուր, կը հեռանամ այդ խեղդող յարկէն, և հանդարտ մթնոլորտ մը որոնելու յոյսով, կ'առանձնանամ պանդոկի սենեակս, աղուոր բնանկարի մը վրայ նայող: Դուրսի դուլութիւնը աղուոր գգուանք մը կուտայ ինձ, և հեռուէն նշմարուող լեռնաշարքը մտածումս աւելի հեռուները կը տանի, աւելի թշուառ հորիզոններ, արցունքի և կոծի նոր հովիտներ. նոյն դուլումը մտաւոր ու նիւթաւոր, որ լեռնաշարին ուժղնօրէն փակած կը շղթայէ ամբողջ Անատոլուն, Արարատէն Արդէսս, Արդէսսէն Տաւրոս ու Ողիմպոս: Լեռները, ինչ հրաշայի բարձրութիւններ են անոնք, ինչ հոյակապ վսեմութիւններ, ձիւնեղէն մաքրութեամբ, որոնց ի տես մարդկային մտածումն ալ կ'ըլլայ ջինջ ու ձիւնանման . . .

Վարը, սենեակիս անմիջապէս մօտիկը, զոյգ մը սիրուն եղևիններու միջև պատմական դամբարան մը իր լայն իրանը փռած՝ կը խոկայ դարաւոր անցեացին վրայ. ո՛վ գիտէ՝ ո՛ր արքային վերջին հանգստարան ծառայած է կա՛մ որ դիցադնին ածիւնները ծրարած իր մէջ, անոր սուրն ու վահանն ալ ամփոփած, և որ այժմ աղբիւրի քար կը ծառայէ եղևիններու արմատները թրջող դուլայ ջուրի մը: Իրիկուան շառագոյն սառերներու և սաղարթներու դաշն խշրտոցին սակ, մեծդի քարադանդումը յոս խտնապէս կը խոկայ, նման աւազուաներէն յառնող ահաւոր ասիինքաներուն, և յիշելով, թերևս, իր անցեացի փառքը, իր բարբարիկ հերոսութիւնը, կ'ար-

համարէն ներկան , զայն աւելի՛ ռամիկ , աւելի յետ գա-
ցած ու զինադուրկ գտնելով : Հակայ քարադամբանը , իբր
արդար զայրոյթի արասյայտութիւն , յորդառատ ջուր կը
հոսեցնէ իր ջրջապատի աղբերակներէն : Իսլամական յի-
շատակարաններու յօտ եղբայրօրէն կը քնանան Բիւզան-
դական և հին յունա-բիւթանական հետեթիւններ : Որ-
քան հաշտ են նիւթական անշունչ իրերը բնութեան
յայն ծոցին մէջ . որքան անդաշն ու անհաշտ են մարդիկ,
սակայն , նոյն լանջն ու մեծ բնութեան մէջ : Բազմաթիւ
մղկիթներու պատահեցայ այցելած բոլոր քաղաքներուս
մէջ , որոնց ջրջապատի քարերը խաչանիչ ու հրեշտակա-
նիչ քրիստոնէական վէմեր էին , հին բեկորներ , բոլորն
ալ , Բիւզանդական փառայեղ ճարտարապետութեան և
չքեղ քանդակին : Այսպէս է Անաստոյուն . մինչ սա օրե-
րուն , պերճանիտ մայրաքաղաքին մէջ գերեզմանատան
խաչերը սևով կը ներկուին : Ի՛նչ աններդաշնակ դաշնա-
կութիւն , սղբախառն կատակերդութեամբ :

Տաք գոյորչիին վրայ մութը կ'իջնէ : հեռոյհեռէ , և
զիտելէ ու խորհրդածելէ յոգնած , բնազդային հանդիսա
մը վայելել կ'ուզեմ՝ մեկուսացած՝ առանձնարանիս մէջ :
Ախորժակով կ'ընթրեմ տեղական ճաշակով համեմուած
պարզունակ ճաշ մը , տեղացի նոյնքան պարզ բնկերօջ մը
տարնիք : Իսրայր ախորժակի ժխոր մը կայ . Ողիմպոսի
ստորտար մեկնող կարաւանը ճամբայ ելած է , լուսնա-
յին դուլայ գիշերով մը . գրասաներու վիղէն կախուող
ձայնեղ բոժոժներու ներդաշնակ հնչումները խաղաղ ու
մեհաւոր մթնոլորտը կը լեցնեն : Պոլսէն դուրս , մանե-
կութենէս ի վեր , ստաջին անգամն է որ կը լսէի , հայ-
բենարադձ կարօտով , գանդակիկներու զիլ ժխորը , մեկ-
նելու պատրաստ կարաւանին մէջէն : Հաղարատը մտա-

ծուճներու անձնատուր, քանի քնանալ կը ցանկայի, այն-
քան աչքերուս զոյգ կողերը կը հեռանային իրար-
մէ, բանտարկեալի մը առաջին գիշերուան ահաւոր չար-
չարանքներու տակ. ինչ լա՛ւ է անխառով քնանալ, յոյ-
նած մարմինին պարզեւելու կենսունակ հանգիստը. վրա-
տան եւ որ աղուոր քունը հարուստներուն շնորհուած է
միայն. սողքանն ու ջղապար հիւանդը զուրկ են քունի
քնձեւած պարզեւերէն: Կը փորձեմ վանել միաքիս վրայ
պարտը բոլոր բարբարոս մտածուճները և հաղիւ թէ կը
յաջողիմ, ահա՛, սնարիս տակէն բարձրացող մուրճի գու-
ձայները կրկին կը խռովեն քունս. ինչ կ'ընեն արդեօք
պանդակին ծառաները՝ գիշերուան սա խոր լուսթեան
մէջ, երբ վարը յամեցող կարաւանն ալ շատանց ճամբայ
է ինկեր արդէն. ահանջ կը գնեմ. մուրճի ճայներու հետ
հեռացող փափառքներ: Անկարելի է քնանալ. ելեքարա-
կան զանգակը կը հնչեմ մեղմիւ. քունէն նոր արթնցած
գիւղացի ծառան ներս կը մանէ, մամի մը հասնող լոյսին
տակ ա՛յ աւելի դաշկացած՝ ու առանց սպասելու իմ
կողմէ ուղղուած հարցումի մը.

— Էֆէնախի՛, կը յարէ, դողդոջուն ճայնով մը, լսած
ճայներդ յարակից խանութէն է, ուր ատողձագործ վար-
պետը դազող մը գամելու վրայէ, ճահիլ ու կարգուկ
քաղաքացիի մը համար:

Սարսուտը կը թափանցէ երակներուս մէջ ու կը
վախնամ որ յիմարութիւնը պիտի դրկէ գիս խեղցն.
հրաշայի ներդաշնակութիւնը հոս ալ կը յայտնուի, ինչ-
պէս ամէն տեղ, ուր հայր կ'ապրի: Գազազն ու հայր
հո՛ս ալ ներդաշնակուած են, եզրայրօրէն հանգչած մէկը
միւսին մէջ, գորգուքանքով լեցուն, հսկող ու պահա-
պան իրարու: Երկու բազէ վերջ հաղուած ու պատրաստ

եմ արդէն , վայրկեան մը առաջ դուրս խոյանալու այդ ճնշող առանձնարանէս . կ'ընկերանամ ծառային , մինչև հոն , ուրկէ արձակուած մուրճի ձայները չարչարել կուգային հողիս ու զինել՝ բոլոր արամադրութիւններս :

Որքան հեռու այս դանգուտո՞ն ու աշխարհը հայաստանէն , և որքան մօտ հայաստանի իր զուլումսին ու ոճիրներովը , նայն այս հողամասը , ուր հայը իր սև հաղբ փնտուել եկած է դարեր առաջ : Աղէտը ընդհանուր է , ցաւը՝ համաճարակ դարձած : Մասողաչ ու երկու անշափահաս մանուկներու հայր , համեստ վաճառականի մը դադաղն է , զոր պատրաստող ձեռքեր կ'աճապարենն , գիշերուան սա ժամուն . ինչպէս ամէն առիթով , այս անգամ ալ հայ մըն է զո՞ր , գիւղէն քաղաք փոխադրուող ճամբուն վրայ դիտապատտ ինկած , բարբարոս դեղձուկներու անխնայ հարուածներուն տակ :

Գթութիւն . թշուառ զո՞ր ամբողջ երկու օր չոր հողին վրայ է մնացեր , փակ աչքերով , երեսը դէպի արևուելք , ի զո՞ւր սպասեր է , որ քանի մը հայրենակից ձեռքեր դան ու զինքր տանին իր ջանիլ կնոջ և անախառի զաւակներուն մօտ , անոնց արցունքներուն տակ ցուրտ հողը գրկելու . ցերեկը արևուն է ունեցեր իրեն սրահապան և գիշերը հառաչաւոր լուսնի մահիկը , իր կողին զգացած եաթաղանին սէս կոր , մինչև որ քաղաք հասնող գիւղացիներ ճանչցեր են զինքր ու ջորիի մը քամակին վրայ ուժգնօրէն կապած , քաղաք բերեր են զո՞հր , ու խափ գացող հայերու արամազին արտայայտութեամբ , անցնելով մաքուր ու կանտնչ կածաններէ : Գթութիւն . մահէն վերջն ալ հանդիսա չի կայ մարդուն , կը մտածեմ . այն ի՞նչ չարչարանք է . ժամերով ստարածուիլ ջորիի մը ափ մը քամակին վրայ , ընտանեակրու-

Թիւնն ու հայրենասիրութիւնը իր վրայ քանդակած ուղեղը, իր ոսկրուտ պատեանով վար կախուած, և կենդանիին իւրաքանչիւր քայլափոխին շարժող ու տատանող: Օ, լա՛ւ լսեցէք, ես կը մրտաւեմ, մէկ բոպէի մէջ, քաղաքակրթութիւնն ու խղճմտանքը իր կանակին բարձած մարդկութեան ճակատը... կը մրտաւեմ...

Ու ասուսի մը պէս դուրս կը խոյանամ ճերմակնեքով պարուրուած դադաղին քովէն, որ պատրաստ է արդէն հէք զո՛ր իր մէջ ծրարելու, և վայրկեան մը խենթ մտածուծը կ'երկնեմ բոլոր մարդիկը այդ դադաղին մէջ անխոփելու... դուրս կը նետուիմ, լայն շունչ մը առնելու համար և անկիւնը հաղիւ դարձած, կրկին իմ մօտ կը գտնեմ մեծ քարադամբանը, որուն սնարին վերեւ, դաժուկ աթոռակի մը վրայ, մեծ աէրվիչ մը նուիրական գիրքին էջերը կը դարձնէ, պորտէն վար մեծ համբիչ մը տարածած, սրեւրացի այդ սրբազան ժամուն: Ե՛ս ալ կը նստիմ մեծ ծառին բունին մօտ, թռչուններու յուզարկաւոր երամին սակ, ակնարկս, աւելի՛ դաժան անքուն մնալէս, չհեռացնելով հսկայ քարադամբանէն, որուն քովընտի աղբերակներուն առջև, պահ մը վերջ, իրենց ձեռքերն ու ոտքերը պիտի լուան, ապստարի ժամուն, էրթօղբուլի գաւակները, մեծ ծիծաղն ու հեզնութիւնը կերտելով: Ե՛ս ալ կը նստիմ, ժամ մը վերջ անցնող դադաղն ու շուրջի յուզարկաւորները դիտելու...:



ԿԱԶԷԹԱՆ, ԿԱԶԷԹԱՆ

Ամառնային արձակուրդի երկամսեայ հանդիսատէ մը վերջ, Հայտար-Քաչայի կառաչարով կը մեկնիմ գէպ ի պաշտօնավայրս, կրկին վերսկսելու այն աշխատանքը, որը սկսած էի թրքախօս հայութեան ամէնէն մտաւորական ու ապագային հանդէպ խոսամնայից կեդրոնին մէջ: Ամէն անգամ որ հարկ կը դրայի հրաժեշտ անելու Պոլսէն, գէթ այն մխիթարութիւնը կը կարծէի ունենալ թէ՛ չափ մը աւելի զարգացում, աստիճան մը աւելի յառաջդիմութիւն պիտի նշմարէի երկաթեայ այդ դուռգահնու գիծերուն երկու երկայնքը: Քսանէ աւելի անգամներ կը ճամբորդէի երկու կողմէն, և համոզումս աւելի իրական կը դառնար այն հարցի շուրջ թէ՛ մեր դժբաղդ երկիրը յաւիտենապէս դատապարտուած է մնալու իր լճացած կացութեան մէջ, նոյն իսկ այն վայրերուն մէջ, ուր օտար բնակրութիւնները փափաքած են անակտական ու գիւանադիտական հողի վրայ հաստատել երկաթուղիի քանի մը երակներ:

Կառաչարը կը սուրայ իր ահա որ վայնասունով ու հողիւ Իշխանայ Կղզիներէն բաժնուած, բայց սակաւին պոքոսական բուրումին սակ, գծին երկու երկայնքը, անձակու խոպան հորիզոն մըն է որ կը ցցուի անսողութեանդ սաջև, ու մարդ աւելորդ անգամ մըն այ կը տարուի խորհելու թէ՛ հակառակ երկրին անակտական խիստ նպատաստար գրութեան, սակաւին ո՛չ մէկ լուրջ քայլ անուած է երկրապարծութեան ու մանաւանդ ճարտարարուեստի յառաջացմանը ակտակէտով:

Կառաչարի սրահին մէջ, անկիւնը, պատու հանին

ատջև, մտածկոտ, տարաաւ մ ու անորոշ դրութեան մէջ, թուրք երիտասարդ մը ընկողմանած է. աչքերը յառած դէպ ի անմշակ ու վայրենի տարածութիւնը, կը դիտէ հանդարտ ու միաշափ, ու յուսահատի խոր հառաչ մը կ'արձակէ, կարծես յոգնած զգալով ինքզինքը՝ դուրսի միօրինակութենէն: Վայելուչ ու չափազանց խնամուած արդուզարդով, մտաւորականի այդ երիտասարդ դիմագրծութիւնը, առաստ՝ բայց վաղահասօրէն ճերմկած յարդարուն մազերու սակ, ուշադրութիւնս կը գրաւէ. կը մտածեմ թէ կառավարական նորրնտիր պաշտօնեայ մըն է, որ շատ մը երիտասարդ դպրոցաւարսներու նման, ինքն ալ յուսախար եղած է, ու մանաւանդ յուսահատ՝ ազդուելով դուրսի բարբարիկ ամայութենէն:

Պոլսական շքեղ ու բարեձև տուները, ծովեզերեաց շողշողուն ապարանքները, որոնք Համիտեան հեշտ շրջանի կարկառուն կոթողներ են բաւորն ալ, ու արիւնի ու մասնութեան գինով բարձրացած հարէմի տուներ, կ'անհետանան հետզհետէ, և հինգ ժամուան արագ սլացքէ մը վերջ, հողազուրկ և աղքատ բայց դասակարգի անասոջ ու անձև հիւղակները կը ցցուին դէմդ, նախապատմական շրջանի կոշտ ճարտարապետութիւնով: Ու երիտասարդ թուրք ուղեկիցս, յուսահատօրէն լքուած, չուզեր նայիլ, դիտել այդ ահաւոր ու աղաղակող խեղճութիւնը բնակարաններու. թիկունքը տալով լայնածիր պատուհանին, կը սկսի թղթատել Հունդարացի ժողովրդական բժիշկ բանաստեղծի մը քերթուածներու փոքր հաւաքածուն: Յուզումը յայտնի է իր նիհար դիմագրծութեան վրայ. ներքին տառապանք մը ունի ու չի կրնար արտայայտուիլ այդ նեղ ու քիչ մը խեղդող մթնոլորտին սակ . . .

— Կ'երևի նորաւարտ բժիշկ էք, կը հարցնէ ինձ, ու Պետութեան կողմէ կ'ուղարկուիք դէպ ի Անաստուլի խորերը, ուր այնքան զգալի է, կարծեմ, լուրջ և անձնուէր բժիշկներու պէտքը, . . .

— Բժիշկ, ո՛չ, կը սխառասխանեմ. պարզ ուսուցիչ մըն եմ, որ արձակուրդը Պոլիս՝ ծնողացս մօտ անցունելէ վերջ, կրկին կը մեկնիմ վարժարան:

Բարեկամս կը ժպտի, ու ինքզինքը անուանապէս ներկայացնելու մէջ համեատ, ինձ կ'երկարէ սպիտակ այցաքարտ մը, որուն վրայ կը կարդամ իր ինքնութիւնը. Պոլսոյ Օսմանեան Համալսարանի իմաստասիրութեան և մանկավարժութեան ուսուցիչն է, միաժամանակ Պետական Վարժապետանոցին, թուրքերէն լեզուի դասախօս՝ որուն ստորագրութեան տակ գրական քանի մը էջեր կարդացած էինք թուրք պաշտօնակցի մը հետ: Անմիջապէս կը թողու իր բանաստեղծական հաւաքածոն, ու մաքուր և սահուն ֆրանսերէնով մը կը սկսի մտերմանալ հետս:

— Կեանքիս մէջ առաջին անգամ ըլլալով կը թողում Պոլիսն ու ծնողքս, ու օգտուելով Պայրամի կարճ արձակուրդէս, կը մեկնիմ դէպ ի Գօնիս, մօտէն ուսումնասիրելու Սելճուզեան հարստութեան բոլոր կոթողները, արձանագրութիւններն ու յիշատակարանները, գանձնք ինամով դասաւորելու Սելճուզեան փառաւոր հարստութեան պատմութեան նուիրուած ընդարձակ և կարեւոր ուսումնասիրութեանս մէջ:

Հետաքրքրութիւնս կը սաստկանայ ուղեկցիս հանդէպ, որուն մէջ կը գտնեմ գրական եղակի իսառնուածք մը, պրայտող ու ուսումնասիրող ոգի մը, ու վափաքող Սելճուզեան դարաւոր պատմութեանը վրայ իսլամական

Նոր սերունդը ապրեցնելու, մտաւորականի իր խանդա-
 շխա խառնուածքովը: Հաղիւ թէ երեք օր մնամ այդ
 պատմական Իկոնիոյ մէջ, կը շարունակէ, բայց այդ երեք
 օրուան շրջանը ինծի պէս Յեղիա ու Աղգութեանս
 նախանցեալովը հետաքրքրուող պատմագիրներու հա-
 մար, անմուտայ և հեշտ շրջան մըն է: Խեղճ աղդ, կը
 յարէ, բնա՛ւ չէի յուսար զինքը այս յուսահատ ու
 թշուառ դրութեան մէջ տեսնել: շուրջիս տեսարանը
 զիս չափազանց կը վհասե յնէ: Բնա՛ւ չէի կարծեր Հայ-
 բենիքս այս կացութեան մէջ գտնել: Գաւառն ալ Պոլսոյ
 նման գիտէի... Թերևս շատ աննշան տարբերութեամբ
 միայն: Իրականութիւնը խիստ տխուր կը դանեմ. մե՛ղք,
 Համիտի զոհեր բոլորն ալ, սա դժբախտ գաղթական
 գիւղացիները, կը շարունակէ, ու կրկին թղթատել կ'ուզէ
 բնդհատած քերթուածը:

— Բայոր Անատոլուի մէջ ամէնէն մխիթարական
 հողամասը երկաթուղիի այս շրջանն է, կը յարեմ ու-
 գեկցիս. մխիթարակա՛ն, որովհետև դարուս քաղաքա-
 կրթութեան ու դիտութեան ամենամեծ բարիքներէն
 մին կը վայելէ, մխիթարակա՛ն, որովհետև կառաշարին
 հակայ ու խլացուցիչ սուլոցը կը լսէ. ձեր աւաղած
 հիւղակները գէթ կղմինարով ծածկուած են, մինչդեռ
 աւելի խորերը, դժբաղդ Հայաստանի մէջ, կղմինարն ալ
 կը պակսի, ուր հայ գիւղական տուները խոտի շոր գէ-
 ղերով միայն ծածկուած են: Ի՛նչ բտել հապտ հողաղուրկ
 ու ջարդուելու տարաափին սակ տուայտող այն հայ և
 քիւրտ գիւղացիներուն, որոնք վայրաշարժի սուլոցն իսկ
 լսած չեն, ամբողջ սերունդով, և որոնց համար Աահմա-
 նագրութիւնը ջարդելու օրէնքին և ետթաղանի շողալուն
 հաւասար նկատուեցաւ:

Յօսակիցս ա՛լ աւելի կը յուզուի ու աշխուհան լուրջ շարժումով մը կը սրբէ թրջած երկու փայլուն աչքերը : Կառաչարը , Սաքարիայ մեծ կամուրջին մօտեցած , կը սկսի թեթեացնել իր գնացքը . ուղեկիցս , կրկին պատահանին մօտեցած , ինձ ցոյց կուտայ արեւահար և անհագազին երխտասարդ զինուորներ , որոնք պատաստուն վրանի մը շուրջը բոլորուած , խարոյկի մը մօտ , իրենց երեկոյեան ընթրիքը կը պատրաստեն , ու քիչ մը անդին , իրենցմէ մին կը ջանայ սպիտակացնել ճերմակեղէնի քանի մը կտորներ :

— Զէվա՛ւը ետվրուճուղարրո՛մ , կը հառաչէ երխտասարդ ուղեկիցս , իր ակնարկէն չհեռացնելով այդ անտէր ու պանդուխտ Հայրենիքի պաշտպանները . դիչերը , անտարակոյս , պիտի մսին այդ ծակծկուած տաղաւարներուն տակ , հողի խոնաւութեան վրայ : Արքա՛ն անել ու դժնդակ է ասոնց կեանքը , դժբա՛խտ ու պանդուխտ եղբայրներու : ու կրկնապէս յուզուած նոյն եղերական տեսարանէն , կ'առաջարկէ դուրս ելլել պահ մը՝ այդ ճնշող չարկարածինէն . կ'ընկերանամ իրեն դէպի նորանցքը , որուն խորը , մեռաքառապատ սեւնասեի մը վրայ աղօթքով դրած կը գտնենք Օսմ . Սորհրդարանի նախկին փաթեթոցաւոր երեսփոխաններէն մին , որ իր լնտրական շրջանակը կը մեկնի , թէև քիչ մը յապաղած : Անթիջատէս կը կուսնեմ ուղեկցիս կրած արդար դայրոյթը այդ տեսարանի հանդէպ , որուն մէջ կարծել կը գտնեմ միայն դարգացման ամէն խոչնդոտ . . .

Առանց խանդարել փափաքելու կրօնաւոր երեսփոխանին իրիկնամուտի աղօթքը , ուղեկիցս կը սկսի արտայայտուիլ իր բուռն դայրոյթով .

— Եստ մերձաւոր նմանութիւններ նշմարեցի , կը

յարէ , բանաստեղծք , քիչ առաջ կարդացած քերթուածիս և սա վաթիթսցաւորի աղօթքին միջև : Իրա՛ւ է թէ կրօնքը և անոր դրական արտայայտութիւնը եղող աղօթքը մարդկային բարեպաշտութենէն դէպի ի Աստուած անած զգացում մըն է , սակայն այդ ընտանի բարեպաշտութիւնը վաղուց հրաժեշտ առած է մեր այլասեր բնութենէն . . .

Վերջապէս իր բովանդակ գեղեցկաւթեանը մէջ էր , երբ հանդարտ ու անոյշ ստուերներու տակ , հսկայ կառաչարբ մօտեցաւ դաղթական գիւղերու քղանցքին , առանց սակայն կանգ առնելու այդ դժբախտ գիւղացիներու մօտ . ուղեկիցս , ախրազին հետաքրքրութեան մատնուած , լսեց մուհաճիր անչափահաս աղոց բերնէն ելած կողկողազին աւաչք .

— Կաղէթա՛ն . . . կաղէթա՛ն . . .

Այդ դժբախտ տեսարանին հանդէպ , որ երկրին իսկական մտաւոր դուրսմի կենդանի պատկերն էր , մանկափարժք չկրցաւ երկու կաթիլ դապել , որոնք սահեցան իր դաղկացած ու աժգոյն այտերէն վար . . .

— Կաղէթա՛ն . . . կաղէթա՛ն . . . Ալլահ աչգընա՛ն . . . կաղէթա՛ն . . .

Ու հարիւրաւոր ձեռքեր կ'ուղղուէին դէպի շոգեկատրէն դուրս նայող ճամբորդները , այդ կրթազուրկ մուհաճիրները մէկ սասուամով կ'ուղէին կեցնել երկաթի շրջթայակապ այդ հսկայ գանդուածները , քանդել զայն և ախրանայ անոր խորը պահուած քաղաքակրթութեանը . . .

— Կաղէթա՛ն . . . կաղէթա՛ն . . .

Բամազազանի վերջընթեր օրուան առիթով հրապարակ ելած պատկերաւոր երգիծաթերթէ մը քանի որ օրինակ կը նետուի վար , վափաքելով մտոյնել սալ իրենց

օրուան դժնդակ քաղաքականութեան ահաւոր կացութիւնը և ապրեցնել զիրենք, Պայրամի երջանկաբեր օրերու առիթով, դուարթ ու շէնչող կեանքը :

— Կաղէթա՛ն . . . կաղէթա՛ն . . .

Սպիտակ թուղթի կտորները, կը խլուին ձեռքէ ձեռք ու սարիքով մեծ լաճերը բռնութեամբ կը տիրանան փոքրերու իրաւունքին :

— Զէվա՛ն լըր ետիրուճուգլարում, մէքթէպէ էօքսիւղ գալանս պէտպախա ետիրուճուգլարում . . .

Կառաչարը կը շատայէ մութի մէջէն և հեռուէն կը տեսնուին տակաւ քաղաքին լոյսերը՝ ուղեկիցս ապշեցնող շքեղութեան մէջ . . .

Ու դեռ կը լսեմ կարծեա իրենց ուրախութեանը տիրացած գաղթական մուհաճիրներու մահառիթ աւաչը .

— Կաղէթա՛ն . . . կաղէթա՛ն . . . :



Տ Է Ր Վ Ի Շ Ը

Յաւխտենական , դանդաղ , միշտ նոյն անձն է սա
տերվիչը :

Առտուն , մի՛նչադին , երբ տակաւին շատեր կը խոր-
դան իրենց անկողիններուն մէջ , ա՛ն , յաւխտենի Տէր-
վիչը , հրապարակ նկատուած է արդէն , անշարժ , անխօս ,
ահաւոր լռութեամբ : Տարուան չորս եղանակներուն ,
ամբան տօթին ու ձմրան խառութեան , նոյն անձն է .
անխօսիսխ , ամբացած երկայն խազի գոյն վերարկուի մը
մէջ , որուն ծայրերը հալեր , մաշեր ու հատեր են , ծակ-
ծրկուած , ծուէն ծուէն , իջնալու և փրթելու մօտ , եր-
կայն փէշեր , մինչև իր ոտքերը : Ո՛վ գիտէ , քանի՛ հա-
ղար քարերու և փուշերու հանդիպած են , մերթ մա-
ցառներէ ներս , մերթ տարածուած՝ ջրեղրի վրայ : Իր
վերարկուին տակէն կը նշմարես Իսլամութեան խորհրդ-
դանչան կանաչ գոյնով երկար վերարկու մը , արևահար ,
ուր աշխարհի բոյսը գոյները , պոռոտ կամ ամոյն կեր-
պով իրենց հեռքերը ձգած են , գոյներու հաւաքածոյ
մը , ստացական , վերջէն մուտ դաւած , իւզոտ Հաղիւ-
նշմարելի , այնքան նիհար փորին վրայէն գօտի մը ան-
ցած , ու ճիշտ միջուկը , նոյնպէս կանաչ մեծ քար մը ,
դարձեալ խորհրդանշան իր կրօնին : Օ՛ , այդ քարը , բո-
լո՛րը , բոլո՛րը պատմութիւն է . հօգևոր , միսթիք , յա-
ճախ մարտական պատմութիւն . սասո՛վ է որ կը դանա-
զանուին Իսլամութեան երկու մեծ հատուածները :

Մերկ ոտքեր , ահաւոր , լայն , մեծ ու կոշտացած ,
որոնց մասները գուրս ինկած են գոյգ մը խարխուլ և
բռնի հրաժարականնին կա սուած կիսակոշիկներէ : Ախա

յատկանշական գլուխ մը, եղերուած՝ ցանցառ, ալի-
քաւոր ու շէկ մօրուքով: Տարիներէ ի վեր կաղապար
չտեսած, ծած, ծռմռակած, փոսացած, իւղալից ստու-
րոտով, ու քիչ մըն ալ գէպ ի ձախ ինկած, երկայն,
գրեթէ կանգուն մը երկայն պէկրաւի իր սիւքէն, իր
քիւլանը կը լրացնէ այս եղական մարմնու սրումը:

Փոսացած զոյգ մը աչքեր, խորունկ, խարհրդաւոր
նայուածքով, կարծես բան մը չունին քեղի բսելիք. ու
թերեւ քեզ կ'արհամարհեն, որովհետեւ դու կարող չես
թափանցել իր էութեանը, որովհետեւ գիտակ չես իր
տէրվիչի ահաւոր և գաղանատեսիլ հոգեբանութեանը:

Յաւխտենական, դանդաղ, միշտ նոյն անձն է սա
Տէրվիչը: Հաղիւ քառասուն տարեկան, բայց արդէն
չաւտնց սկսած են ճակատն խորշոմները, փոթ փոթ,
ծալք ծալք: Փոխալ՝, բնա՛ւ չգիտեր. սակրեղէն արձան
մը, բնաղդային անակեթեթ կաղմաւորութեամբ: Կար-
ծես խրաքանչիւր անցորդի առանձին, որոշ բան մը ունի
բսելիք, որոշ արտայայտութիւն մը. բայց կը վարանի,
կը քաշուի ու թերեւ կը մտածէ իր կրօնաւորի, սքե-
մաւորի հանդամաները, բանի լրջութիւն մը կը ստուե-
րտաի իր գիմաղիճերան վրայ, ու ատով աւելի դո՛ւ ու-
երջանիկ, կը սկսի առանձինն մտածել, կը խօսի, կը
դատէ և կը փիլիսոփայէ: Կը նայի չորացին, հանդար-
տօրէն փէշերը վեր կը հանգրիճէ. յաճախ կանոց կ'առնէ
գետեզրի մօտ, ուր իր ահաւոր պատկերը, ջուրի յտաւ-
կութեան վրայ կաղապարուած, նոր եռանդ մը կ'ար-
ծարձէ իր մէջ. ու կը շտապէ, կ'աճապարէ գէպ ի իր
գործը, գէպ ի իր նոպասակը, իր յաւխտենական հան-
գրբու անը:

Յաւխտենական ու դանդաղ միշտ նոյն անձն է սա
Տէրվիչը:

Առաւել, միջնադին, երբ աակաւին շատեր կը խոր-
դան իրենց անկողիններուն մէջ, գիշերուլնէ կորսուած,
ձգուած ու թափուած առարկաներն ինք գանելու յոյ-
սով, դուրս կը նետուի իր որջէն . մէկ ձեռքը կը կրէ իր
հովուի ղեկարը, իր քեպերը, իսկ միւսով, մաշած ու
ծակծկուած հին կոշով մը, յատակը դուրս ինկած, ո՛վ
գիտէ քանի հազար անգամ գետինն ինկած, ո՛վ գիտէ
քանի հազար անգամ հաս ու հոն դարկած: Աւ ձեռքի
քեպերովը կը սկսի քրքրել կամուրջի մօտ դանուած
աղբանոցը . կը քրքրէ, աակնուվրայ կ'ընէ, իրենց բոյնի
թաւէն դեռ նոր վար իջած աքլորներու նման: Ձեռքի
նուիրականն ու աւանդամուլ այդ գործին, այդ պատմա-
կանն ու դարուսը ձեռնափայտը անպէտ առարկայ մը կը
դառնայ իր մասներուն մէջ: Կը փնտռէ ու կը գտնէ
փայտի կտորներ, որոնց դուրդուրալից վեհութեամբ մը
կը մօտենայ, ոսկորի կտորներ, ապակիի շերտեր, ծա-
կաակի՛ն, մաշած անօթներ, ամուխի հազուադիւս կտոր-
ներ և դեռ այն բոլորը, բոլորը դուրս մարդիկ՝ իրր աւե-
լորդ բեռ կամ անպէտ առարկայ, կը բերեն կը յանձնեն
Չբեգրին:

Աւ կը լեցուի կոշովը, կը բրդանայ: Բայց դեռ մա-
մանակ կայ կէս օրուան . դեռ եզակը չէ կանչած, դեռ
ատեն չէ առուածային փառաբանութեան: Պէտք է
աշխատիլ . նոր տեղեր, կոյս հանքեր գտնելու հասաատ
մատչութեամբ կը քաշէ դէպ ի առաջ, միասին կ'առնէ
իւր կոշովը, և աչքերը գետնին յառած, միշտ նոր բան
մը կը փնտռէ, որ ըլլայ օգտակար, հաճելի, սպասելի,
գէթ ի՛ր համար . վար կը գնէ իր կոշովը, լայն շունչ մը
կ'առնէ, քիչ մը կը խորհրդածէ, կը փիլիսոփայէ ու հան-
դարատօրէն վեր կ'առնէ նիւպպէին ծայրը, մէջը կը աւե-

դաւորցնէ վայտի շերտերը , ու կողովն ալ բռնած , կը սկսի արագացնել իր քայլերը : Յագնած է խեղճը . քրքրատինքը կը թարի իր խորշումներէն , ու անտանելի գարշ հաս մին է որ դուրս կը մաղուի գլխէն ու անութներէն :

Կէս օրուան մօտ է . պէտք չէ թերանալ աղօթքի , սրբացումի ու լուսոցման պարտականութեանց մէջ : Կթոտած սաքերը , գոլորչի դուրս թորող մարմինն ու գլուխը ջուրի կարօտը ունին , այնքան վարժուած անոր : Կոշտ ու կոշկոտ կապած իր սաքերը , սրնոց վրայ կաշիի մը դոյութիւնը պարզ դարձ մին է կարծես , կը քաշեն արագ , շափուած , համրուած , ինքնինտակ քայլերով , ու Տէրվիչը կը հաննի իր սրջը , բիւրալէին քովնախ վաքը , ցած ու խլխլած խուցը . բայց իրն է այդ յարկը , սրուն սեւէն ներս ամէն իր , հին թէ նոր , իր սեփականութիւնն են , իր քրտինքի հասարգատ ու արդար պատուը : Անձայն , կը հանդէսցնէ իր կողովը , ու դժուարին աշխատութենէ մը վերագարձողի երեւոյթով , վեր կը հանդրիճէ թեւոցները , ուրիշ ճերմակ շապիկի ծայքեր սեանելու բնականութիւնը կը զգաս , բայց ո՛չ . ո՛չ շապիկ ունի խեղճը և ո՛չ ալ շապիկներ , ու այսպէս ինքն իր վրայ իսկ կ'արգարացնէ տէրվիչի աստուածատու բ և սրբազան կերպարանաւորումը : Հիմա , դուրսը , բակին մէջն է Տէրվիչը , շաարուանին առջև . ծունկի կու դայ ահաւոր երկիւղածութեամբ , կը բանայ իր սաքերը ու ու ահա ապսկայի նուիրական վայրկեանն է որ ծայր կուտայ : Մեծ ու երկիւղած զգուշաւորութեամբ քաճին վրայ կը հանդէսցնէ իր գլխամոցը , ու պազ և յատակ ջուրը կը թարի իր դէմքէն վար , կը ծորի իր դատասկներէն : Չի մտնար իր սաքերն ու դէմքն ալ օձիկ ջուրի կայլակներով : Փառք կուտայ իր Ալլահին , աչքերը վեր

կը սեւեռէ ու այդ բապէին մանկուհակ լիակրօն գոհու-
հակութիւն մը կը նշմարեա իր վրայ : Վերջին լուացումն
ալ կը կատարէ ու քիթին տակէն քանի մը վանկեր մը-
ուլտաշով կ'ուղղուի սրբարանէն ներս , երբ վերէն՝ ար-
դէն եզանը շատօնց աղօթքի հրաւիրած է հաւատքի հա-
մար երդուեալները :

Ու ահաւոր է իր սեռքը աղօթարանէն ներս . պեկ-
թաւիներու , ուխտեալ կրօնաւորներու այդ հսկայ շար-
քին մէջ , ինքն ալ ունի իր սեղն ու դերը . Անչի խորա-
խոր աղղեցութեան տակ ու անով հմայուած , վեր կը
բարձրացնէ իր ձեռքերը . աչքերը ուժգին փակած , կը
դառնայ , կը դառնայ , յաւիտենապէս կը դառնայ , ան-
վերջ ու անհամարձակ համբիշի մը հատիկներու հաւասար :
Հո՛ր , այդ սրբարանին մէջ , հետեաց կամարներուն և ջա-
հերուն տակ , կը մտնայ պահ մը իր խոնջէնքն ու յոգ-
նութիւնը : Ու կը սկսին բոլորը մէկ երգել : Բուրսը ,
բակին ձիշտ մէջտեղը բարձրացող շատուանի կարկաշը ,
ու քիչ վերը , մզկիթին մարմարեղէն , ձիւնեղէն քի-
ւերուն տակ ապաստանող անհամար աստրակներու
խայտարղէտ վաղքը , տակաւ մարմրող Անչի հեա զո-
ղաւորուելով , կը խանդավառէր գօտեպինդ տէրվիշները :
Ու կը դառնային բոլորը մէկ , ձեռք ձեռքի , սիրտ սիր-
տի հանգրիճած , հոգեկան հանգրիճում մը , ուրկէ , բո-
լորին ալ արիւնը կը նայնանար , կը մաքրուէր , կը սրբ-
բանար , մաղնիսական հոսանք մը կը հոգանցէր իրենց մէ-
ջէն :

Ճնորքի ու խելայեղութեան այդ ինքնամոռացման
ահաւոր վայրկեանին , անհրապոյր տէրվիշը կը քակէ
յանկարծ մարդկեղէն այդ օղակաւորումը , կը ձգէ իր
հարեւաններուն ձեռքերը , ու յիմարական և դիւային խո-

յանքով դուս կը սպրդի սրբաւրանի դռնէն ու շիտակ կ'երթայ ասի կ'առնէ իր դարաւոր սրճին առաջ . կը բանայ մեղեփորէն անոր փեղկերը ու ներս մտնելով կը սկսի դատաւորել իր քիչ առաջ հաւաքած պիտանի և անուէտ առարկաները , կը դուրգուրայ անոնց խրաքանչիւր կտորին վրայ . անկիւնի վայտի դէզին վրայ կը հանգչեցնէ նորեկ շերտերը : Այդ փոքր պատմական թանգարանին մէջ խրաքանչիւր տեսակէ առարկայ իր սրտէ անցն ունի և իր առանձին կարևորութիւնը : Պատին վրայ երկար համբիշ մը իր լայն մարմինը փռած է . ամէն դոյնէ , ամէն մեծութենէ զանազան քարեր , սրանց մէջ կապոյտները կը գրաւեն ամէնէն աւելի ուշադրութիւնը :

Յաւիտենական ու դանդաղ , միշտ նոյն անձն է սա Տէրվիշը :

Ներս կը մտնեմ պահ մը իր խուցէն . կ'ուզեմ մտերմանալ իր հետ , բարեկամանալ , սպրիլ իր երանութիւններուն մէջ գտնել քանի մը վայրկեան , լսել իր փիլիսոփայութիւնները , սրանք գրաւիչ են ինձի համար , ու մա՛նաւանդ լսել իրմէ , թէ՛ ի՞նչ է իր կեանքի բնո՞հանուր նպատակը՝ եթէ ունի նպատակ մը կեանքը ապրելու համար , իր խնամատարութիւնը , հարցնել թէ ի՞նչ կը զգայ կեանքը ապրելով , այդ լքուած , սղբանոցային , զաւազար կեանքը : Կ'ուզեմ այս բարբին տեղեակ ըլլալ , վասն զի շատ լաւ ու շօշափելիփորէն գիտեմ թէ՛ Տէրվիշին ապրած կեանքը , կեանքերու այս խայտարակա պէտպիսութիւններու շարքին , մէկն է լաւագոյն ու ցանկալի կեանքերէն , ուր ամէն բան հոգի է և հաղուաղէպօրէն նիւթ :

Ներսն եմ արդէն քանի մը բաղէէ ի վեր , նստած անկիւնի վախաթի մը վրայ , անսամուկի ու ճնշող մթնո-

լորտի մը տակ : Հաղիւ դադրած իր պրպտումներէն , ձեռք կ'առնէ իր երկայն համբիշք , ծալապատիկ կը նստի իր սովորական անկիւնը , ու հաղիւ տեղաւորուած , կը պատմէ ինձի իր կեանքի լաւագոյն էջերը , կը խօսի ահաւոր ու երկիւղած յուզումով . . .

— «Լսէ՛ , ընկե՛ր , լաւագոյն կեանքը աշխարհի բեմին վրայ , աշխատանքի ու արդիւնաբերութեան կեանքն է , անսարակոյս ո՛չ այն արդիւնաբերութիւնը , որ միայն յատուկ է դրամատէր դասակարգին , այլ ա՛յն , որ սահմանուած է միմիայն գոհ ձգելու ինձ նման հազարաւոր իրաւազուրկներ և թշուառներ :

Ես իմ դարաւոր ցեղիս երգուեալ պաշտպանն ու հաւատարիմ ուխտաւորն եմ , ա՛յն ցեղին , որուն պատկանող բիրաւոր հաւատացեալները , նուիրական մարդարէին սուրբ ճամբէն կը քայլեն : Լսէ՛ , հազուադիւտօրէն մարդիկ ինձ նման տառապող ու դրկուածներ եղած են աշխարհի մէջ . մարդիկ հազուադիւտօրէն հալածուածներ ու խաչուածներ եղած են , որքան ե՛ս սա խլխլած պատմութեանիս տակ :

Կը տեսնե՞ս սա սրբավայր , ան իմ նախնիքներու ձեռակերան է , անոր եօթը աղբիւրները իմ եօթը քայրերս շինեցին , ու իրենց անուաները դեռ կը մնան անոնց քարերուն վրայ : Արքարանին եօթը դմբէթները , իմ եօթը կաթնեղրայրներս բարձրացուցին :

Քաւորդ գարե՛ ի վեր ամենամեծ հաւատարմութեամբ և կրօնիս ու պաշտամունքիս յատուկ երկիւղած եռանդով կը հսկեմ այս սրբարանին մէջ , անկաշառ և անարժամ կը ծառայեմ Աստուծոյ ու իր մարդարէին և ո՛չ մէկ վայրկեան չեղեցայ ինձ վրայ դրուած սրբազան պարտականութենէն :

Ու առաւօտ մը , չպիտի մտնեամ բնաւ այդ ահաւոր վայրկեանը , առաւ՛օտ մը , այո՛ , մզկիթին շէյխը , Ու պէտուլլահ , զիս իր մօտ կանչեց և դայրացկոտ շեշտերով սպառնաց վտարել զիս իմ պաշտօնէս , եթէ երբեք չկարենամ ցոյց տալ երկու դարու հնութիւն արժող արծաթեայ փոքր ջահը , որ նոյն գիշերը անյայտացեր էր մզկիթէն : Ի դո՛ւր փորձեցի պաշտպանել ու արդարացնել ինքզինքս , և սակայն վճիռս արդէն արձակուած էր . պարտաւոր էի մեկնիլ այս վայրէն , սոսկալի ամբաստանութիւններու տակ . գողութի՛ւն և կ'ս , այդ արարքին ստոր հեղինակը , ևս , որ բովանդակ կեանքս զոհած էի այս սրբավայրին պահպանման , կ'ս , որ տարիներ շարունակ անոր գոյութեան պատճառը եղայ , կ'ս , անարժաթ և անկաշտու պաշտօնեան Ալլահին և աղօթքին» :

Ու լացաւ Տէրվիշը , և թորչումած գէմքը ծածկեց երկու ձեռքերո՛ւն մէջ ու բարձրաձայն հառաչեց .

— «Ն՛ս , Ալլահ , եթէ ևս դրժած եղայ իմ ուխտին , դո՛ւ եղիր վրէժխնդիր , դո՛ւ զիս առաջնորդէ կախաղաղանի կատարը , ուր հաճոյքով պիտի քաւեմ իմ բոլոր մեղքերը , ուր հաճոյքով պիտի աւանդեմ իմ բաղմաշարչար հողին . . .

Իսկ դու , յնկե՛ր , հաւատքս ու բացած բլլամ , եթէ նման արարքի մէջ դանտում եմ . սրբարանի խրաքանչիւր տաարկան , որքան ալ աննշան բլլայ ան , նուիրական է ինձ համար և օժուած , և պիղծ բան է անանց վրայ աչք յառելը . կ'երդնում ահաւոր Գուբանին վրայ թէ՛ ևս չեմ եղած յնաւ ջահը իր տեղէն առեւանդողը , վա՛յ այն անդորին որ կարող չէ ինքզինքը պաշտպանել , վա՛յ անոր որ ձայն կարող չէ բարձրացնել , իր դատը

պաշտպանելու՝ արդարութեան սրահներուն մէջ . վա՛յ
անոր որ անարդարներու և զաղիքներու բովանդակ մեղ-
քը իր սևսին բեռցուցած , ինձ նման իր օրերը կ'անցու-
նէ այս մութ նկուզներուն մէջ , ցնորած և զառամեալ ,
ինչպէս եմ այժմ . հոգ չէ՛ , ևս պէտք է մեռնիմ՝ բայց
ազատ խիղճով և անվախ , պատրաստ գրկելու անսեփե-
ւեթ գաղաղը , որը իմ ձեռքովս գամած եմ արդէն ,
հաւաքած փայտի կտորներովս . . . »

Չուղեցի լսել այլևս կրօնքի և բարոյականի մարդը
ու հեռացայ իր մօտէն , հոգիս անձնատուր դժբախտ
խոշտանգումներու և չարչարանքի . . .

Յաւիտենական , դանդաղ , միշտ նոյն անձն է սա
Տէրվիշը :

Առտուն , մի՞նչաղին , երբ տակաւին շատեր կը խոր-
դան իրենց անկողիններուն մէջ , ան , յաւիտենի Տէրվի-
շը , հրապարակ նկատուած է արդէն անշարժ , անխօս ,
անաւոր լռութեամբ :

Ճնորած մարդ . . . »



Է Տ Է Պ Ե Լ Ի

Նախապատմական դարերուն, Յունաստանն էր, այն փառքիկ հողամասը, բովանդակ ծանօթ աշխարհի մէջ, որուն ամէն մէկ անկիւնը, որուն ամէն մէկ բարձրութիւնն ու խորութիւնը իր հետ թանկագին յիշատակներու շարք մը կը բերէր, մերթ արիւնի՛, մերթ յաղթութեան և մերթ գեղեցիկ յիշատակներ. իսկ անկէ վերջ, աւելի պատմական դարերուն, Ասիական Թուրքիոյ այժմու ընդարձակ հողամասն է, որ ծածկուած է, դարերու հալովման հետ, կրօնա-մարտական ահաւոր դրուագներով, սկսեալ Աւրարաուէն մինչև Տրովադա, Պոնտուէն մինչև Ասորեստան: Յունաստանի գեղեցիկապաշտական կրօնիքով, Արևմտեան Ասիոյ մէջ, յայտնութեանական կրօնները ծայր սուրին, որոցմէ վերջինն եղաւ Բաղամական կամ Մուհամմէտի դաւանանքը: Թիւտավէնափիկեարի վիշալութիւն մէջ, չկա՛յ հողամաս մը, որ Բաղամութեան յիշատակովը թաքնուած չըլլայ, թէև յաճախ տխուր ու յուսահատական:

Իրա՛ւ է, կրօնքները եղած են գեղարու սափ ու գրականութեան սնուցիչ հիւթերը՝ մինչև Վերածնունդի դարը, իրա՛ւ է թէ կրօնքները կանգնեցուցած են հսկայական սոցիթարանները, իրա՛ւ է որ, հայեկան կեանքի ամէնէն վե՛ճ ծնունդները, գեղարու կտա և գրականութիւն, կրօններու յղացումներ են, իրա՛ւ է որ սաստուածային սաճարները մարդիկ կանգնեցուցած են ու գարգարած, սակայն ճարտարապետական հրաշալիքներու քով, կողք կողքի բարձրացած են նաև գեղարու կտար գերեզմանոց խեղճութիւններ, անկենսունակ և յուսահատ

Գժուար իսկ թէ, մարդ փնտռել ջանայ, այս ընդարձակ գաւառի մէջ, Իսլամութիւնը յայնարեքող ձեռակերտ մը, բեկոր մը գէթ, Գորտուայի, Սէվիլի կամ Կորնտաի հայաչէն բարձութիւններէն, գժուար իսկ թէ մարդ փնտռել ջանայ արարական մեծապայծառ միտքի ծնունդ Ալ-համպրայի ահաւոր գեղարուեստէն բեկոր մը: Ինչոր արարական է, թրքական չէ՛ եղած, ափսո՛ս: Հոս, կեղծիքի և սուտի հիմերուն վրայ բարձրացած է կրօնաւեր ձեռակերտ գեղարուեստը. հո՛տ, անարդ ու ազեղ մտածունն է բարձրացած Բիւթանական, Քաղղէական ու Փոխգեան գեղարուեստի անչայտ աշխատներուն վրայ . . .

Շարաթ կէս օրէ մը վերջ, Ռւսուսնարանի բաժնին աշակերտները, գաստիարակներու ուղեկցութեամբ, կ'առաջնորդենք թուրքերու թաղը բարձրացող մզկիթին շրջափակը, ուր դարձող տէրվիչ մը մեզ կը հիւրասիրէ և մանրամասն տեղեկութիւններ կուտայ այդ մզկիթի մասին, որուն պահապանն ու պաշտպանն է ինք: Իսկոյն ուշադրութիւնս կը գրաւեն մզկիթին, որ համակ քարաչէն է և մտաւորապէս Բիւղանդական ճարտարութիւն, սիւներն ու ճակատի մեծ քարերն, որոնք ամբողջովին ծածկուած են յունարէն արձանադրութիւններով, խաչերով և շիրմային վերաառութիւններով: Հո՛ս այ քրիստոնէութիւնը, իր պատեանին մէջ, պինդ կերպով սեղմած ու ամփոփած է կարծես, Իսլամութեան բոլոր խորհուրդները. քրիստոնէութեան դրօշմը կրող քարերու մէջ է որ, դարձող հարիւրաւոր տէրվիչները իրենց ալելուան կ'երգեն, և Մուհամմէտի անունը կը կարդան, Եհովայի անունէն անմիջապէս վերջ:

Տղայութեանս կը պատմէին թէ: Պոլսոյ Չամլըճոյի ստորտար բարձրացող մզկիթին յարակից մինարէն իր

վրայ կրող երկաթէ խաչովը կանգուն կը մնար, և թէ անոր ջնջումը կը կործանէր ու հիմնայատակ կը քանդէր քոլոր շէնքը: Կը մտածեմ • արդեք այս մզկիթն ալ իր գոյութիւնը կը պարտի իր սիւներուն ու բարձրաքանդակներուն, խաչերով ու հրեշտակներով լեցուն:

Առաջնորդ տէրվիշը մեզ մի առ մի ցոյց կուտայ աղօթարանին պատմական վայրերը, ու կ'առաջնորդէ մութ ու խոնաւ նկուղէ մը ներս, դէպի ստորերկեայ գաւիթ մը, ուր կրանիթեայ լուսեան և խորհուրդի մէջ քովէ քով կը հանդչին երեք նշանաւոր շէյխեր, կանաչ, դարձդարձիկ փաթթոցով: Տէրվիշը երկիւղած օրէն կը հանէ իր գլխանոցը և հանգիստ մաղթող աղօթքներ կը մրթմրթայ, լուսեան մէջ երկարող շիրիմներուն:

Դուրս կ'ելլենք հողիներու տունէն տէրվիշը կրկին մեզ հետ է, և թանկագին աւանդի մը պահնորդի երևոյթով մի առ մի ցոյց կուտայ մզկիթին շրջափակին մէջ քովէ քով բարձրացող խցիկներու շարքը, ուր, իւրաքանչիւր յարկի տակ, կ'ապրին միաբան տէրվիշներ, մաքրակրօն ու կնոսաիկեան, միջնադարեան կենցաղով խըստակեաց տէրվիշներ:

Հրաժեշտ առնելէ վերջ առաջնորդ տէրվիշն, ուսանողները կը խնդրեն այցելութիւն մը տալ քաղաքին վրայ իշխող, բարձրագիր, Շէյխ Էտէպ Ալիի դամբարանին • Օսմանեան պատմութեան մէջ առանձին յիշատակութեամբ նշանաւոր այս թուրք գրադէան ու մանկավարժը երկար տանէ ի վեր հետաքրքրութեան առարկայ դարձած է քաղաքին ուսանողութեան, առհասարակ Ու գաղթականներու հիւղակներուն մէջէն կը բարձրանանք դէպի վեր, դէպի սպիտակ շէնքը, ուր, նոյնքան խորազղեցիկ լուսեան մէջ հանդիպած է Սուլթան Օսման

Ղազիի կնոջ՝ Քէֆսէր հանրմի հայրը, Շէյխ Էտէպ Ալի :
 Էզանի պահն է արդէն. երկաթէ սիրուն դուռէն
 ներս, բակին կեդրոնը բարձրացող դամբարանին մէջ,
 քաց դուռէ մը կ'երևի փաթթոցաւոր աղօթասաց մը, որ,
 երեսը դէպի հարաւ, կ'աղօթէ, կը բարձրանայ ու կրկին
 կը խոնարհի : Չեմ ուզեր խանդարել աղօթասացը և
 աղաքը կը զգուշացնեմ ներս նայելէ : Կրօնաւորը արդէն
 նշմարած է մեզ և հոտը առած կարծես եւրոպացի զբօ-
 սաչքջիկներու, որոնցմէ չէ ակնածած անշուշտ քանի մը
 լումայ կորզելէ, Իսլամութեան և դամբարանին անուշով :
 Նշանացի կերպով, կրօնաւորը, ներս կ'առաջնորդէ, մեզ .
 կը խանդարէ իր աղօթքը, և երկար փախաթ մը տարա-
 ծելով մաքուր և մարմարեայ բակին մէջ, կը ստիպէ մեզ
 նստիլ, մինչև իր աղօթքի վերջը : Խոր լուսթեան մէջ նե-
 րողութիւն խնդրելով. կրկին կը քաշուի ներս, և կը շա-
 րունակէ իր ընդհատած աղօթքը : Ակամայ կը յիշեմ
 քնաչքջիկ կիները, որոնք փակ աչքերով դուրս կը խո-
 յանան ննջարանէն, կ'իջնեն վար, դէպի խոհանոց կամ
 սեղանատուն, և ամէն բան կարգադրելէ ու յաջորդ օր-
 ուան պատրաստութիւնները կանխատեսելէ վերջ, կրկին.
 նոյն այդ փակ աչքերով, կը դաննեն իրենց անկողինը,
 անկուր, անողգայ . . .

Աւարտած է արդէն իր աղօթքը, ու ակրվիչը, եր-
 կար համբիշով, կ'ողջունէ մեզ բոլորս, և շափաղանց
 կ'ուրախանայ մեր այցելութենէն, ու կ'աւելցնէ նաև որ
 օտարազգիները առաջին այցելութիւննին, քաղաքին մէջ
 այս դամբարանին կուտան, իբրև պատմական սուազ սրբ-
 քալայր . . . : Հօճա Ալի Էֆէնտին, դամբարանին աղօթա-
 սաց պաշտօնեան, ներս կ'առաջնորդէ մեզ և ցոյց կու-
 տայ Շէյխ Էտէպ Ալիի դամբարանը, Քէֆսէր և Նուր հա-

նրմներու շիրիմներուն միջև, կանաչ ծածկոցներու տակ, դադաղաձև, զարդարուած պարսկական ծանրագին շալերով և շողշողուն ձեղնաջահի մը տակ, զոր Սուլթան Համիտ Նուիրեր է, Օսման Ղազիի արժանի՝ դուռակը . . . : Առաջին առիթով, կը հարցնեմ առաջնորդիս .

— Հօճա էֆէնտի, դուք հին մարդ էք, դուք կարդացող և աստուածավախ մարդ էք, ըսէ՛ք, խնդրեմ, ունի՞ք որոշ ապացոյցներ և փաստեր, հաստատող թէ այս շիրիմներու տակ իսկապէս Օսման Ղազիի կրօնուսոյց և դաստիարակ, Շէյխ Էտէպ Ալիի և Քէֆաէր ու Նուր հանրմներուն ոսկորները ամփոփուած են . ի՞նչ կ'ըսէ, արդարեւ պատմութիւնը և ս'ըջան հին են անոր ազբիւրները :

— Դամբարանին ստուգութիւնը հաստատող պատմական ազբիւրներ ու աւանդութիւններ չստան հին ջենդժրազգարար . հողիւ հարիւր տարուան հետեւիւն ունեցող ձեռագիր պատմութեան մը մէջ կը հանդիպինք վաւերական հաստատութեան մը, և սակայն հակառակ պատմական և ինձ համար անկարևոր նկատուող ստուգութեան մը գոյութեան, ունինք շտ'առ աւելի կենսական ու շտառ աւելի գերակշիռ ու ցնցող վկայութիւն մը, որ թանկագին է ըստ Օսմանցիներուն համար . . .

— Արդեօք, հօճա էֆէնտի, կրնայի՞ք բացայայտ խօսիլ ու արտայայտուիլ, և հետաքրքրութեանս գոհացում տայ . պատմական, աւելի վաւերական ի՞նչ փաստ կրնայիք ունեցած ըլլալ, դամբարանին իրական գոյութիւնը հաստատող :

— Այո՛, շտառ աւելի իրական, որովհետեւ այդ վկայութիւնը հասարակ մահկանացուի վկայութիւնն է, այլ բարձրագոյն հաստատում մը . . . խալիֆայական . . . : 1301

Թուականին, կը յարէ Հօծան, Ապախւլ Համիա երազ մը կը անանէ, ուր իրեն կը յայտնաստուի, թէ, սա բարձունքին վրայ, անյայտ քարերու և աղբակոյտներու սակ, Շէյխ Էսէպ Ալիի և իր հեռեորդներուն սակորները թաքնուած են, և թէ զանոնք պէտք է փոխադրել առանձին դամբարանի մը մէջ, որովհետեւ անոնց հոգին խուճած է այս պահուս: Ու Ապախւլ Համիա, կ'այլայլի այդ ահաւոր յայտնութեան առջև և նշխարները անյայտայտ գէմքերու ոգիները կը հալածեն զինքը: Յաջորդ առատ, կը հրամայէ երեք հարիւր սակի յասկացնել դամբարանի շինութեան և իսկոյն հոն փոխադրել հահատակներուն սակորները:

— Բայց, Հօծա էֆէնտի, կը յարեմ, այս փոքր շէնքին անկարելի է երեք հարիւր սակի ծախք նշանակել, այնքան պարզ է ու անսխեխ . . .

— Իրաւունք ունիք, կը յարէ աղօթքի պաշտօնեան, այդպէս մտածելու. Ապախւլ Համիա մարդիկը հոս եկան և հազիւ թէ հարիւր սակի ծախսեցին դամբարանին ամբողջական շինութեան, մնացածը իրենք կերան, Մուհամմաթի անարժան դաւակները . . .

Բամուած ենք արդէն դամբարանէն. ու բոլորս մէկ կը մտածենք. հո՞ս ալ խարդախութիւն ևւ նենգութիւն, նոյն իսկ պաշտելիներու շիրիմներուն վրայ, հո՞ս ալ երազներու մեծ մարդուն, Համիաի կաշառակեր պաշտօնեաները . . .



ՀԷՅ ԿԱԶԻԼԷՐ...

Պալքանեան պատերազմի յաջորդ օրերուն էր. զօրահանութիւնը իր ծայրագոյն խստութեան հասած էր և զինուորութեան տարիքը թեւակոխող բոլոր հպատակները պարտաւոր էին հագնելու իրենց հանդերձները, և ազդանշանին սպասել՝ մեկնելու համար Ռուսելի մահադատը, որովհետեւ Օսմանցիութեան նուիրական պատիւը պահպանել պէտք էր, դարտար պատիւը, աշխարհակալութեան պատիւը, որ երբեմն իշխած էր Ճէպէլ-իւսթարիզէն մինչև Պարսկային ծով, Վիէննայէն մինչև Թուրան, որովհետեւ քրիստոնեայ ազգութիւնները խաչին ապաւինած կը քալէին դէպի առաջ, դէպի մզկիթներու աշխարհը, ուր կեղծիքը այնքան առատ է, ուր արդարութիւնը երազ է, և ուր սակայն զուլումն ու կախաղանը կենդանի, մարդիկ անասունի հաւասար. վանձանոր, որ կը յանդգնի, արդարութեան համար, գլուխ բարձրացնել :

Ահաւոր էին սողմագաշտէն համառ լուրերը. ստակալի էր կոտորուողներու և վիրաւորներու թիւը. ու կը պատմէին, ծածուկ կերպով, թէ թշնամի բանակը մօտատեննէն պիտի դրաւէր Ադրիանոսի պատմական մեծ քաղաքը, Ռալիֆայութեան նախկին բնակավայրը : Նայնքան ահաւոր էր նաև լուրերուն թողած տպաւորութիւնը, մանաւանդ մոլեռանդներու վրայ, մանաւանդ աղօթքի պաշտօնեաներէ, առաջնորդուած հօտին վրայ, որոնք պատ, պատ քաշուած, ստակալի մեկնութիւններ կուտային չարարատիկ լուրերուն : Կաղութիւնը դառն էր. պէտք էր Ալլահին ապաւինիլ . Աստուած միայն պիտի կարենար

իր դաւաւոր հպատակներուն և երգուեալներուն կեանքը
դէպի երջանկութիւն առաջնորդել, և զանոնք յաղթա-
կան դուրս հանել աղէտալի պատերազմէն:

Ու հաղարաւորներ էին, որոնք զինուորի պարտա-
կանութիւնը և մախաղը ուսերնուն, փառաւոր տողանց
մը վայելել կուտային քաղաքացիներուն: Հազարումէկ
դիչերներու պատմութիւններով դրուագուած երկու հին
սաղ, սրճարանէ մը փոխ առնուած, ձեղքած ջութակ
մը՝ քանի մը վարձկաններու ձեռքին, կ'առաջնոր-
դէին ռազմադաշտ մեկնող զինուորներու ջոկակար,
հարիւրաւոր հեռաքրքիրներու բանակ մը թողած իրենց
եափն, երկու սեռի պատկանող: Մուհաճիքներու տարա-
զը յատկանշող կարմիր ծածկոցներու մէջ սեղմօրէն պա-
տանքուող խելայեղ կիները աւելի տխրաւեօիլ էին,
քան մեկնող զինուորները:

— Ա՛խ այն քրիստոնեանե՛րք, կը մուշտային անոնք,
անխիղճնե՛րք, որ պատերազմ հրատարակելով որք կը
ձգէին մեր մանուկները, ու մեր Հարէմի հեշտավառ
կեանքը կը դառնաղնէին, մեր անկողիններէն խլելով
մեր կարիճները... ապերախանե՛ր...

Թափօրը կը յառաջանար դէպի կայարան, ուր բեռ-
նորարձ կառաչարներ պատրաստ կը սպասէին դէպի Պո-
լիս և ապա մահադաշտ փոխադրելու հայրենիքի այդ
կարչնեղ բազուկները:

Իրիկնամուտ էր և նորածագ լուսնի մահիկը կ'առաջ-
նորդէր դժբախտ զօրախումբը դէպի պարտականութիւն,
դէպի սուսերամարտը, թրակեան լեռնադաշտերու կա-
տարին:

Վայրկեան մը վերջ հայրենարազձութեան կեանքը
ապրեցայ. մանկութիւնս վերջիչեցի հայրենի տանս մէջ,
ծննդավայրիս կարօտը խմեցի, հո՛ս, հեռաւոր երկինքի

մը սակ, Օսմանցիութեան օրրանին այնքա՛ն մօտ, և հայրենիքէս փարսախսներով հեռու, Հայաստանի Հայերո՛ւն կարօտ . . .

— Հէ՛յ Կագիլե՛ր, եօլ կեօրիւնիսի . . .

Ա՛հ մահուան ահարկու կսկիծէն աւելի դառն, աւելի սոսկալի է բաժանման կսկիծը, բաժանո՛ւմ խմբովին, ու թերևս անգամ մըն ալ ետ չդառնան այդ հսկայ բազուկները, որոնք պիտի գիտագրեն քաղաքակրթութեան յղացած, քաղաքակրթութեան բազուկներով դարբնուած դժսխային գործիքներուն, կուրծք պիտի սան մահաանուսիլ գնդակներուն, ու պիտի իյնան աշնանային ցօղով զօվացած դալուկ դաշտագեանին վրայ՝ աչքերնին յառած լուանի հառաչաւոր մահիկին, և ականջնին լարած գէպի հոս, գէպի Մեծ Անտառուէն, հայրենի վերջին խաղրիկ մը լսելու իրենց կիսաքանդ օձախէն, պղտիկ ձագուկներէն ու հարեմէն . . .

— Հէ՛յ Կագիլե՛ր . . . ու նուազի այդ չքուոր գործիքները, փայտի այդ ահաւոր ծամածուծիւնները հողի կր ստանան, կր թռչան կարծես, կուլան ու կր լացնեն և կու սժգճօրէն անգամ մըն ալ կր չիչեմ հայրենի հողս, ծննդատեղս, ուր նոյն եղանակը կր յանկերգուէր՝ ամէն անգամ որ կարմիր չգարչով ծածկուած հարս մը հրածեչս կ'տանէր իր ծնողքէն, չուղելով թողուլ իր սուներ՝ ուր սպրեցաւ, իր օրօրօշը՝ ուր հեծեց ու յնացաւ և բաժանո՛ւմ . Արեւելքի յառուկ ճակատադրային սխառատափրական բառ . . .

Ու գիտե՛լ և մանտանո՛ց ապրիլ ու զլոյ պէտք է այն վայրկեանի սպաւորտ թխներ, երբ կայարանի թաթար պաշտօնեան, կոչնակահարը, առաջին սղգանչանը կուտայ, հինոյ բապէ վերջի մահու չտի կատաղի անաս-

բանին բոլոր ահաւորութիւններուն պատրաստելու մեկ-
նողներն ու մնացողները: Որո՞ւն վիճակած է արդեօք
չարագոյն բախար. մեռնողին թէ մնացողին. որոշելը
չառ դժուար է, թէև կ'ըսեն թէ մեռնողին համնող զու-
լումը աւելի մեծ է քան ապրողին. ո՛վ գիտէ...

Յոգնախուռն բաղմութեան մէջէն լաչակաւոր կին
մը խելայեղօրէն կը ճեղքէ կ'անցնի, ճանապարհ կը խըն-
դրէ, կ'աղերսէ. խեղճը լսեր է կոչնակին առաջին աղբը
ու կը շտապէ: Կը դանկ վերջապէս իր ամուսինը ու մեծ
շիշ մը օղի կ'երկարէ. հէք կինը մոռցեր էր իր հետ առ-
նել բաժանումի բոլոր դանտութիւնները իր մէջ անկա-
ցնող աչք հեշտալի լմպելին: Օղի՛, զաղրելի՛ հեղուկ,
որ սակայն աստուծոյ մը, կուռքի մը և կնոջ մը շափ
պաշտելի է, յիմա՛ր լմպելի, որ սակայն ամենամեծ
մխիթարութիւնն է, երբ կոչուած է ցաւ մը, վիշտ մը,
մանաւանդ սիրելիի մը մահը մոռցնելու: Ան, Արևելքի
խորհուրդն է, սկսեալ հաշիշամոլ Չինաստանէն մինչև
Եպիբոս, ուր առատ է որթատուէկը, Արևելքի՛ն, որուն
աստուածն ու խորհուրդը ազխութիւնն է, կրօ՛նքը, ուր
գիտական և բանասոր մխիթարանք չկայ, ո՛չ մխիթա-
րելը և ոչ մխիթարուիլը:

Օղին, ու վաղրի մը շափ կատաղօրէն կը խլէ զայն
ու պարեգօտին կ'անցունէ, ազատ, համարձակ, նոյն
խակ հարիւրապետ սպային առջև, վասնօղի ա՛ն ալ,
սպան, մարդ էր, բնաանիքի հայր, օրհասական ու դող-
գոջուն ճնողքի մը զաւակ, ան ալ ունէր իր օղին, իր
հաշի՛շը, որով մտնալ պիտի բաղձար իր կափն թողած
արցունքի խոչոր ու լայն անջրպետը, լացի ու կոծի հո-
վիար: Արդ, ամէն զինուոր ազատ էր խմելու, իրարու
կենաց պարտելու, մանաւանդ որ հրաշալի հեղուկը քօ-

լէրայի դէմ սիրտիարար և հակաթոյն մըն էր, մեռցնող թէ՛ ֆիզիքական և թէ՛ հոգեկան վէրքերու բովանդակ մանրէները. պատուական դեղթափ . . .

Մեկնումի ահագանգը լսուեցաւ . փոսացած, խորունկ աչքերով թաթար երխաասարդը զարկա՛ւ երրորդ անգամ, ու սոսկումով դիտեց իր շուրջի սեւասրանը, իր բովանդակ զարհուրանքով . դիտեց որ կառաչարբ, գժսխային աղաղակներու մէջ, լայի և կոծի մէջ իր անխւները կը շարժէր դանդաղ, մահու չափ ախուր գնացքով . մինչդեռ սգաւոր նուագախումբը ետ կը դառնար, բազմութեան առջեւն կրկնելով իր երգը, և վաղուան ու յաջորդ օրերու նայն վարձկան պարսականութիւնը կատարելու պատրաստ . . .

— Հէյ կապիւէր . . .

Ու ամբոխը, անէծքը շրթունքին, կը վերադառնար քաղաք, իր ետին թողած հսկայ կառաչարբ, որ այնքան ճիւղաօրէն իր ճնշող երկաթէ վանդակներուն մէջ ոչ խարի նման բանասարկած էր իրենց հոգեհաստները, շարժուէ՛ դուրկ, կաշկանդուած, անզօր, մինչդեռ վերջին սալօն-վակօճին մէջ, իրենց երխաասարդ սպաները հանգիստ կերպով երեկոյեան ընթրիքը կ'առնէին, ճոխ ճաշատեղանի մը առջև՝ վայրկեան մը վերջ դայն թղթախաղի յատկացնելու հաստատ մտադրութեամբ անշուշտ թղթախաղն ալ պէտք էր, վճուելու համար իրենցմէ իւրաքանչիւրին բախար, վախճանը պատերազմի դաշտին վրայ, Պալքաններէն սողին . պէտք էր փորձել բախար, դիտնա՛լ թէ իրենցմէ ո՞րը արդեօք պիտի իյնար՝ մահամերձ հայրենիքի սիրուն . . . ու կարծես կը լսէի բախար թուղթերուն շատա՛չը, իրար բողբոսելու անախորժ ձայնը, կառաչարբին վերջին յարկարածնէն . . . բաղասախաղի երկի՛ր, հո՞ս ալ . . .

Երկու օր վերջն էր, Չորեքշաբթի մը կարծեմ, կէսօրուան մօտ, երբ ուսումնարանին թուրքերէնի ուսուցիչը՝ Մահիր Թէվֆիգ էֆէնաի, երիտասարդ, վառվռուն ձեռն մը, երկար մազերով, գաւառիկ խմաստասէր մը, խորհրդաւոր գրտերեւոյթով, անժամանակօրէն մուտք գործեց ակօջարանէն ներս, սովորականէն տարբեր երևոյթով մը, քիչ մը յուզուած և շուարուն: Երեք տարուան լնթացքին չկրցի իրեն հաշտեցնել գոց տեղ մը մտնելէ առաջ անգամ մը դէթ դրան դարնելու սովորութիւնը: Հիանալի մարդիկ, որոնք խմաստասիրութիւն կ'ուսանին, քաղաքականութենէն կը ձառեն, բայց չեն յօժարիր բնաւ քաղաքովարութեան քանի մը տարրական պարտականութիւններուն իսկ ծանօթանալ:

— Ինէ՛ր ըլլայ, Մահիր էֆէնաի, այսքան կանոնիս, բայց դեռ կէսօր չէ, և ձեր գտներուն աակաւին ուղիղ երկու ժամ կայ...

— Միւսի՛ր պէյ, կը բացագանչէ հառաչաւոր շեշտով մը, յատկապէս եկայ խնդրելու համար որպէս զի թոյլատու գանուիք կէս օրէ վերջի բացակայութեանս: Երկու եզրայրներս զինուոր կանչուած են և ստիպուած եմ այժմ դրամատուն երթալ, ու վաթսուն ոսկի հայթայթել իրր փրկանք, պատանդ ձգելով կնոջս ու մօրս մարդարիտները, անխժեհա՛լ բախտ. ու լացաւ բարի երիտասարդը: Ի՛նչպէս զինուոր դրկել իր երկու եզրայրները, երբ իր ուսերուն վրայ ծանրանալը պիտի տեսնէր անոնց կիներուն ու զաւակներուն նիւթական ու բարոյական, և մանաւանդ նիւթական բովանդակ պարտականութիւններուն: Խեղճը հալիս երեք հարիւր գահեկանի վախ թոչակ մը կը ստանար, իրիկնադէմի օղիին գինը միայն, այս անուշ երկրին մէջ:

— Բայց, Մարտիր Էֆէնաի, դուք սկիզբէն ջերմ պաշտօնական էիք պատերազմին, իբր երդուեալ Իթթիհատական, ինչպէս այժմ կը վարանիք զինուոր զրկելու ձեր եղբայրները ու մտատանջ էք այսքան . . .

Ու սկսու վախ ու երկար մասները պարտցնել իր առատ մաղերուն մէջէն և դուշեց .

— Միւտի՛ր պէյ, հաւատացէ՛ք կծու են ձեր ակնարկութիւնները, դիտեմ ամէն ինչ, բայց դուք ծանօթ էք իմ նիւթական գրութեանս, անկարող եմ եղբայրներուս ընտանեկան պարագաները հոգալու, ժամուանդ որ իրենցմէ ալ շատ փոքր եմ տարիքով, ու ես ինքս ալ ամուսնացած, և ուսուցիչ . . .

Արքան աժան են, կը խորհիմ, պէյերը, սա մեծ ու փառաւոր երկրին մէջ, և անախորժութիւն մը կը դդամ ամէն անգամ որ այդ բար կը լսեմ շուրջս, ու ակամ մայ ես ինքս ալ կ'արտասանեմ : Բայց ինչո՞ւ այս անախորժութիւնը, կրկին կը խորհիմ, երբ օրօրացի երախաներն անգամ մէյմէկ պէյեր են, և սարսղացին փաշաներ անշուշտ, վեզիրներ . ու չէ՞ որ այժմու մեծ վեզիրներու, փաշաներու և պէյերու մայրերը ժամանակին նոյն յանկերդով դիեցօցեր են զիրենք, և պէյ ու փաշա կոչեր են, ամէն անգամ որ զիմադարձ բնթացք մը տեսեր են իրենց հանդէպ, կամ զգու եր զանանք, երբ խմաստուն ու աշխատող եղեր են :

Կը հաւանիմ խեղճ սրտօնեկ իր արդարացի բացակատութիւնը, արդահատելով անշուշտ իր դժնդակ կացութեանը վրայ : Յիրաւի, խիստ դարմանալի կ'ըլլան սա մեր երկրին խմաստաւորները . . . : Պոլիս, բնակած թաղիս մէջ, Թէյլեսօֆ Տօքթէօր Քիզա Թէվֆիկը, իր երկար մաղերով և իր Ակոմտական զխմաղծովը, հազիւ կորսնցուցած,

հո՛ւ , գաւառի անկիւնի մը մէջ , կը գտնէի Յէյլէսօֆ
Մահիրժ, Վիֆիգր, նոյն քան երկար մազերով, տէրվիչավա-
յել կենցաղով, բարեմիտ և սակայն չափազանց խառնուող
քսողաքական հարցերու :

Սակայն, խեղճը պատճառ ունի եղեր իր մազերը
երկարելուն, և արդարացի պատճառ . . . :



ՄԻՍԱՖԻՐԻՆԵՆԷ... ---

Իրիկնամուտ է. ցուրտ, խոնավ և մառախլապատ
իրիկնամուտ մը, Անաստուրի այս բարձրաւանդակին յա-
տուկ միայն: Կառաչարէն դուրս եկող ախուր վայոցը հո-
գիս կը լեցնէ, կը բարձրացնէ հիւանդ թոքերս, ու կը
չարչրկէ հոգիս, ու բնազդաբար մտածումս դէպի հոն կը
սեւեռի, դէպի երկաթեայ վանդակները, դէպի ամբողջ-
ուած ու պատնէշուած խցիկները, ուր մարդկային մար-
միններ, իրարու վրայ դիզուած, խրաքանչիւր կայանէ
կայան, պատառ մը չոր հացի կարօտ և պուտ մը ջուրի
ծարաւ, վար կ'իջնեն իրենց բանասարաններէն, և ազա-
տութիւնով յիմարանցած վտարանդիներու պէս, լայն
օդով կը շնչեն, կը մաքրեն իրենց թոքերուն բորբոսնած
ժահրը, և կուշտ ու յագեցած, կրկին կը մանեն, ոչխար-
ներու յատուկ բնազդային համակերպումով, իրենց սրա-
հէն ներս, կրկին պատանեքուերու՝ երկաթեայ խցիկներու
մէջ: Կառաչարին առջևէն, տոխձի մը պէս մանչելով սո-
ղաղող, երկաթեայ կամուրջներու վրայէն վազրի մը պէս
սրաղող վայրաչարժին սուլոցը կրկին կը շարչրկէ սիրտս
ու հոգիս, մանաւանդ այն բուպիկն, երբ հսկայ կառաչա-
րը քաղաքին ծայրը հասած, կանդ կ'աննէ, պահ մը, և
ախսւր, մահու չափ ախուր շեշտերով, իր գոյութիւնը
կ'զգացնէ, իր ժամանակ մը աւելի, քաղաքին բնակչու-
թեան: Վայրաչարժի յամբ գնացքով կը յառաջանայ, և
իբր ետևէն քարչ կուտայ հսկայ կառաչարին, սրուն խ-
րաքանչիւր լուսամուտէն մարդկային գլուխներ, հիթրա-
ներու նման, վար կ'իյնան, գոնադան գիծերով և սյրա-
դան տարազով: Կառաչարը, հողիս իր անխները շար-

ժելէ դադրած, ահա, մէկ ոստուժով, կը բանայ իր գրու-
 ները և մարդկային հեղեղներ, խելայեղ շատապով, դուրս
 կը խոյանան, մինչ անտիրա պաշտօնեան կը յան-
 դիմանէ զիրենք, կը սասաէ նոյնիսկ ու կը հայհոյէ
 իրենց արդար հապճեպին համար: Թշուառներ, կը մտա-
 ծեմ, իրրև թէ իրենց ամիսներ ու օրեր տեսող հետիտան
 ճամբորդութիւնը բաւական չլլար, իրրև թէ իրենց զին-
 ուարի հանգամանքը անբաւական չլլար, և ահա, պաշ-
 տօնեայ մը կը կշտամբէ զիրենք, իրենց քիչ մը փութ-
 կոտ շարժումին համար...: Թշուառներ. իրենք,
 որ հայրենի օջախն էին լքած, Հայրենիքի սիրոյն համար,
 իրենք որ հայրենի աաքուկ արեւն էին զրկուած, այս
 ցուրտ ու խոնաւ օդը չնչելու, իրենք որ, այս սիրեց-
 եայ վաթանին համար, առաջաւոր Ասիոյ խորերէն մեկ-
 նամ էին, Թեասաղեան կիրճերը ձեղքելու: Արարական
 ազնիւ, զգաստ ու շարքաշ ցեղին խորխղիւս թեկորներն
 էին, անապատի ժուժկայ դաւակները, Ալլահով ու մար-
 դարէով անամ ու զօրացած...:

Ու կ'անցնին, հսկայ տողանցով, կ'անցնին լուրր
 մէկ, առանց հսկողի, առանց առաջնորդողի մը նոյն իսկ,
 և սակայն կարգապահ, անխօս, անապատ հայրենիքի ան-
 բարբառ և անխօս բնատոհմիկ դաւակները...:

Հովր կը փչէ ուժգնօրէն, և անապատի դաւակնե-
 րուն պատառատուն և դուռնաթափ քղանցքները վեր կը
 բարձրանան, ցուցադրելով ահաւոր և ցուրտ մերկութիւ-
 նը իրենց արեւահար և մոմատիպ սրունքներուն: Անա-
 պատի աաքուկ աւաղներուն տեղ, ամիսներէ ի վեր սառ
 կարած ձիւնին վրայէն կը քայլեն խեղճերը, և սակայն
 հողիս կը վկայէ թէ գո՛հ են անոնք, աարաշխարհիկ
 սառչոտ երկինքին սակ, գո՛ն, իրենց թոքերը լայն ու

ցուրտ օդը կը շնչեն, որուն կարօտը ունէին իրենք՝ հայրենի վրաններու տակ :

Կ'անցնին բոլորը մէկ, այդ անվերջ շարքերը, յորդաօտ լոյսերու տակէն, կ'անցնին այլատարազ այդ անապատաբնակները, իրրե թէ շարժանկարին վրայ դուրսդրուած անշունչ էակներ ըլլային, այնքան հանդարտիկ այնքան լուռ ու քարացած :

Գիտեմ՝ սակայն թէ ս'ը պիտի առաջնորդուին այդ դժբախտները. դէպի հիւրանոց... : Երա՞ղ թէ իրակամու թիւն . ընդարձակ շէնք մը, մաքուր և գունաւոր քարերով բարձրացած, գետակին մօտ, սիրուն գիւղանկարի մը վրայ նայող, ասպետական շէնք մը, այդ հիւրանոցը : Գարնան տաքուկ արեւին տակ, դալար արօտավայրերու վրայ հեշտօրէն մակաղող և իրիկնամուտին, կարճորակ գոլորշիներու տակ հանդարտօրէն դէպի փարախ արշաւող նախիրին նման, ներս կը խուժեն բոլորը մէկ, դէպի հիւրանոց, դէպի հանգստարան, սա տարբերութեամբ միայն որ առաջինները կուշտ և լեցուն սաամօքսի անհանգստութեան տակ տարածուի կ'ուզեն զով փարախին մէջ, իսկ զինուորները, անտպասի նախիրներ կարծես բոլորն ալ, թէ՛ անօթի և թէ՛ հանգիտակ կարծա, ներս կը մտնեն, իրրե ջնաշխատիչի օթեան մը, իրենց բնագործացած մարմինը տարածելու, չոր տախտակամածին վրայ :

Տարիներ առաջ, երբ դեռ ուսանող էի, մահուան նստաներու և սարսուռի տակ հոգիս կը շարժրկուէր, միտերս կ'առդնատուէին ու կը գայարուէին, ամէն անգամ որ սախիթ կ'ունենայի զօրանոցի մը կամ պահականոցի մը քովէն անցնելու . իսկ անոնց սաճեկէն անցնիլ գրեթէ անկարելի էր ինձ, այնքան ահաւոր էր այդ դժոխացի շէնքերու ինձ վրայ թողած տպաւորութիւնը :

հայրենի հողիս ջարդարարները կիսովին զինուորներ էին .
 և կտրատուած գլուխներու , արիւնը տակաւին իրենց
 երակներուն մէջ տաք՝ ձեռքերու և ոտքերու , ամէնէն
 աւելի դորանոցներու առջև կը հանդիպէի , խելայեղ վազ-
 քիս միջոցին : Իսկ այժմ , ի՛նչ մեծ ու եղակի փոփո-
 խութիւն ըմբռնուամի , ո՛վ Ասատուած . համակրանքի և
 գորովի ի՛նչ մեծ արտայայտութիւն . ի՛նչ տարօրինակ
 վերաբերում և ի՛նչ խանդավառ սէր դէպի այդ դեղին
 շէնքերը , միօրինակ և միաչափ համադրութեամբ , որոնց-
 մէջ ներս ի՛նչ անձնուէր հոգիներու կուտակում , այն ի՛նչ
 զարհուրանք անօթութեան , այն ի՛նչ աղէտաւոր հառա-
 չանք , ի՛նչ երազներ ու ի՛նչ համաձարակ : Պատերազմի
 սա բովանդակ սևողութեանը ընթացքին , ո՛չ մէկ յարկ ,
 ո՛չ մէկ օթեան , ո՛չ մէկ ապաստան զգացումիս հետ
 դաշնաւորուեցաւ այնքան , ո՛չ մէկ հաստատութիւն սիր-
 տիս հետ սիրահարուեցաւ այնքան , որքան սա դորա-
 տունները , աճնուրաց հոգիներու օթեաններ , ուր ապաս-
 տանող և ռազմադաշտի վրայ իյնողներու զաւակներէն
 կազմուած որբանոցները պիտի հանդիսանան վաղուան
 գուրգուրանքի առարկան , վաղուան պաշտամունքի բա-
 գինը :

Ու դէմքերու և տարազներու ի՛նչ վեղեցիկ դաշնա-
 ւորում հոտ . պետութեան չորս ծագերէն ատհմիկներ զի-
 բար կ'ողջագործեն . հայր կ'ողջունէ՛ երջանիկ Արարիոյ
 ծնունդները , Կարնոյ և Երիզայի բանակավայրերը իրենց
 անդամները ունին , կեղբոնական Անաստուի դորական-
 ներուն մօտ , յոյն , թուրքն ու հրեան կ'ողջագործուին ,
 բոլորն ալ օսմանցի , բոլորն ալ միևնոյն սիրեցեալ վա-
 թանի ուղուրին համար մեռնելու պատրաստ , բոլորն ալ
 նոյն կարմիր դրօշին տակ երդուեալներ . . .

Տարօրինակ զգացումներու տակ, չեմ ուզեր բաժնուիլ այդ գաղջ օթեւանին շրջապատէն, հակառակ անտանելի ցուրտին և յառաջացող գիշերին • յանկարծ, նուազի մը դաշն ձայնը կը լեցնէ հողիս, միտքսակամայ փոխադրելով դէպի հայրենի բնադաւառս, Եփրատի զուլալ ջուրերուն մօտ : Արածանիի հովիտէն հոս ժամանած դինուոր մըն է, հաւանականաբար, և թերեւս հա՛յ մը, ո՞վ գիտէ, որ խորախոր լռութեան մէջ, փոքրիկ սրինգի մը փողէն, հաղարաւոր բախտակիցներու ըմբռչխնել կուտայ իր հայրենի քնարերգութիւնը : Սարսափելի է և զանակին իմ վրայ թողած տպաւորութիւնը. լսած էի միայն որ նոր փեսայացած և սիլա մեկնելու դասապարտուած պարմանիներու վրայ ձայնագրուած էր այդ կտորը, համակ զգացում, համակ դայրոյթ • զգացո՛ւմ՝ իր ետին թողած չքնաղ սչրուհին հանդէպ, զգացո՛ւմ՝ իր հայրենի հողին, ջուրին և բնտանեկան մաքուր ու սիրակէզ օջախին նկատմամբ, և դայրո՛յթ՝ դիրենք դէպի պանդխտութիւն առաջնորդող սև ճակատագրին հանդէպ : Տարագիր դինուորն ալ նոյն դառն ճակատագրին անձնատուր, ո՞վ գիտէ քանի՛ քանի՛ անգամներ երգած էր, իր կեանքի բնկերէն բաժնուելու բուպէին, արիւն արցունքի մէջ, ու բազմիցս անխժած այն մահաւէտ պատերազմը, որ քաղաքակիրթ կոչուած սա դարուն մէջ իսկ կը բաժնէ իրարմէ՛ աշխարհի ամէ՛նէն մեծ անբաժանելիութիւնները՝ Ու ճանապարհին, ո՞վ գիտէ քանի՛ քանի՛ անգամներ իր մահահատ ու անարիւն շրթունքներուն մօտեցուցած էր Եղեգնեայ այդ չքոտի նուազարանը, որուն բովանդակ պատմութիւնը սուգն ու տխրութիւնը կը և բացարձակապէս ո՛չ՝ ժպտան ու խնձիղը, սկսեալ Տրովադայի պատերազմէն, մինչև թեոսաղեան տւերները : Հաս-

հող բոլոր դիմուորներու համար վերջնիթեր կայանն է
 հաս, ուրիկ, լսուիլ կը կարծուի կարծես թնդանօթի որո-
 ւար և սուրերու շառաչը: Կառաչարը դիւրաւ կապած է
 իրենց այժմու օթեանը, մարդկային սաք արիւնով ներ-
 կուող ռազմադաշտին հետ, և նոյն մտածութեամբ, ու
 նոյն բնազգով է որ, անշուշտ, երխատարդ զօրականը
 վերջին անգամ մըն ալ շրթունքներուն կը հպէ իր սի-
 բիլի գործիքը, և աչքերը յառած իր հայրենիքին, կ'եր-
 գէ ու կը նուազէ անլնդհատ, կ'երազէ՝ ու մանաւանդ
 անոր սիրովը կը տոչորուի՝ իր կիներ, քնքոյշ ու հաւա-
 տարիմ էակ մը հաւանականաբար, որ նոյն պահուն, թե-
 քեւ իր անգրանիկ ծնունդին օրրանին առջև ծունդի նրա-
 տած, իր սաինքները կը մօտեցնէ երեխային շրթունք-
 ներուն, կաթին հետ իր արցունքները խառնելով,
 և մանուցին վրայ սառարացնելով բուրդէ թելերու կծի-
 կը, սրմէ իր վերադարձող կենակցին տաքուկ գուլպաներ
 պիտի հիւսէ: Այս այն հրաշալի պահն է, ուր երկու զոյգ
 նուազկուն աչքեր դիրար կը դիտեն, փարսախներով հե-
 ուս իրարմէ, ու դիրար փնտուկ կը ցանկանն ու չեն գլա-
 ներ: այս այն հրաշալի պահն է, ուր երխատարդ զօրա-
 կանը իր սրինդը կը նուազէ, մինչդեռ հեռուն, բնաչ-
 խարհին մէջ, իր սգաւոր կիներ իր մանուցը կը դարձնէ,
 ժպտելով իր նորարոյս երեխայի գէմքին, և անոր պճրկ-
 տուն աչքերուն մէջ դիտելով իր կենակցին աչքերը...

Գիշերը կը յառաջանայ սակաւ, ու ես սկսմայ կը
 հեռանամ այդ հմայիչ վայրէն, կը հեռանամ տարօրինակ
 նուագներու անձնատուր, ու մտածելով միտժամանակ,
 թէ վաղուան առաւօտը ինչ նորութիւններ պիտի բերէ
 իր հետ, հոպի և սիրտ մաշեցնող ինչ նոր դառնութիւն-
 ներ, հայրենիքի ինչ նոր կոկիծներ: Կը բամժուիմ օթե-

անէն, երբ սրինդի անուշ երգը կուգայ տակաւին տղ-
րեցնել զիս ծննդավայրիս մէջ անցուցած մանկութեան
ժամերս . . .

Յաջորդ աւատն, կրկին շարեքշարթի օր մը, դնա-
սրանը կուգայ հազորդել ինձ թէ հայ գեղջուկ մը քանի
մը վայրկեանի տեսակցութիւն մը կը խնդրէր ինձմէ:
Հաճոյքով կ'ուզեմ լսել զինքը, զիւղացի մը, և այն ատ
հայ և հայախօս . որքան հազուադիւար քան, թրքախօս
հայութեան այս քնդարձակ շրջանին մէջ: Աւելի կը սի-
րեմ, քնադդարար, ապրիլ ու շնչել հայ գիւղացիներու
մօտ, սրանք հեռու՝ քաղաքներու ապականող մթնոլոր-
տէն, հարազատօրէն իրենց վրայ կը կրեն հայութեան
ինքնայատուկ դրոշմները, տակաւին կոչս ու անաղարս
վիճակի մէջ, մանուսնոյ կիներք, քան թէ քաղաքի հա-
յերը, սրանք անուշով միայն հայ են, օտարացած, կլի-
մայացած, իրենց վրայ կրելով տիրող տարրին, որ մեծա-
մասնութիւնն է, բովանդակ յատկանիշներբ: Պէտք է
տեսնել մանուսնոյ հայ գեղջիւհիներու տարազները,
սրանց իս բարանչիս քին ծայքերէն Հայութիւն կը բուրի
կարծես, այնքան սեղմօրէն պահած ու պաշտպանած են
իրենք հայ բարքերն ու սովորոյթները, հայկական մա-
քուր կենցաղը . . .

Քանի մը վայրկեան վերջ, ներս կը մտնէ հայ գիւ-
ղացին. Այրնձայ մօտակայ գիւղէն է . խեղճ կը ճանչնամ
իր տարազէն, քանի որ բառական հինցած եմ այս թրքա-
խօս հայութեան մէջ . վաթսուսնի մօտ հազադարձ մին է,
արեւածար, ձեռքերուն վրայ կոչս ու կոչիտ կատրած,
խուրտս ձայնով, որ չի համարձակիր խեղճն նստիլ . մէկ
ձեռքին մէջ մեծ շիշ մը ունի, հաւանական է որ, կը
մտածեմ, շտ կոչէն գեղ գնած բլրայ, իր հիւանդ հոգե-

հասարկն համար: Կր կռահեմ անմիջապէս թէ բարի ծե-
րունին վիշտ մը, ասորս մը ունի անպատճառ, և եկած է
հաւանականաբար դարձանս մը խնդրելու:

— «Պատուելի՛, խնդրանք մը ունիմ ձեզմէ. կարի՞ճ
զաւակս վեց տմբուէ ի վեր դո՞ւք սոււած եմ. մինչև
երեք տմբոս նա՛մս, կ'ստանայի իբ՛նէ, բայց անկէ ի վեր
լուք մը չունիմ. իր հետ գաշտը ցնկերնեքն ուլ բան մը
չեն գրեր. շեմ գրանքս ո՞ղջ է թէ մնում», Աւ լսելեացն
կը սկսի լայ բարի գիւղացին, և ձեռքի սև շիշը գետին
կը հանդչեցնէ, դրացանէն ի աշկինակը վնասելու համար:
«Ազատարսի մէջ երեցած գերիներու և վիրաւորներու
ցանկերուն մէջ շիշաց իբն ա՛նուց. քանի-քանի անգամ
վնասեցինք, ի գուր» կենդ՞ գիւղացիներ, ևս ինքս բա-
ժանորդացրած էի գիրենք Ազատարսի, և իմ միջոցաւ
կ'ստանային առօրեայ թեքթնքը, միշտ գովեամ կարգա-
լով խնդրութեան հագաւարութեանը՝ հանդէպ գաւա-
սի հացութեան:

Իսկոյն կը համարուիմ ահաւոր իրականութեանը.
զաւակը մնում էր, ապմտղաշարին վրայ, պանդխտու-
թեան մէջ, հետս իր վաթանէն ու սիրելիներէն:

— «Եթէ հետք է, պատուելի՛, սող մը ասնք նոյն
լրացրի մէջ, և թերևս լուս պատասխանս մը կ'ստանանք,
կ'աւելցնէ գիւղացին, կրկին իր գա՛նապեղ թաշկինակը
մտակցնելով տամուկ աչքերուն և թէ մնում ալ է, գէթ
մեռնելու՞ն վտարիմ. ջանիդ հարսս արխան արցունք
կը թափէ:

Բոս շեմ կրնար գանել խեղճ գիւղացին միտիթարե-
լու, այնքան մեծ կ'ըլլայ յուզումս, և այնքան խորունկ
վրաս թողած սպաւորութեանը:

— Կա՛ն, բայց գոնէ մէ՛նիս մը պէտք է վճարել

նայն թերթի վարչութեան, կը յարեմ, փոխան ծանուցումի. առանց փոխարժէքի անկարելի է մասնաւոր ազգարարութիւն բնել քու գինուար զաւկիդ համար:

— Կարող չեմ, պատուելի՛, կարող չեմ, կ'աւելցնէ՞ գիւղացին, և գեանէն շիշը վերցնելով, սաքի կը կանգնի, և դէպի ինձ կ'երկարէ հեղուկին անօթը, կրկին թըջելով իր փոսացած աչքերը:

— Քեղի՛ եմ բերեր, պատուելի՛, գիւղի կաթ է, խմէ, զաւկիս համար է, հալա՛լ բրէ... .

Ու դուար բանալով հրաժեշտ կ'աւնէ: արգելորոյս հայրը, խոստանալով կրկին գալ ինձ մօտ, եթէ լաւ լուր մը ստանայ. բայց յայտնի է որ յուսահատութիւնը դառնօրէն պատած է գինքր: Մեկնած է արդէն, և գիտականձին թողած, իմ մտածումներուս հետ:

Աիրտս կը վրդովի. կը բանամ խելոյն անօթին խիցը, ուրկէ ծանր հոտ մը կ'արտազարէ, շրթունքներուս կը մօտեցնեմ անօթին բերանը, և մէկ ումօզով կը խմեմ լիարայէ մը աւելի կշռող այդ անարտա կաթը, ու դիտովութենէս, աչքերս բացավառիլ կ'սկսին:

— Եթէ, կ'ըսեմ իւրովի, թ' այն իսկ ըլլար շիշին պարունակութիւնը, կրկին խմել պիտի ուզէի, քանի որ խեղճ ծերունին գիտ ալ մասնակից բնել ուզած էր իր զաւկին հետուար հոգակոյտին համար պատրաստուած մատուղին ու հոգեհացին... .

Չանգակը կը հեչէ, կրտս քայլերով կրկին դատարան կը մտնեմ, մտածելով թէ ինչ պետք է որոնել իբր գառախօտութեան նիւթ... .



Կ Է Ր Մ Ի Յ Ա Ն Է Ա Ր

Երևք օր վերջ , քաղաքին Հայ դադու թր շքեղ պա-
 րահանդէս մը պիտի սարքէր , Ազգային վարժարանի ի
 նպաստ և անոր ընդարձակ սրահին մէջ . հանդէսը կը
 խոստանար լաւագոյն փայլելքը բլլալ այդ խոստաշունչ
 եղանակին , փետրուարի վերջերուն : Կարգադիրի մի-
 ջազգային անդամները որոշած էին շարաթ մը առաջ
 փակել վարժարանը , հանդէսի կարգադրութիւններով
 պահելու , զայն աւելի շքեղ և աչքառու ներկայացնելու
 ցանկութեամբ : Կ'ընդդիմանամ Կարգադիրի ասանդու-
 թեանցը , վարժարանը այդքան ժամանակ փակ պահելու ,
 և երկուսանք յայնուամ փախաքներու հաւաքածայն կ'ա-
 րաշենք երևք օր միայն փակել կրթարանը , հանդիսաի և
 վերամփոփման յարմար պահ մը կէտաւանեայ քննութիւն-
 ներուն սկսելէ առաջ : Անաստօյն և պարահանդէս . երկ-
 րային կոստակերգութեան վերջին փուլը թեկեա , այնքան
 անհայտ իրարու , այնքան աննկարգաշնակ և արամազծօրէն
 հակառակ : Քաղաքը միակն է , իր հարեան պրաշխներուն
 մէջ , ուր ո՛չ մէկ հայ բնիկ է , բայցն այ օտար , եկուոր ,
 հայի համար հոն հաստատուած , հեռուարար անկախ
 իրարմէ : Մայկարայէն մինչև Եօզղատ , Կարաչապէն մին-
 չև Կասպու բական ու Ասանա իրենց ներկայացուցիչներն
 ունին հոս , այլակերպ տարապ մը ձգելով քաղաքին մէջ ,
 նայնքան այլազան բարքով ու սովորովով : Կտեր էի որ
 քաղաքին գերման գաղութը քանիցս նման հաւարու մ-
 ներ ունեցեր էր , սահմանափակ շրջանակի մէջ , սակայն
 Հայ ձեռնարկը բայցրովին նարս թիւն մը պիտի բլլար մեզ
 համար , յետամնաց սա Անաստօյնի մէջ , մասնաւորա-

պէս Աերաւախոյ արեւմտեան կողմը տարածուած հսկանա-
կան Անատոլուի համար: Կուսիտան ու Էրթողրուլը, Նա-
րահիասրն ու Բիծնիան տարարախաօրէն գրկուած են
քաղաքակրթութեան գրօշմը պայծառօրէն իրենց վրայ
կրող նման հաւաքումներէն. պարահանդէս, նոյն այդ
վայրերուն մէջ, ուր հայութիւնը բաւական հին է և ոչ թէ
քաղաքիս նեւն մօտ քառանասնայ պատմութեան մը
տակ անկայծող:

Այլուոր ասիի՞ մին է վարժարանին կրեք օր փակ
մնայր: Ընկերական և իրաւական դիտութեանց պատկա-
ւորի մը հետ, ուրբաթ առտու մը, կանուխ, խիստ կա-
նուխ, գրեթէ շնչառազատ կը նետուինք կառաչար, կրեք
ժամ վերջ Օսմանեան փառաւոր պատմութեան սկզբնա-
կան շրջաններուն՝ իրենց ազդեցութիւնը յայնմարեքող
նոյնքան փառաւոր Նիքիայաններուն հայրենիքը հասնելու,
արեղնափայլ Կուսիտան: Երկու ժամ խաւարի մէջ ըն-
թանալէ յետոյ հարիս լուսարացք կ'ողջունենք. գարձ-
կայ աղուոր է ստաւօար ու գայնան սկիզբի ցանքով
դրասիկ կուզան հեռզհեռ, դիժին կրկու կողմի տարա-
ծութեան վրայ Բոլամ հաստ քաղաքներ: Քանի մը բո-
ւի վերջ կը հասնինք Ալաուտնա, շէն ու շինական կա-
ջարան մը, ուր կրկու վաղօն փոքր մեքենայի մը լծուած
մեղ կ'ապստեն: Քամերձինց ասորի տառչ և քամերձինց
ասորի վերջ. մաւածումի և գաղափարի ինչ ահային փո-
փոխում. քանն ասորի տառչ ահուկի և աղաղակող պայ-
քար՝ քաղաքակրթութեան դէմ, հսկայ պատնէշ՝ մարդ-
կացին ճարտարարու կամին դէմ, մենամարտի հրաւիր այն
ահաւոր պահուն՝ երբ կառաչարի հսկայ սուլաչը իրենց
տկանջները պղծել պիտի գար. քանն ասորի վերջ՝ Կէր-
միլիաններու նոյն քաղաքը գրկարաց կ'ընդունի շուկ-

Կառքին իւրաքանչիւր խցիկէն դուրս ելած վաճառք կամ
 թղթածրար : Հայաստանի ամենաչեափն հայ գիւղն իսկ
 անձկութեամբ կ'սպասէ այն երանելի րօպէին , երբ
 փարսախներ իսկ հեռուէն պիտի լսէ օրհնարներ սուլողը՝
 վայրաշարժէն դուրս եկող : Օսմանցիութեան օրրան հին
 քաղաք մը , որ ասրիներ միայն առաջ , բունի ուժով հա-
 մակերպեր է սղջունելու երկաթուղիի գիծը՝ իր սահ-
 մաններուն վրայ : Հայկական դպրութիւնն ու դպրոցա-
 վարութիւնը , ամենէն աննպաստ շրջաններու և անմասն-
 կամարժ գրութիւններու միջոցին իսկ , քաղաքակրթու-
 թիւն տարածեր է , գիտութիւն ծաւալեր է : Եւրոպայէն
 Պոլիս , Պոլսէն Հայաստանի հեռաւոր գիւղերն իսկ , մինչ-
 ղևա խոշամ մղկիթներն ու Ահսեհակները մայրաքաղաք-
 թեան անհրապոյր սերմերը տարածեր են բոլոր այն վայ-
 րերուն վրայ , որ խոշամը քաղեր է իր նուիրական մար-
 գաբեւոյնը , սկսած Պախարայէն մինչև Պօսնէօ և
 Առմաթրա : Ինչամական օրէնքը յատկապէս ծածկել ու-
 ղած է կարծես կիներու գեմքը , որպէսպիսի անմեք չտես-
 նեն քաղաքակրթութեան մեծ բարիքները՝ իրենց ամէն
 քայլափոխին :

Քանի մը րօպէ վերջ երկրորդ կառաշար-մասնաճիւղ-
 ղին մէջն ենք արդէն , մինչդեռ մայր գծին վրայէն սու-
 բոցոյ և մեզմէ բաժնուող կառախումբը կը հեռանայ
 սանկա մեր սեռագութենէն , երկնայ սղջունելու մինչև
 կիլիկեան սահմանները :

Վար կ'իջնենք կառաշարէն և ինքզինքնիս կը վրա-
 սահինք մեզ գեպի քաղաք փոխադրող կառքի մը , որ
 կը սուրայ լայն ու ծառայարոյ ինձու գիծ մը : Հեռուէն
 կ'երևայ հին քաղաքը , կէրմիցաններու հայրենիք Կուսի-
 ան , երևք սեպ բլուրներու միջև սեղմօրէն գրկուած :

Բնազգարար բան մը կը փնտռեմ կարծես միջնորդութիւն մէջ , աչքերս դէպի անորոշ հպատակ մը կը սևեռին և ահա , նոյն բնազգական խաղերուն ենթակայ , սեւադու-թեանս առջև կը ծառանան ու կը հայելիանան մեծ ու փառաշէն զոյգ մը աշտարակներ , որոնց վրայ առաւան նորածագ արևով ճաճանչաւորուած խաչեր կը փողփողին , հոգեպարար գոհացումի մը աակ : Եւ ուրախութեան խելայեղ , ի դուր կը փնտռեմ հսկայ աշտարակներով պատնէշուած խորամակն մզկիթի մը արեգնաշող ու սսկեզոծ գմբէթ մը որոնց այնքան պատահեր ենք Բիւզանդիանի խորաքանչխոր սանդղամասին վրայ : Ճեղք հպարտութեան ինչ մտախ բներեւոյթ , կը խորհրդամեմ , քիչ մը անիրաւ գառառամնով , թերևս : Իրանի ու Թուրանի բարձրաւանդակներէն խորայեղակերպ չարչարանքներով , ամիսներ ամբողջ հայրենի ծխացող մախիթներուն վրայէն քայտղ այս բախաազուրկ ու հարածական հայազանդուածը , իր հետ պահեր է , սեղմօրէն անոք փարած , իր կրօնի և զեղի մարտը շատիանիչները , Լասան որչիբոյսովը կանթեղուած . իր հետ բերեր է , իր չարչարակիր ու խաչակիր ամէն քայցափախին , իր մարտը և աղնիս ասնփն բոյսը կարկատան գիմազիծերը , երիվայներու քամակին յեցած , ան իր ազօթքը մրմնջեր է ու հոսսեր է մինչև այս փայրը , ուր Օսմանցիս թխնը սկսեց էր արդէն իր աւերները ավակ Բրիտանեաց սահմաններովրայ : Բայեր է , անբնդհոտ , և Իրանի բարձրաւանդակէն վերջ Անտառոյս ի բարձրաւանդակը քերեր է , քիչ մը անհրապոյր սակայն իր բոյսը գիծերուն մէջ , և իր դարան որ առաւարանքէն իր ապառազրման կոթող , հրակայ աշտարակն է բարձրացուցեր , քառանխառ , անշուքայրեցուեր սահարներու առնթեր :

Կը հասնինք անշուք հիւրանոց մը, որ հաղիւ կըր-
ցեր է իր չորս պատերը ազատել՝ գիշեր մը առաջուան
հրդեհէն. հիւրանոցին տէրը, երկայնահասակ, երկայնա-
վիղ չորցած ու ցից այտոսկրերով, թշուառի մը տպա-
ւորութիւնը կը թողու վրաս. հայ մը ըլլալուն զինքը
հիւրընկալ ընտրեցինք, հակառակ մեր բոլոր վատ արա-
մադրութիւններուն: Սելանիկէն չազթող գործունեայ
երիտասարդ մըն է, և չէ գիտցած յուսահատիլ բնա-
հրդեհին պատճառով իրեն հասած մեղաներէն. խեղճ ու
առուարող մարդ, ինչպէ՛ս յուսահատէր, երբ ամիւններ
վերջ. այդ երկայն ու նեղ հասակովը Կերմիլաններու այս
հեռաւոր աստղերու տակ փայլատակող հողին մէջ պիտի
պառկէր: Եւ արդարեւ, նունենիներու արխաններկ ծա-
ղիկներու փթթումին հետ, մարեր էր իր հողիին կայծն ու
կրակը, երկու որբուկներու աւաչը ձղած իր կուռ . . .

Կէս օրուան ուղիղ երկու ժամ կայ և դեռ շուկայի
երկու երկայնքին վրայ փակ խանութներ կ'ապասեմ
իրենց տերերուն, որ արև տեսնելու. լսեր էի որ Կուտի-
նաղիք արևելեան անշարժութեան ջնաշխարհիկ տիպար-
ներէն էին. հանդիսաբի, վայելքի և առատ կերութեամբ
մարդիկ աւելի, քան գործունեայ և շարքաշ. արևելեան
ճակատադրականութիւնը այդ յոյ ու դանդաղ մտի գան-
դուածները ա՛յլ աւելի անշարժութեան մեղած է, տեսակ
մը ստացիկեանութիւն գնելով անոնց սպրեյակերպին
վրայ: Աշխատատեղական քաղաք մը չէ Կուտինան, ինչ-
պէս չեն թրքախօս Հայութեան այս բնագործակ շրջանի
վրայ տարածուած բոլոր քաղաքները գրեթէ, Էսկի-Շէ-
հիրի բացառութեամբ: Մ, անշարժ ու անասան Անա-
տոլան, որ անցիկատակ դարեր ստաճ, աշխարհի մեծա-
զոյն քաղաքակրթական շարժումով յայտնագործուեր է,

միջիանաւոր անհասաներ դիւցունցեր , անուցեր և ապառայի համար է պատրաստեր , մեծ կռիւ է մղեր իր գոյութեան համար և ճակատեր է եզական դիւցադնութեամբ , հազարաւոր դիակներ յանձնելով աստուածակերտ յուռթի հողին , որուն վրայ բարբարոսորէն կը քալէ այսօր միաքով ու սիրտով քարացած մեծ անբանութիւնը , այլատերածներու սարկացած բանակը : Անաստօլն , որ Տրուադա մը , Փոխգիտ մը , Միւսիա մը , Բիւթանիա մը և Լիկիա մը թաղեր է իր տակ՝ անլսելի պղծութեամբ և անոնց քաղաքակրթութեան աւերակներուն վրայ նստած , Արեւմուտքի ծիծաղն է շարժեր՝ իր պատմական անշարժութեամբ . . .

Կուսինա փոքր բայց առաջնորդանիստ քաղաք է , իր հաղիւ չորս հարիւր տուն հայ բնակչութեամբ , այն ալ օրէ օր նուազանալու դատասպարաւած , շնորհիւ արտադադթի : Հազարաւոր կարիճ ու աշխատող բաղուկներ իրենց մէջ անուցանող բաղմաթիւ հայ գիւղերու հոյներ գրկուած են առաջնորդէ ու առաջնորդարանէ , զրրկուած են կրօնական ու կրթական միախիտարանքէ , բոլորն ալ մտքուր հայախօս , ժիր գիւղեր , հայ նկարագրի ամենէն կարկառուն յասկութիւնները յատկօրէն գեւ իրենց վրայ ցոյացող , մէյմէկ սիրուն Հայ ստամբիկներ այս լայն Անաստօլին վրայ , չոր հազէ մը աղաղուն վարդի թերթիկներուն նման , իրենց մայր-հայրենիքի ծղօտն սարադնուած . մինչդեռ բաղմաթիւ քաղաքներ՝ ուր հայութիւնը իր ս'չ մէկ կենդանի երանգները պահած է , իրենց առաջնորդներն ունին , ժողովներն ու ժողովականները , մտաւոր ստանկութիւններ բոլորն ալ :

Ճանապարհակցիա հեա կ'այցելելով Առաջնորդարան , որ բանտաձև , անշուք ու բացարձակապէս սնհրապոյր

առաջարկն զէմ, նորակերտ, բնդարձակ ու շարդարուն
 շէնք մըն է: Պատշէտեան պիտագիծերով երխտաւարդ ար-
 մաշական մը կ'ընդունի մեզ, և հակիրճ ծանօթութիւն-
 ներ կուտայ իր քաղաքի մասին, շատ դանն գոյներով:
 Քուճ-Քարուի ծովեղերքին մօտ, ամբարշտական շէնք հա-
 յոց խարխուլ պատրիարքարանէն վերջ, սրուն աւերակ-
 ներուն վրայ այժմ հսկայ պաշտօնարան մը բարձրացեր
 է, կ'ըսեն, թէ և ո՛չ աղգախոյսի, երկրորդ աղգային
 պաշտօնարանն այս Առաջնորդարանը, սրուն այցելել ու-
 ղեցի մամնաւոր երկիւղածութեամբ մը. հանգարտ, ան-
 խօսակ բոյն մը, ուր նոյնքան անխօս վանական մը իր
 բնակութիւնը հաստատեր է, աղգային ծալ ծալ բերներն
 իր վրայ կրելու: Կսեր էի թէ զաւտի խրաքանջիւր
 առաջնորդարան իրական մանրօնկարն էր, և եթէ չէր՝
 պարտական էր ըլլալու, Պոլսոյ Պատրիարքարանին, մաս-
 նաւոր շարկերով ու մամնաւոր դիւաններով: Ախա՛ս որ
 նմանութեան ո՛չ մէկ կոր կրցի գտնել, բայց ի նմանու-
 թեան այն մեծ կորերէն, սրունք դոյրութիւն ունէին պատ-
 րիարքական դահլիճին և առաջնորդարանի սրահին միջև,
 բնդարձակ, լուսաւոր և լուս շարդարուած սրահը, սրուն
 խորէն՝ վանականը մեզ հետ կը խօսի, իր թեմական
 գործերու մասին:

Երբ վերը, պաշտօնարանին մէջ քաղաքին կրթական
 վիճակի մասին հետաքրքիրի հարցումներ կ'ուղղեմ կրթ-
 թական գործին պատասխանատու վանականին, աչքերու
 դուրս կը խոչանան յանկարծ, վար կը դատարեն, Առաջ-
 նորդարանի բակին խորը, որ եկեղեցւոյ բակն ալ է, և
 ուր ծամածուռ միաշարք երկար նստարանի մը վրայ,
 վախճանի մօտ աղաք՝ դիրար գրկած՝ սարիքաւոր ու-
 սուցչի մը կ'ընկունդրեն, միտքով և քօակով չքաւոր

երևոյթի աակ եղկելի ուսուցչի մը , որ այդ բանակ մը ազոց առջև ուրբի , անոնոց հայ աթութաներ կ'ուսուցանէ սև նշաններու վրայէն . երբ դասախօսը մանուկի մը հետ կ'ըրատի , և ի դմբ կը ջանայ այդ թրքաբարբառ ծնողքի դուկին հայ այնքան պաշտելի զիրերը ծանօթացնել , անոյին յիտունրինը աղաքը չարածնի խաղերով և այլանդակ ձևերով իրենոց կարգին կ'ապատեն : Բաղաքին առողջ ու կայտառ կլիմայով արևուած մեծղի կասու մը իր ակնարկը դրեր է դպրոցի խարխուլ հիմերուն աակ իր բոյնը հաստատող և ազոց սակառներու պահնորդ մուկի մը վրայ , ուր խաղասէր ազոց ակնարկն ալ էկեր հանդիպեր է դասաժամի այդ պահուն : Բանի մը վայրկեան վերջ , երբ ուսուցիչը , սասիկեան համբերութեամբ իր պարտակասնութիւնը կը լրացնէ , դասասիկ հայ ազոց ծանօթացնելով հայ զիրերը , սաստ ան խանաւ մշուշով ծրարուած այդ բացասանին մէջ , եկեղեցիին ժամկաշը , որ ազոց արնատեան ալ է թերևս , կրթարանին ստորնայարկի նկուղի մը հինոցած դադադ մը կը դնէ ուսին և կ'անդնի ազոց առջևէն , մահուան նժղե՛ն իրականութեան դադախարը դնելով անոնոց մասոյաչ ու անդխաակ ու զեղներուն վրայ...

Անասոյսւ , ու իր արևելեան այլանդակ յետադիմութեանոցը մօտ բացօցեաց ուսուցում , նոյնիակ դարնասնամուտի այդ խանաւ օղին : Կը յիշեմ որ Պետլինի մօտ բարձրադոց Ծասոյթի նպարի պարտածանին գեղատեակի անասաններն էին , որոնք , սասմին անդամ ըլլալով , բացօցեաց ուսուցումը սրբեզբել սասին Տեասնեան նար դասակներուն : Անկարելի էր որ միտքէս կարենայի անցունել թէ Անասոյսու խարերը հեծեծոց ու իր օղրակի գոյութեամբը՝ դարերու յու եր յնայոց արեգնայան կուսակեան գերման մանկավարժութիւնը պիտի սրբեզբեր , և

իր դաւանները պիտի դաստիարակէր բացառաւորաբար վրայ, տաճարին սրբատաշ քարերուն մօտիկ: Մէկ ակնթարթի մէջ մաքիս վրայ կուգայ կը հայելիանայ հայ մանկավարժութեան պատմութիւնը, սկիզբէն մինչև մեր օրերը, ուր իրենց գոյութիւնը ունեցած են Տէր Թողիկն ու Տէր Ղազարը: Իսկոյն կը կուսնամ թէ մանկավարժութիւն չէր այդ, այլ մանկաքանդութիւն, և ախո՛ս . . . Շառլօթէնպուռկի շրջականները ափ առնող վանականի մը հակադրութեան տակ:

Սովորութիւն է և պէտք է հաճոյքով տանիլ. և կեղեցականը իր հիւրերը դէպի յարակից վարժարանը առաջնորդել կը փափաքի, մեզ մօտէն իրազեկ ընելու մասաղ ու նորահաս սերունդի մասուր ու ֆիզիքական աստիճանին: Հաճոյքով կ'ընդունինք հրաւերը, մանաւանդ որ գոյնդգոյն յիշատակներու ամբարումով դառնալ կ'ուզէինք, ևս ու ընկերս, դէպի քաղաք, միասին խորհրդածելու համար մեծ Անաստուի մեծ զաւերուն վրայ: Կ'իջնենք Առաջնորդարանի լայն սանդուխներէն, և բակին մէջ ուսանող խումբ մը մանուկներու հետաքրքիր ակնարկներուն առջև, կը բարձրանանք նեղ ելնարանէ մը վեր, որուն ճակատը հանդչող սև ազգաստախտակը միայն վարժարան ըլլալու մասին կը վկայէ: Ողորմելի շէնք մը, քանտ մը աւելի քան կրթարան, այնքան յուսահատական են իր որմերը, այնքան յուսահատական իր արածողներն ու արածուողները: Ընդարձակ սրահէ մը ներս կը մանենք, ուր հարիւրէ շատ աւելի տղաք, ամէն տարիքով ու ամէն գիմագծով, սչխարներու նման իրարու քով շարուած են, կուշտ կուշտի, նայն դաւով ու տարտով շաղախուած, նայն միջավայրին դաւակները ըստին ալ, նայն ուսման ծարաւի, որ, ախո՛ս, չի գար կարծես

իրենց պապական թուղեղն ու շրթունքները զովացնելու :
Ի դժուր դէմք մը , դիմագծու թիւն մը , ստալանդ մը վնասը -
սել կը ցանկամ ու ի դժուր ակնարկն կը սղարացնեն ման-
կունակ դիմագիծերու վրայ , ուր յուսահատութենէ գոյգ-
ղոյգ փոսացած աչքեր միայն կը դանկեմ : Արանը ծան-
րացած է սաք ու անախորժ մշխույրստով մը . ո՛չ մէկ
սրատունան բաց է այդ ընդարձակ և ցածկեկ սրանին որ-
մերուն վրայ . հաճոյքով կը շրջիմ այդ ախուր ու մահա-
տիպ հողիներու մէջէն , բոլորին ալ կը մտնենամ , գրկել
ու համբուրել կ'ուզեմ զանանք ու բազմապէս վախա-
գրել կը մտադրեմ զիրենք աւելի հեշտ սրահներ , գուր-
գուրտա խնամքներու սակ , մասուոր զույս մի շարջարա-
կիւր այդ հողիները , արցունքի հովիտներու վրայ մակա-
ղող : Արդեհային դասակարգի անհաւատարութիւն , հո՛ս
ալ , և ո՛ւր չկայ արդեօք այդ խ՛ղիպ անհաւատարու-
թիւնը : Հօնօրուլուի նոր սերունդը աւելի բախտաւոր է
թերեւ , քան այս եղկիկներու սերունդը , այլասերած-
ներու հսկայ բանակ մը , սրուն գրօշակիկներուն վրայ իր
կեանքը պիտի օգնակը , թերեւ , մեծ մարդաբան կամ-
պուօղօն , իր հոգեխայզի աշխատանցին հայաշէն մարմա-
րին վրայ : Երջանիկ չե՛ն միթէ այն յիմարտները , խելա-
գարներն ու այլասերածները , սրանք հսկայ ստալանդնե-
րու խորագրենին զննազութեան ստարկան կը հանդիսա-
նան . երջանիկ չե՛ն լեզւուններ կազմող անդնական
ծնունդները , սրանք օրեր ամբողջ մեծ մաստարականերու
պրիմակէն անցած են , մերկացած պահ մը իրենց ու գե-
ղէն և գայն ապա իրենց մէջ վերակրում . հարստ են մա-
նուանդ , սրահակ . քանի քանի առիթն'որով փառաւոր
աշարանքներէ ներս մտած են , գիտութեան ստանդնե-
րու մէջ ապուր ժամեր անցուցած են թիմ հաշիշի ան-

դգայութեան մասնուած ու անըջած: Եւղճ մանուկները աչք անտախ մխիթարութիւնն ալ չունին սակայն. հողերան ու մարդարանն ո՛չ մէկ խնամածու կայ իրենց վերեւարկնին խախանուած, աչքերնին բան չնշմարելէն կուրացած, ախանջնին չլսելէն խուլացած եւ ձեռքերնին՝ չչարժելէն սնուցայ:

Ակնարկս ու մտածումս միշտ այս տառապող հողիներուն վրայ, դուրս կ'ելլենք արահէն, ու երկու քայլ անդին մեր առջև կը բացուի նեղ դուռով փոքր դասարան մը, ուր հինգ պատանիներ, սակեղարու հայ դպահանութիւնը կ'աւսանին, Եղիշէի դժուարիմաստ էջերուն վրայէն. սա ալ խառակրօն վանականին ձեռակերտը, սնուցայ: Պոյսոյ սրբանայներու աղաքը միշտ աւելի՛ դուարիթ տեսած եմ, աւելի՛ լաւատես եւ աղաղայի հանդէպ յո սաղաղ ու ժպտաչոյղ, քան այս ուսման սրբ պատանեակները, որոնց շորացած գէմքը աղուամաղով ջնարակու իջ սկսած է արդէն: Փոխանակ կեանքի դառնութիւններուն հանդէպ, կեանքի դժուարութիւններուն հանդէպ կուրծք տալու դադանիքները հաղորդելու իրենց, Եղիշէի էջերն ի, սր իրենց կը մատուակուի, յուսահատական էջեր բոլորն ալ, հայ տառապող կեանքի էջեր բոլորն ալ: Եսա լաւ կը կարդան, հիանաչիօրէն կը թարգմանեն, ու գեղեցիօրէն կը վերջուծեն Յաղկերախ նամակն ու ստացած պատասխանը: Ինչո՞ւ, կը մտածեմ, Անկո-սաքսօն մաքրապաշտ զեզր նուազ կ'աշխատախ Արեւելքցիներէն, բայց շատ աւելի կը հարտատայ, լաւատես է կեանքի հանդէպ եւ միշտ յո սաղաղ: Անոր ձեռքի աւետարանը յոյս կը պարզել իրենն ու աշխատութեան կ'աւաջնորդէ, գէմքը, խոյ հայտնն սուտարանը յուսահատութիւն կը բերէ իր հետ, իր բոլոր յարակցութիւններով:

մորթմաներուն հետ, դանոնք հալածեցին, իրենց գէմքերը ծածկեցին բնիկներու անաւոր ծամածռութիւններու դէմ, նաժիշաներէ աւելի ստոր համարեցին դանոնք, առանց պահ մը դէպի հին պատմութիւնը առաքելութեան մը սկսելու, կարենալ համողուելու համար գոնէ՝ թէ իրենք ալ հիւսիսի բարրարոսներու այլանդակ ու անգութ եկողութներու սերունդն'երն էին, արեւելեան քաղաքակրթութեան սալին վրայ իրենց ուղեղները տաշած, յղկած ու կոկոսած նոր սեւտաններ ու սաքսոններ... Իտրեր յետոյ, սպիտակափառ Եւրոպան կ'եղբայրանար սեւամորթ ու կարմրամորթ հնդիկներուն հետ, իր բովանդակ մտապաշարը անոնց ի սպաս կը դնէր, դատական սրահներէ ներս անոնց իրաւունքները կ'որոնէր և իր վափկակազմ զաւակները՝ սեւամորթ սերունդին հետ առնթերակից՝ կը դատախարակէր, միւսնոյն սեղաններուն վրայ, միւսնոյն խաչալով առաջնորդուած: Մարդկային անխտրական ոգին սրքան հեռուները ճախրած ու բաժնուած է այս մեծ Անաստուէն...

Լաիկ ու քնացող տառապանքի մը անձնատուր, հարիւրաւոր մատաղ ակնարկներու տակ, կը հեռանանք կրթարանէն, երբ դանդակի մարմնուն ձայն մը, դասաժամի լրումը աղդարարող, պարտէզին մէջ ուսանող մանուկները ուրախութեան կը տանի. օ՛ այդ ձայնը, համակ կազդոյր ու շունչ պարզեող արոյրէ այդ չքոսի առարկան, համակ երջանկութիւնն է աղայոց, երբ նոյն ձայնին աղուոր վանկերուն հետ, իրենց շարժումները ընդարձակել կուգան, խոժոռ ու անշնտել ուսուցչի մը կաշկանդումներէն աղատ: Կ'անցնինք այդ տառապող հոգիներուն մէջէն և ակնարկնիս կրկին յառած հսկայ ու արեգնափայլ աշտարակին, կը խորհրդածենք անդա-

դար , չդադրելով բնաւ հիանալէ այս բարձրութեան կերտումի գաղափարին վրայ : Անհուն փափաք մը ունիմ աղօթարանէն ներս մանելու . ընկերս ալ կը համակերպիտասանեակ մը բարի ու ծերունի կիներ գաւիթին երկու որմերուն կից , ծունդի են եկեր մեծ-սլահք օրով ապաշխարուելու՝ իրենց ու իրենցիներուն մեղքերէն : Անհրասպոյր ու գեղարուեստի ամէն ճաշակ մէջը խեղդող չորս չքոտի ու հաստ պատեր հաղիւ թէ կը բարձրանան հողէն երկու մարդաչափ վեր , անգճեթ , սլարդունակ տանիքի մը տակ : Ո՛ւր հայաստանի փառակերտ ու շողակերտ աղօթարանները , ո՛ւր Հայաստանի Վարագն ու Արակահը , ո՛ւր Հայաստանի Անին ու Գուինը , տոհմիկ ճարտարապետութեան հարազատ կոթողներ : Հայ տառապանքը հո՛ւ ալ քաշեր է , աշխարհի չորս հովերուն սլարդած իր պատանքին ծայրերը , հայ տառապանքը հո՛ւ ալ քաշեր է , և օտար ակնարկներու առջև շիկնոտ ու այսահար , մտեր է գեանափոր նկուղներու մէջ և հո՛ն է հաստատեր իր մոմն ու ծուխը , հո՛ն է հաստատեր իր Յիսուսն ու Տիրամայրը : Լէնկիթիմուրի սրածութիւններուն առջև դողահար , հայ մեծ սովին ճիրաններէն փախատական , քաշեր է այս կարաւանը , ճեղքեր է լեռներն ու հովիտները , և աստուածքնակ ու դրախտային Եփրատին տեղ , իր սգաւոր դէմքն է ցոլացուցեր Բուրսագի տղմուտ , անխոր ու անհրասպոյր գետակին մէջ : Քաշեր է այս կարաւանը օրերով , իր ետին թողած հայ ջարդն ու հայ սովը , քաշեր է Շիրակի յուռիի ամբարներուն մէջ անօթութեան ճիրաններէն մտրակուած այս հեղ ու անխօսուկ կարաւանը , և եկեր եղբայրացի է Օսմանի պաւակներուն հետ , իր լեղս՛ւն ալ թողեր է , իր աղնուականի կենցաղն ալ դոհեր է անոնց , և իր վառ հաւատքէն

չող մը միայն սլահեր է արիւնոտ սրտին ու ամուլ մըտ-
քին մէջ, այս տաճարն է կառուցեր, փարախի մը ան-
փառունակ նմանութեամբ, և անոր դանձարանին մէջ,
դադտադողի, չէ մոռցեր հայ աթուօթան իր վրայ քան-
դակող քանի մը ձեռագիրներ սլահելու:

Զօրաւոր հեռաքրքրութիւն մը դիս դրկել կուգայ.
ի՛նչ կը մրմնջեն, ճաշուի արարողութեանց այդ սլահուն,
կը հարցունեմ իւրովի, այդ սլառուած դէմքերը, կանա-
ցի շնորհներէն զուրկ. ի՛նչ կ'աղօթեն, այդ բարի դէմ-
քերը, Կոչ վարագոյրին ետեւէն, ի՛նչ լեզուով իրենք
դարման կ'աղերսեն երկինքէն, և ի՛նչ բան կ'աղաչեն,
ամէնէն աւելի միածնին խաչափայտին առնթեր ծունդի
իջնող Տիրամայրէն: Հայ քահանան իր ցեղին մաքուր
լեզուով կը բարբառի, տաճարին անսիւն ու անգմբէթ
կամարին տակ, բայց ետեւէն ապաշխարութեան եկող
հայ կիները օտար բարբառով, սպաննող ու խեղդող
լեզուով մը իրենց ըղձանքը կը յայտնեն մեծ-նահա-
տակին, անո՛ր, որուն անծանօթ է այդ լեզուն. և սա-
կայն կ'աղօթեն անոնք, կը ծռին ու կը բարձրանան և
իրենց սեահիւս լաչակներուն տակէն, հայ սլատանք-
ներ բոլորն ալ, հողեթով ձայնն է, մաքուր ձայնն է,
որ սիրտս կը պարուրէ, միտքս կ'ոսկեզօծէ և հոգիս
կը լեցնէ, այդ աղուոր ու հայեցի շեշտով ձայնը. փա՛ւք
քեզ, Աստու՛ծ, փա՛ւք քեզ, ու մայրենի ոսկեչող ու
ոսկեկերտ հարադատ բարբառէն այրիացած և սգաւոր
բերնէ մը լսուող: Այո՛, հաղար փառք ու երանի այդ
ժամուն, երբ դարերու հալածանքն և ջարդը իրենց ու-
սերնուն բնոցած, անմասչելի կածաններ՝ ուխտաւորի
երկիւղածութեամբ քալող այդ ափ մը ժողովուրդը ողջ
է մնացեր, և իր տոհմի աղօթարանին մէջ, հոգ չէ թէ

անդարդ ու անտաշ, իր Ասատուածն է փառաւորներ, օսմանշիններու զուլումին և սուքին սակ. հազար փառքայդ պահուն, երբ թախտոց սրածող ու հրածող արշաւանքը չէ հասեր իրենց կա՛ւեն, և կարուանը քաշեր է սրտասարսի, առանց դիտնալու՝ թէ ո՛ւր կ'երթան սարաշէկ մազերով, կամա՛ս չմնջ'երով ու վառ սլանդով իր զաւակները, առաւայանքի ք'ապր իրենց հետ անութամ : Երնէ՛կ այն հայ քահանային՝ որ այդ կարուանն է առաջնորդեր, իր թեզանիքին սակ հայ մազազաթներ կարկատծ ու իր ձեռքերուն մէջ խաչն ու աւետարանը սեղմած, ու երկու պաւտ միւսոն՝ իր սրտէն կախած . . .

Տէր ողորմեալի պահն է, ու բոլորը մէկ բնազդի լարերէն առաջնորդուած, ծունդի կուզան, գլխահակ, սրբատերնին ուժգնորէն բացած ու լայազին, Տիրոջ սրատնաքուած սեղանին առջև : Ո՛վ սորվեցուց իրենց, այդ բոլորը, ո՛վ բառ թէ լացի ու կածի պահն էր այդ, իրենց, որ լեզու չունէին այդ բոլորը հասկնալու, այդ յուզիչ պահուն վերանայու հա՛նար . բնազդը լրացնել և կաւ ա՛յն, զոր մայրենի հարազատութիւնը կը յա՛նառէր բնձեւելու . ձեռնարացձ ու սրտազայ, երկնային շնորհ կ'աղերսեն այդ չորցած մարմններու մէջ հանգչող մեծ հողիները, ու Ասատուած պիտի ողորմի վեռ իրենց . . . տարագիր այդ ահամայ մարտիրոսներուն :

«Օրհնեալ եզերուք» ի մազթանքներուն հետ դուրս կ'ելլենք հողիներու սունկն . դուրսը բակին մէջ, հողէն նոր բնձիւղող դաշաշներու սակ, հնորեայ շիրմաքարեր պառկեր են քովէ քով, եզրայրորէն, աւետեր կամ և լազիաւեմ որ դաւառի բոլոր աղօթարաններուն բակերը ծածկուած են բաղմաթիւ տապաններով, որոնց սակ կը հանգչին նոյն աղօթարաններուն սատարող բարեպաշտ

այրերուն ու աղօթանուէր կանանց մարմինները • գաւա-
 սը հարուստ էր իր եկեղեցիներու բակերով, շէն էր ու
 շքեղ, մինչև որոշ թուական մը, երբ քար քարի վրայ
 չմնաց, և աղօթարաններու չորս հսկայ սլառերը իրենց
 սակ անթեղեցին հիմերուն շրջակաները հանդիպ աղուոր
 մարմինները՝ սոհմիկ արձանագրութիւններով: Հարիւրի
 մօտ շիրմաքարեր տեսնւք Կուսինայի աղօթարանին
 շրջաքաղիին մէջ, անձրեւէն ու ձիւնէն այլայլուած, բոր-
 բոսնած ու մահուռ կապած՝ արձանագրութեանց խոռոչ-
 ներուն ու ա՛յոսներուն մէջ: Իրական թանգարան մըն
 էր եկեղեցւոյ բակը, իր հին ու հայեցի աշտայայ-
 տութեամբ ու հայ ակթութայով շիրմաքարերով, որոնց
 վրայ հեռաքրքիրի և սիրող երկու դոյզ աչքեր, չոր մխի-
 թարութիւնը կը բերէին իրենց այցելութեան • ս՛վ գի-
 տէ, քանի հայասէր ու հայրենասէր հոգիներու պատեան
 մարմիններ կան թաղուած ասոնց կտին, քանի մաքրա-
 պաշտ ու առաքինի ախպարներ, իրենց օրն ու արեք գե-
 րեզմանած՝ մտնուացած այդ քարերու կտին: Պոլիսը
 դուրգուրտ է իր հին հին յիշատակարաններու հան-
 դէպ, խնամով ու սիրով պահել գիտէ ինչ որ իրն է իբր
 թանկագին հետ թիւն • Պոլիսը իր ազգային ու պետական
 թանգարաններն ունի • իսկ այս մեծ Անատոլոյուն իր ապա-
 րանքներն ու հայաշէն աղբիւրները կը կերակ էր հնու-
 թեան բեկորներով: Պաշտօնավայրէս ժամուան մը հե-
 ռաւ որտե՛սամբ Փոխ.գլխական հին մարգարիա քաղա-
 քին, գեղեցկապաշտ Տօրիլէի քարերը, իրենց վրայ բրի-
 շի ու մութի վայրագ հարուածները կրեցին, և սայլե-
 րու մէջ ամփոփուած, քաղաք հաւան ու շքտաի բնա-
 կարաններու և գաղբիւի սուներու իբր հիմ ծառայեցին •
 օ՛, պետական անփութութեան աղե՛լաւոր պատկեր . . .

Կը խնդրեմ վանականէն հողատար գանուիլ այդ հնօրեայ շիրմաքարերու հանդէպ, զանոնք հաւաքել, մաքրել ու յարդարել, և խնամով ամփոփել, բոլորն ալ, յատուկ սրահի մը անկիւնը՝ իբր ազգային հնութեանց թանգարան: Անցնող բոլոր հովիւ վանականները անատրեր գանուեր են, արհամարհանքով նայեր են բոլոր սրբութեանց վրայ, քարեղէն սրբութիւններ, իրե՛նց համար և թողեր են որ ժամանակը աւելի աղարատէ զանոնք, մարդկային ոտքեր անգամ մըն ալ կոխտակեն այդ հնօրեայ հանգստարանները: Ի՛նչ փոյթ նոր վանականին համար, երբ իրեն նախորդները՝ մին բուրգերու աշխարհին մեծ անշարժութիւնը, միւսը եղիտկոսանայու մարմաջէն խելայեղած և զնորած, երրորդը հայազանգուած մայրաքաղաքին փոխանորդարանին մէջ իր մօրուքը երկարելու պարապած, նոյն անատրերութիւնը զոյց տուած են տոհմային մօտիկ դարերու պատկանող աւանդութեանց հանդէպ: Բարերախատարար հայ ազատագրութեան յիշատակին բարձրացած կոթու-աշտարակին շորս կողմերը մէջ մէկ տապանաքար ագուցած են, ամէնէն արժէքաւորները բոլոր վէմերուն մէջ. երանի՛ թէ միւսներն ալ յառնէին հեազճեակ իրենց դարաւոր քունէն, և դուրդուրտ խնամքներու տակ, սրահի մը մէջ ամփոփուէին: Իրժուարաւ բաժնուիլ կ'ուզեմ տապաններէն, այնքան պաշտելի կը դառնան ինձ անոնք:

Նեղ ու անժխոր փողոցներէ վեր կը մազլղինք, ու քահնի մը վայրկեան վերջ մեր անտողութեան տաջի կը բրբռանայ երկրորդ զանդակատունը, համեմատաբար քիչ մը աւելի մեծ ու նորաչէն մատուռի մը առնիթեր: Անի մը ժողովուրդ, բոլորնալ իրար ծանօթ, բոլորն ալ դակից իրարու, և երկու եկեղեցի, փոքրիկ Անի մը այս քաղաքն

ալ իր զոյգ մը տաճարներով և ուխտավայրերով: Ճակատա-
 գրականօրէն, որքան շատ թիւով եկեղեցի է բարձրացուցեր
 հայը, այնքան յետ է կացեր ազնիւ նկարագրի, մաքուր
 բարոյականի և առողջ ուսման մէջ. որքան շատ են եղեր
 իր աղօթարանները, այնքան բազմացեր են իր հակա-
 ոակութեան ու եղբայրատեցութեան երևոյթները, ու
 այնքան բաժանուեր են իրարմէ: Անօրինակ դաւով լսե-
 ցի որ ա՛ի մը քաղքենի հայութիւնը երկուքի է բաժնը-
 ուեր. վերի թաղ և վարի թաղ, նոյնիսկ ատելութեամբ
 լեցուած իրարու հետ. իւրաքանչիւր թաղայնակ իր մա-
 սուռին մէջ կ'երկրպագէ, իւրաքանչիւր թաղեցի իր ու-
 բոյն աստուածը կը գովարանէ անհարադատ բարբառով:
 Մարդկային ազիտութիւնը մինչև ո՞ւր կը տանի իր հպա-
 տակները. սյցեւած բոլոր հայ քաղաքներս այս ախուր
 իրականութեան մէջ գտայ, մասնաւորապէս ահաւոր էր
 էրթօղրուլի այս առիթով վրաս թողած տպաւորութիւ-
 նը. աղգային իշխանութեանց դէմ բմբոստութեան կար-
 միր որչը պարզած, էրթօղրուլի հայ բնակչութիւնը եր-
 կուքի էր բաժնուած, դժբախտ որ, մէկ եկեղեցիով սա-
 կայն: Թող ատելութիւնն ու քինախնդրութիւնը ամբա-
 նան մարդոց աւերակ ուղեղի ծայքերուն տակ, և ահա
 ան հրաշքներ կը գործէ. աստուածներու երկրպագու-
 գեղեցիկապաշտ նախահեղիններու նման ան տաճարներ
 կը բարձրացնէ, կը զարդարէ զանոնք, և իր կեղծ ու
 շպարած հաւատաւորի քայլերը առաջնորդելու համար,
 սնանկ ու դատարկ միտքով շինական հայ քահանայ մը
 կը բերէ, ասորաչէկ սակիներու տարափին տակ շլացած
 ու չքացած երէց մը: Ահա իր յաղթանակը. ազիտու-
 թիւնը իր տաճա՛րը, բազինը կերտեց էրթօղրուլեան
 անպ ժայռերուն վրայ: Օրէնք է որ իւրաքանչիւր հզօր

կամ անկար պետութեան մայրաքաղաք, գիտութեան, ուսման, առողջ բարոյականի ու ազնիւ նկարագրի կենդանի հնոցը, վառարանը հանգիստուայ, գիտութեանց մեծ շտեմարանը, առաքինութեանց հանգիստարանը, որ իր հեռաւոր զաւակներուն լոյս աւետէ, զանոնք ազնուացնէ, անոնց երակներուն մէջ անաղնիւ արիւնը մաքրագործէ, և դարերու ազար սրբէ իրենց վրայէն: Այսպէս էին հնութեան մէջ Աթէնքն ու Հռոմը, Աղեքսանդրիան ու Կիպրիոնը, Բարեղոնն ու Նինուէն, Բիւզանդիոնն ու Նոր-Աթէնքը. այսպէս են նաև ժամանակակից արքայանիստ քաղաքները. այսպէս չէ սակայն Նոր-Բիւզանդիոնը, Արևելքի գունազեղ թագուհին, իր քայլերուն մէջ պչրտտ: Արդարացի բնազդումով, Մեծ-Անատոլուն իր հեռաւոր վայրերէն մինչև մերձաւոր կեդրոնները, իր աչքերը մեծ-սասանին է սևեռեր, գթտա աչքերով լոյս է աղերսեր իրմէ, և առողջ ու իրական լոյսի փոխան, կեղծիքն է օրդեղրեր, ատելութիւնն է ժառանգեր: Սա օրերուն, պոպական հինգ կարևոր թաղեր դեղին դարաւոր նկարագրին տխուր կողմերը բեմադրեր են, միջազգային այդ մեծ սասանին մէջ: Հակառակեր են, գիրար շեն հասկացեր, բնաստացեր են, պետական պաշտօնի դէմ, ազգային պաշտօն են հոչակեր, վիրաւորեր ու վիրաւորուեր են: Մ, եթէ Գաւառը կարեւոր, ինքն իր մէջ ամփոփուած, իր ճամբան ընել կեանքի մէջ յաւագոյն յաջողութեանց տիրանալու յոյսով. եթէ Գաւառը ինքն իրար իր փարտան ու ուղեցոյցը, և իր արդար գառմ միջոցներով նուիրուէր իր զաւակներուն խոսամնայից ապագային: Փոխանցման շրջան, պիտի արամարանեն շատեր . . . և կ'ա՛ւ, կը հաւանիմ . . .

Ներս կը մսնենք ստանարէն. ապաշխարութեան օրեր

են ու եկեղեցին հո՛ւ ալ սգաւոր է : Սիրուն է շէնքը , համեմատաբար աւելի նոր և դարդարուն . ծերուկ ժամկոչ մը տեղեկութիւններ կը հաղորդէ մեզ , և քովնախ դռնէ մը առաջնորդելով , դուրսը , բակին մէջ , տապանաքարեր ցոյց կուտայ , հոգի ու մարմին իրենց մէջ խաղող անխօս ու անլեզու քարեր , որոնց շուրջը , աղջկանց դպրոցին ու ծաղկոցին սղախկ սանուհիները պար կը բռնեն , կ'երգեն ու կը խայտան : Հեռուն , հինգ ծաղկատի աղջիկներ , իրենց բախար կ'որոնեն մեծ շիրմաքարի մը վրայ , երբ սիրուն ապրիմ-մեռնիմներ չեն գար աճիլայդ անխօսուկ քարերու արմատներուն մօտ : Լա՛ւ որ , կը մտածեմ , եկեր հոտ են թաղուեր , աշենին հոտ խափաներ են նախկին բարեպաշտ դէմքերը , ծաղկահիւսակ անմեղներու խայտանքին տակ , անոնց պարին ու երգին հարեան : Կէս օրուան գազարի առիթով , հարիւրաւոր տղաք , տաճարի շրջափակին մէջ տարածուեր են , դահազան անմեղ ու բնաղդական խաղերու տակ . անօրէնը , փափաքելով դասախօսութեանց առաջնորդել մեզ , կը հրամայէ դասախարակուհիին հնչեցնել դանդը : Տղեղ և ցուցամուլ արտայայտութեանց դռներ են , ամէն տեղ և ամէն առիթով , հայ ցաւադար մանկախները , դո՛ւ անճան կամայականութեանց : Ու դիտիկոր ու ցաւագին , կարգ կ'ըլլան լնդարձակ բակին մէջ , ու քանի մը բուպէ յետոյ , խաղավայրին խաղաղութիւնը ապրիլ կուգան տղոթարանին կառուրին տակ իրենց լոյները հաստատող սիրարաղձիկ տատրակները :

Վերն կենք , բնդարձակ և լուսախողի սրահի մէջ . դուրսը աղուոր բնանկար մը հնարակուած է . մէկ կողմը , կուտինայի հին բերդերն ու Բիւզանդական ջրամբարները լուռ հանդիսատեսներն են աղայոց անմեղունակ շար-

ժուճներուն : Անդին Յունաց թաղն է , զազրելի աղտոտութեան տակ թաքնուած , շա՛տ աւելի աղտոտ քան չինական աւանդամուլ քաղաքները : Ահա , հո՛ւ ալ բարձրադիր աշտարակը եկեղեցիին , հոյաշէն ու բարձրուղէշ , չքոտի աղօթարանի մը կողէն դէպ ի վեր սլացող : Այսինչ անաւոր բնազդ , այս ի՛նչ յիմարութիւն ու պատրանք . ի՛նչ բան կը խորհրդանշեն , արդեօք , սա բարձրութիւնները . Աստուածութեան մօտենալու , անոր առաքինութեան շնորհը մուրալու , կապոյտ անհունին մէջ սրբանալու ցանկութիւն , թէ բողոք . ո՛հ անաւոր է եթէ այս վերջինն է , աններդաշնակ Աստուածութեան պատուանդանին ուղղուած , բողո՛ք , իրենց անջրդի ուղեղներէն յառած դէպի երկինք , որ ծով տգիտութեան սալին վրայ անոնց թանձրացած ուղեղներն է կարծրացուցեր , եւ չէ փափաքեր որ՝ լոյս ու արեւ , արեւ ու լոյս տեսնեն անոնք . ո՛ , աստուածային մեծ կատակերգութիւն . . . :

Աղջիկներու խայտաբղէտ ու խառուտիկ փունջ մը , սրահէն ներս , հնադարեան նստարաններու վրայ , իր ժամերը կ'սպաննէ , անողատրատ միտքով , անպատրաստ մանկավարժութիւնով , մտեղէն մեծ զանգուածի մը հսկողութեան տակ : Իստի կ'ելլեն իրենցմէ շատերը , անհամարձակ , անձայն ու անբերան : Բողոքատմամբ մանչերու վարժարանին , շատ աւելի բարեկարգ ու արդիւնարեր կը դասնենք , աղջկանց նուիրուած այս յարկը , հակառակ անպատրաստ ուղեղներու , տակ միայն : զանուած բլլալնուն : Թրքախօս երեք կարեւոր կեդրոններուն մէջ ալ միեւնոյն պարագայ մը ուշադրութիւննրս դրուած է . իզական վարժարանները , հակառակ փարախներու նմանող իրենց խարխուլ ու անբնակելի

յարկերուն, եղած են բաւա՛յանի ուշիմ տարրերու հա-
մեատունակ բոյն մը, և իւրաքանչիւր սյոցելու՝ իզական
կրթարաններէն աւելի գոհունակ սրտով մեկնած է, քան
արական ուսումնարաններէն, որոնց մէջ տիրող միջա-
վայրը շատ հաճելի բարեխառնութիւն մը չստեղծեր հոս
պաշտօնավարող դաստիարակներուն :

Քովնտի սանդուխէ մը վար կ'իջնենք, ու կրկին
կ'ողջունենք մեծ գուլիթին մէջ հանգչող մամուածածկ
դամբանները . ակնարկ մը ևս ու ահա կը բաժնուինք
իրենց քանի մը ժամուան գրայնութիւնէն : Չեմ գիտեր
ինչո՞ւ կ'այլալիմ ու լռելեայն կը տառապիմ՝ ամէն ան-
գամ որ հայ տառերով քանդակուած ու նկարուն շիր-
մաքարի դիւ դէպի մանկութիւնս կը տանին . ինչ
աղուոր են սա քարերը, տառապանքն ու սուգը, ժպիտն
ու լացը, կեանքն ու մահը իրենց ետին անթեղած լուռ
քարերը : Տապանաքարը յուխտենականութիւն մըն է .
ան անհունը կը յայտնաբերէ, ան չմեռնելու գաղափարը
կը քանդակէ անհաւաստ ուղեղներու վրայ, ան կեանքն
իսկ է : Նրնէ՛կ անոր, որ մեռնելէն վերջ չքոտի քար մը
կ'ունենայ գոց աչքերուն ու խաչաձև ձեռքերուն վրայ,
ախրելի մը կողմէ գրուած . հայրենիքիս բոլոր զսէրը
պարզ քար մը իսկ շունեցան իրենց վրայ . Նվիրատը մի-
ջագետքի աւայներուն մէջ խրեց իրենց մաքրունակ
մարմինը, ու բարելտական հսկայ քարերու մաշած փշուր-
ներ իրենց տակ ծածկեցին զանոնք . . . : Վա՛յս որ արև-
նին խափանուեցաւ, այնքան շուտ բայց ինչո՞ւ այս
անտէղի կակիծը օտար ու այլասերած երկինքի մը տակ,
ինչո՞ւ ծննդավայրի այս դաւը, ինչո՞ւ այս մեծ կարօ-
տախար, լա՛ւ չէր որ գրախատաչէն հսկան օտար աւազնե-
րու վրայ նետեց զիրենք, որպէսզի հոն մակաղող մեծ

ազգերը . . . ողբան , սխալ , ծիծաղին աւելի . . . :

Կը դատուինք մեզ հիւրասիրող կրթական բոլոր մշակներէն և զիրենք կը խրախուսենք իրենց քայլերուն մէջ աւելի հաստատ մնալու , և մեր ետին թողած ուղիքու և մեռածներու կարաւանները , կը մանենք նեղ ու ազատ դռներ , քանի մը բայէ վերջ բաց երկինքը ողջունելու : Բնկերակիցս կառավարական պալատը պիտի մանէ և հետաքրքրութիւնս զիս ալ իրեն կ'ընկերացնէ . բռնակալ օրերուն , աղքատ ու անաէք ժողովուրդին դրամովը , քրտինքի հալալ վաստակովը բրգացած հսկայ ապարանք մը , աբդարութեան շքեղ սրահներով , ուրկէ բանալի ու կախաղանի հրամաններ կ'արձակուին : Արդարութեան պայան . օ , ես չորացած աչքերովս անոր ցուրտ սրմերը կը լուայի , իմ դանկասկրերս անոր նկարուն պատերուն վրայ կը փշրէի , իմ լեզուի ծայրովը անոր քարերը կ'օծէի , եթէ նայնայդ հսկայութիւնը իր սրմերուն մէջ արդարութեան կայլակները ցայտեցնէր , մեծ դրան երկու եղբերուն վրայ ալ առնող , ու իրենց իրաւունքը պահանջող թշուառներու վրայ . . . Փառայող յարկին մէջն ենք . անասլոր ետուղեռ մը հողիս կը շարչրիկ . արիւնի հաս կ'առնեմ , և ս'եր չիկայ կարմիր հեղուկին հոտը . . . Բաց է դուռը մեզ գէպի դատարան առաջնորդող . քանի մը քայլ առաջ , փայտորմի մը ետին , պատանի մը , կերմիցաններու քաղաքէն , բռնակապերու մէջ , գէմի կանանչապատ սեղանին վրայ հանդիպող արիւնտա դաշոյնին կը նայի , կէս մէջքէն կարմրած պողպատի կտորին : Ի՞րը ըլլալու է , կը մտածեմ և չեմ սխալած . դանդակի մը աղոտ , քովրնալի դուռնէն դատակոյտը սրահ կը մանել , ասղնատող լուսթեան մէջ :

Ամենահին ժամանակներէ ի վեր, պայքարի երկիրն է Անատոլիան, սուրբի ու արիւնի օրրանը ու դեռ հողը կուշտ չէ աշխուժ. դարերը քաղեր են տախկան այս հողամասին վրայէն ու շնչը մը խնկ քաղաքակրթութիւն զլաշեր են դնել սնոր տարածարթի մը վրայ բարբարոսութիւն մակաղաղ մարդ-նախիրներու մարքին մէջ: Ամէն կողմ արիւնի ծանր օդը կը շնչուի, ամէն կողմ զոհի մը մարմնի հողին կը յանձնուի, սակաւին երակներնուն մէջ արիւնը չարագած: Այս այն երկիրն է, մեծ հողագունդին վրայ, ուր մարդիկ փշրանք մը հաշր չեն կոխաւոր, ճղճիճ ու կառուէր մըջիւնի մը կեանքին կը խնայեն, մեզք կը համարեն ծիծեանակի մը կամ արագիլի մը քոյօր խանդարել ու սարչակել, ու սակայն մարդկանց սունն ու օճակը կը քանդեն, մարդկանց լոյս-արիւր կը խախտեն, և հազը ձեռակերատը բազուկները կը գաշուենն . . .

Օր մը առաջ, Կերթրյաններու հայրենիքի կարկաղաւուն ու պատմական բարձունքին, Սըրարը բլրակին վրայ, պարստակի պայքարն է մզուեր, ամբողջ երկու ժամ, երկու թաղի ամէնէն ընտիր ու կարչնեղ բազուկներուն միջև. ցեղը կը հերոսանայ, ու ցեղը կը պարստուի: Վայ պարստուողին. իր վրայ ցեղին պարստութիւնը կը սանի՝ սպարդական շիկնտո ու ամօթահար թախճութեամբ: Երանի յաղթողին. իր վրայ ցեղին յաղթութիւնը կը քալէ, սպարդական վեհութեամբ: Ինչ լան է ցեղին յաղթութեան բովանդակ ուրախութիւնը խմել, ու ինչ վասն է ցեղին պարստութիւնը լալ ու պատճառել: Բարերը եկեր ու սրբազրեր են նախնի հին ունակութիւնները. սուրին ու կաթաղանին տեղ պարստակի քարն է յաջորդեր, շատ անմեղ ու նորածն խաղ

այս երկրին մէջ . . .

Մօտ երեք դար առաջ , պարսաատիկով խաղը խիստ նորոյթի մէջ էր Ֆրանսայի արհուաւան ու պերճանիստ մայրաքաղաքին մէջ . նոյն շրջանին , 1648ական թուականներուն , արհուապետական ու խորհրդարանական յեղաշրջում մը ծայր կուտար Բարիդի մէջ , Ռիշլիէօ մեծ կարտինալին քաղաքական դրութեան և իրեն ընկերակից՝ Մադաուէն նախարարին յուր վարչագիտութեան դէմ : Երևանամեայ պատերազմով առաջ եկած ծախքերը հոգալու և իր անձնական գանձը հայ ստացնելու ցանկութեամբ , նախարարը նոր ու ծանրածանր հարկեր հաստատած էր դժբախտ ժողովրդեան վրայ : Օրուան թագուհին , Աննա ա'Օգոստ , կը քալէր երկու կարտինալներու լծուած խախուտ սայլակով : Այս բոլորը ծանօթ են Ֆրանսական աղգային պատմութեան մէջ երկու Գոսնները յիշատակութեամբ , որովհետև պարսաատիկի խաղը նոյն թուականներուն էր որ գրգռման և նորոյթի իր ծայրագոյն աստիճանին հասած էր Բարիդի մէջ . այդ օրերէն ի վեր , բովանդակ Ֆրանսայի մէջ խախուտ արգիլուած է պարսաատիկի խաղը (fronde) և այդ անունը հինալիօրէն պատմականացած է այլևս : Մեծ ու վեհանձն հայրենիքին զաւակները , դպրոցական սեղաններու վրայ կը լսեն միայն պատմական այդ բառը սև կը սուական զայն գործածելէ , իսկ հոս , կէրմիյաններու արեգնազան հայրենիքին մէջ , պարսաատիկով մենամարտը կը շարունակուի դեռ , ցեղերու հպարտութիւնը գրգռող ու ցողացնող իր բովանդակ թափով . . .

Ու պարսաատիկի քարը անկարող ու պարտուած դուրս կուգայ միջցեղային հնաւանդ պայքարէն , և սուրն է որ կուգայ յաղթական տիրապետիչ , կամանչապատ սեղանին

վրայ նշմարուող արիւնոտ սողապատին շեղքը :

Յեղին ներկայացուցիչներու պատանին , ի զո՛ւր ճակատեր է կաշիէ այդ բարբարոս գործիքով , ի զո՛ւր գետնահարել փորձեր է իր դէմը կանգնող տխտանը , ու երկու հաւասար ուժերու միջև յաղթութիւնը քողարկուեր է , ժամեր տևող ընդհարումներէ վերջ : Յաղթութիւնը ցեղին պատիւն է , անով պիտի հրճուի ցեղը , անո՛վ պիտի ամրանան ու պիտի ուժաւորուին ցեղին զաւակները , վա՛յ ցեղին որ կը պարտուի : Ու յաղթելու մեծ փափաքէն խելայեղ ու ցնորած , դիւցազնը կը մերկացնէ դաշոյնը իր պատեանէն , վերջալոյսի կէս խաւարին մէջ մահիկ մը կը լուսավառի , ու արիւնոտ շերտ մը կը թողու անդէնի ձախ ստինքին տակ . . . : Ու ցեղը կը յաղթահարէ . . .

Դատարանը , կապարային լութեան մը տակ , մեծ դատավճոխն կ'սպասէ . ցեղին պատիւովը խենթեցած մարդասպանը հո՛ն է , վանդակորմին ետին , գլխահակ ու անխօս :

— Տանըհինգ տարի տաժանակիր աշխատանք . . . մարդասպանը կը սարսռայ , ցուրտ վախը կը գրկէ դինքը , բայց կը տեսնեմ որ աննկուն ու անվհատ է միշտ . . . : Յեղը յաղթեց , ցեղը յաղթուեցաւ . ցեղը լացաւ իր կենսունակ զաւակին վրայ , ցեղը խնդաց պարտուող դիակին շուրջ . . .

Ընդարձակ սրահը դադարէ մը աւելի նեղ կ'երևի աչքիս . արիւնին դեռ սաք հոտը ունգերէս ներս կը թափանցէ ու դուրս կը խոյանամ , բաց օդ շնչելու : Ուղեղս անհունօրէն յողմած է այդ օրը , մարմինս տկարացած ու նկուն , հիւրանոցի անշուք առանձնարանս պալատ մըն .

ձ համար : Մութը ծածկել կուգայ շրջավայրս . ընթ-

ընկէ աւելի խորհելու բունն փափաքը կ'արթննայ իմ մէջ. աննպատակ վախ մը կ'ըզամ: Սպարտա դաշար պսակ մը պիտի հիւսէր իր արի զաւկին պայծառ ճակատին շուրջ, որ գիտցաւ ցեղին պատիւը փրկել. իսկ հոս, տասնչնինդ տարուան տանջանքը եղբայրանալ կուգայ հոյն արի զաւկին հետ, Կէրմիլյաններու աստեղափայլերկինքին քակ...

Էզանի աղուոր ելևէջները, խուցիս ճիշտ դէմը բարձրացած արօթարանէն լսուող, կը կենդանացնեն տրամադրութիւններս ու խորհուրդիս թափը կ'ուժեղանայ: Երբեք կրօնը այդքան հրաշալի խորհրդաւորութիւնով պատմութեանուած չէ. երբեք կրօնը այդքան անէպոստոսացած չէ հաւատաւորը, ու զայն անճատելի սնըջանքին տարած...

— Ալլահ ու էքպէր, Ալլահ ու էքպէր, Ալլահ... մարդասպանին փրկութեանը համար արատաւանուած: Ու հզօր է Կէրմիլյաններու Աստուածը...